



fidh

CEE Bankwatch  
Network



ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՄՈՒԼՍԱՐ. ՄԱՐԴՈՒ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ  
ԽԱԽՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԲՆԱԴԱՅԴՊԱՆԱԿԱՆ  
ԱՆՓՈՒԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՍԿՈՒ  
ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒՄ



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Ամփոփագիր</b>	5
<b>Ներածություն</b>	9
<b>Գլուխ 1</b> Հայկական համատեքստը. հեղափոխությունից մինչև հակամարտություն	10
<b>Գլուխ 2</b> Հանքարդյունաբերության զարգացումը Հայաստանում. քաղաքականության և կառավարման բացերը	12
<b>Գլուխ 3</b> Ամուլսարի ոսկու հանքը	16
<i>Ժամանակագրություն</i>	17
3.1. Բազմակողմ զարգացման բանկերի ներդրումները Ամուլսարի ծրագրում	20
3.2. Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի հետ կապված ռիսկերը	21
3.2.1. Ամուլսարի ոսկու հանքի բնապահպանական ռիսկերը	21
<i>Ջրային ռեսուրսներին սպառնացող վտանգները</i>	22
<i>Սպառնալիքներն ու ազդեցությունը կենսաբազմազանության վրա</i>	22
3.2.2. Մարդկանց իրավունքների վրա ազդեցությունները և ռիսկերը	23
3.2.3. Ամուլսարի ծրագրի հետ կապված կոռուպցիոն ռիսկերը	25
<i>Գնդեվազի հողերի օտարումը</i>	26
<b>Գլուխ 4</b> Ամուլսարը՝ որպես փորձություն Հայաստանի ժողովրդավարության համար	27
<i>Ամուլսարի ծրագրի ՇՄԱԳ-ի փորձաքննությունը Էլարդի կողմից</i>	28
<i>Ամուլսարի վերաբերյալ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի բացահայտումները</i>	29
<i>Դիվանագիտական շրջանակների և ներդրողների ճնշումը,</i>	30
<i>Վերջին զարգացումները</i>	31
<b>Գլուխ 5</b> Մարդու իրավունքները և Ամուլսարի ոսկու հանքի վերաբերյալ որոշումների կայացման իրավական դաշտը	33
5.1. Հայաստանը և մարդու իրավունքների միջազգային պայմանագրերը	34
5.2. Բիզնեսի և մարդու իրավունքների միջազգային շրջանակը	34
<i>Մարդու իրավունքները պաշտպանելու պետության երկակի պարտավորությունը</i>	35
<i>Մարդու իրավունքների հանդեպ հարգանքը բիզնեսի կողմից</i>	35
5.3. Միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները	36
<i>Կյանքի իրավունք</i>	36
<i>Առողջության իրավունք</i>	36
<i>Ջրի իրավունք</i>	37
<i>Առողջ միջավայրի իրավունք</i>	37
<i>Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ</i>	37
<i>Խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների հարցերով հատուկ զեկուցողը Հայաստանում, 2019 թվական մայիս</i>	38

5.4. Մարդու իրավունքների և շրջակա միջավայրի պաշտպանները	39
<i>Լիդիանի` հանրային մասնակցության դեմ ռազմավարական դատավարությունը և մարդու իրավունքների պաշտպանների դեմ գրպարտչական արշավները</i>	40
5.5. Բնապահպանական ընթացակարգային իրավունքները. տեղեկատվության հասանելիությունը, հանրային մասնակցությունը որոշումների կայացմանը և շրջակա միջավայրի հարցերով արդարադատության մատչելիությունը	41
<i>Օրիուսի կոնվենցիան</i>	42
<i>Շրջակա միջավայրի հարցերով որոշումների կայացմանը մասնակցելու և արդարադատության մատչելիության իրավունքի խախտումները Հայաստանում</i>	42
<i>Նախազգուշության սկզբունքը</i>	44
5.6. Հայաստանում հանքարդյունաբերության գործունեության ազգային օրենսդրությունը և կարգավորումը	44
<i>Օրենքի գերակայությունը, կոռուպցիան և հանքարդյունաբերության ոլորտը Հայաստանում</i>	46
5.7. ՄՖԿ-ի և ՎՉԵԲ-ի բնապահպանական և սոցիալական երաշխիքները	46
<i>ՄՖԿ-ի և ՎՉԵԲ-ի երաշխիքների քաղաքականությանն անհամապատասխանությունը</i>	48
<b>Եզրակացություն</b>	<b>50</b>
<b>Առաջարկություններ</b>	<b>52</b>

# ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ամբողջ աշխարհում արդյունահանող ծրագրերի զարգացումը որակվել է ինչպես որպես օրինություն, այդպես էլ որպես անեծք: Մի կողմից, հանքարդյունաբերությունը պարբերաբար գովաբանվում է որպես տնտեսական զարգացման կարևոր շարժիչ ուժ<sup>1</sup>: Մյուս կողմից, ցույց է տրվել, որ հանքարդյունաբերության տնտեսական օգուտները հաճախ չեն հասնում դրանց անմիջական ազդակիր համայնքներին<sup>2</sup>, որոնք, փոխարենը, տուժում են աճող անհավասարությունից<sup>3</sup>, շրջակա միջավայրի աղտոտվածությունից, առողջապահական ռիսկերից, հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների վրա ճնշումից և երկարաժամկետ կայուն զարգացման համար տնտեսական ներուժի սպառումից<sup>4</sup>: Ավելին, թանկարժեք բնական ռեսուրսների արդյունահանումը հաճախ հակամարտությունների հրահրման, սրման կամ պահպանման գործոն է եղել ամբողջ աշխարհում<sup>5</sup>:

Թեև Հայաստանը հարուստ է հանքային ռեսուրսներով, հանքարդյունաբերության ոլորտի իմիջը երկրում արատավորվել է բնական ռեսուրսների ոչ թափանցիկ կառավարման տասնամյա պատմությամբ և շրջակա միջավայրի աղտոտվածության ու առողջապահական ռիսկերի ժառանգությամբ: Սա քննարկվում է 2-րդ գլխում, որտեղ զեկույցը նկարագրում է հայաստանյան համատեքստը, և 3-րդ գլխում, որտեղ ուսումնասիրվում են երկրում հանքարդյունաբերության ոլորտի զարգացման մարտահրավերները:

Գլուխ 4-ը նվիրված է Ամուլսարի ոսկու հանքի ծրագրին, դրա սեփականատեր Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդին, և դրա առաջխաղացողներին ու ֆինանսավորողներին, որոնց թվում են երկու բազմակողմ զարգացման բանկեր (ԲԶԲ)՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) և Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ), ինչպես նաև ծրագրի հետ կապված բնապահպանական, սոցիալական, տնտեսական, մարդու իրավունքների և կոռուպցիոն ռիսկերին: 2022 թվականի սկզբին Հայաստանի կառավարությունը պատրաստակամություն դրսևորեց կանաչ լույս տալ Ամուլսարի ծրագրի վերագործարկմանը, ինչը ինչպես տնտեսական պատճառների, այդպես էլ ներդրողների կողմից լուրջ ճնշումների հետևանք էր: Այնուամենայնիվ, մինչ օրս ծրագիրը սառեցված է և ներքաշված է բազմաթիվ դատական գործընթացներում:

Գլուխ 5-ը ներկայացնում է իրավական և հաշվետվողականության շրջանակներ Ամուլսարի հետ կապված շրջակա միջավայրի վրա ազդեցության և մարդու իրավունքների խախտումների մասին այնպիսի վերլուծության համար, ինչպես նաև այդ այնպիսիները հաստատող ապացույցներ: Այն հիշեցնում է, որ Հայաստանը պարտավոր է հարգել, պաշտպանել և իրականացնել մարդու իրավունքները՝ ապահովելով, որ Հայաստանում ապրող մարդիկ առավելագույնս օգտվեն դրանցից, մինչդեռ Լիդիանը պետք է հարգի մարդու իրավունքները և խուսափի խախտումներից՝ ազդեցության պատշաճ գնահատման և կառավարման միջոցով: Ծրագրի ներդրողները պարտավոր են իրականացնել ծրագրերի համապատասխան գնահատում՝ ապահովելու, որ պետությունները և ձեռնարկությունները ծրագրեր մշակելիս առաջնորդվեն ազգային և միջազգային իրավունքով նախատեսված վերոնշյալ պարտավորություններով:

Զեկույցը եզրակացնում է, որ կան բազմաթիվ ապացույցներ, որոնք փաստում են Ամուլսարի ոսկու հանքի շահագործման ընթացքում իրավունքների լայն շրջանակի լուրջ խախտումների մասին՝ սկսած բովանդակային և ընթացակարգային բնապահպանական իրավունքներից մինչև ազդակիր անհատների և համայնքների սոցիալական, տնտեսական և քաղաքական իրավունքները: Ավելին, կան արդարադատության և պաշտպանության միջոցների զգալի խոչընդոտների օրինակներ իրավա-

1. ICMM, 2020, Role of Mining in National Economies Mining Contribution Index (5th edition), International Council on Mining and Metals, URL (last accessed on 16 June 2022): <https://www.icmm.com/en-gb/research/social-performance/2020/role-of-mining-in-national-economies>

2. Söderholm, P., Svahn, N., 2015, Mining, regional development and benefit-sharing in developed countries, Resources Policy, Vol. 45, pp. 78-91, URL (last accessed on 28 January 2022): [https://econpapers.repec.org/article/eeeejrpoli/v\\_3a45\\_3ay\\_3a2015\\_3ai\\_3ac\\_3ap\\_3a78-91.htm](https://econpapers.repec.org/article/eeeejrpoli/v_3a45_3ay_3a2015_3ai_3ac_3ap_3a78-91.htm)

3. Carvalho, F., 2017, Mining industry and sustainable development: time for change, Food and Energy Security, Vol. 6/2, pp. 61-77, URL (last accessed on 28 January 2022): <https://onlinelibrary.wiley.com/doi/full/10.1002/fes3.109>

4. OECD, 2019, Enhancing Wellbeing in Mining Regions: Key Issues and Lessons For Developing Indicators, URL (last accessed on 28 January 2022): [https://www.oecd.org/cfe/regionaldevelopment/Wellbeing\\_MiningRegions\\_3rdOECDMeeting\\_PreConference.pdf](https://www.oecd.org/cfe/regionaldevelopment/Wellbeing_MiningRegions_3rdOECDMeeting_PreConference.pdf)

5. United Nations Interagency Framework Team for Preventive Action, 2012, Extractive Industries and Conflict. Toolkit and Guidance for Preventing and Managing Land and Natural Resources Conflict, URL (last accessed on 28 January 2022): [https://www.un.org/en/land-natural-resources-conflict/pdfs/GN\\_Extractive.pdf](https://www.un.org/en/land-natural-resources-conflict/pdfs/GN_Extractive.pdf)

տերերի համար, որոնց՝ դատական և ոչ դատական մեխանիզմների միջոցով, փոխհատուցում ստանալու ջանքերը մինչ այժմ բախվել են անհաջողության:

Հստակ ապացույցներ կան, որ Հայաստանը բազմիցս խախտել է միջազգային իրավունքով ստանձնած իր պարտավորությունները՝ պաշտպանելու առողջության և առողջ միջավայրի, խաղաղ հավաքների, խոսքի, տեղեկատվության ազատության, որոշումների կայացմանը մասնակցելու և արդարադատության մատչելիության մարդու իրավունքները: Թեև մարդու իրավունքների այս խախտումների մեծ մասը պետության կողմից կատարվել է մինչև 2018 թվականի թավշյա հեղափոխությունը, ցավոք, վարչապետ Նիկոլ Փաշինյանի նոր կառավարությունը վճռական քայլեր չի ձեռնարկել ինչպես իրավապաշտպանների և տեղական համայնքների բնակիչների իրավունքների պաշտպանության, այդպես էլ անցյալի խախտումները շտկելու ուղղությամբ:

Այս կապակցությամբ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով հատուկ զեկուցողների և Օրիուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի զեկույցները կոչ են արել Հայաստանին ապահովել Ամուլսարի ծրագրի վերաբերյալ բովանդակալից խորհրդակցություններ: Բացի այդ, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 2020 թվականի Հայաստանի վերաբերյալ զեկույցը Հայաստանին առաջարկություններ է ներկայացրել քաղաքացիական և քաղաքական իրավունքների և հակակոռուպցիոն միջոցառումների վերաբերյալ՝ պահանջելով, որ պետությունը «մանրամասն տեղեկատվություն տրամադրի Ամուլսարի ոսկու հանքի հետ կապված կոռուպցիոն մեղադրանքների վերաբերյալ»:

Լիդիանը և Ամուլսարի ծրագրի ներդրողները, ինչպիսիք են ՎՉԵԲ-ը և ՄՖԿ-ն, պարտավորություններ ունեն՝ հարգելու մարդու իրավունքները Մարդու իրավունքների վրա բիզնեսի ազդեցության մասին ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքներին և սեփական քաղաքականություններին համապատասխան: Այս պարտավորությունները չեն պահպանվել: Լիդիանը ակտիվորեն մերժել է հայաստանցիների՝ որոշումների կայացմանը մասնակցելու, ազատ խոսքի և Ամուլսարի ծրագրի դեմ խաղաղ ցույցերի իրավունքը: Ընկերությունը Հայաստանում աննախադեպ իրավական հետապնդումներ է նախաձեռնել տեղական համայնքների, քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների իր քննադատների դեմ՝ նպատակ ունենալով լռեցնել նրանց և սպառել սեփական իրավունքները պաշտպանելու նրանց ռեսուրսը:

ՎՉԵԲ-ը պնդում է, որ Ամուլսարի հանքավայրի շահագործմանն ուղղված իր ներդրումները նախատեսված են եղել բնապահպանական և սոցիալական միջոցառումների համար: Այս միջոցառումները ձախողվել են, քանի որ բանկը անտեսել է հայ փորձագետների և ազդակիր մարդկանց բողոքները: 2014 թվականին բանկի Ծրագրերի հետ կապված բողոքների քննության մեխանիզմը (ԾԲՔՄ) մերժել է Ամուլսարի ծրագրի վերաբերյալ տեղի բնակչության և բնապահպանական խմբերի երկու բողոքները: 2020 թվականին ՎՉԵԲ-ի բարեփոխված բողոքների մեխանիզմը, որը ստացել է Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ) անվանումը, սկսել է համապատասխանության ապահովման գնահատում, որը դեռևս ընթացքի փուլում է:

Քանի որ Լիդիան Ինթերնեյշնլը լուծարվել է 2021 թվականին, բանկը կորցրել է ծրագրի իր բաժնետոմսերը՝ չստանձնելով, սակայն, որևէ պատասխանատվություն ծրագրի ազդեցության համար, ինչը ևս մեկ օրինակ է «անպատասխանատու ելքի»: Չնայած մարդուն և բնությանը հասցված վնասը կանխելու հարցում առանցքային դեր ունենալուն՝ զարգացման բանկը հրաժարվել է վնասի փոխհատուցման միջոցներ տրամադրելուց, ինչը հանդիսանում է Մարդու իրավունքների վրա բիզնեսի ազդեցության մասին ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքների և սեփական քաղաքականությունների լուրջ խախտում:

Արդյունքում, Հայաստանի իշխանությունները, Լիդիանը և Ամուլսարի ծրագրում միջազգային ներդրողները դեռ պետք է լուծեն Ամուլսարի ծրագրի վերաբերյալ առկա հակասությունները, տրամադրեն փոխհատուցում և ապահովեն այս հարցում թափանցիկ և մասնակցային որոշումների կայացումը: Այդ նպատակով զեկույցը առաջարկություններ է հղում Հայաստանի կառավարությանը, ՎՉԵԲ-ին, ՄՖԿ-ին և Լիդիան Արմենիային, մասնավորապես.

1. Հայաստանը պետք է պաշտպանի տեղական համայնքների, շրջակա միջավայրի և մարդու իրավունքների պաշտպանների իրավունքները՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքով ստանձնած պարտավորություններին համապատասխան:

#### Այսպիսով, Հայաստանին՝

- չեղյալ համարել Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի բոլոր առկա թույլտվությունները.
- անհապաղ քայլեր ձեռնարկել ՄԱԿ-ի մարդու իրավունքների մարմինների և հատուկ ընթացակարգերի, ՄԱԿ-ի ԵՏՀ Օրիուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի և Կենսաբազմազանության պաշտպանության Բեռնի կոնվենցիայի բյուրոյի կողմից հրապարակված առաջարկություններին անդրադառնալու համար.
- նախաձեռնել Ամուլսարի ոսկու հանքի ծախսերի և օգուտների անկախ փորձագիտական գնահատում՝ մանրակրկիտ ուսումնասիրելով տնտեսական, սոցիալական, առողջապահական և

բնապահպանական գործոնները, այնուհետև հաշվի առնել այս գնահատումը՝ ապահովելու համար, որ բացասական ազդեցությունները պատշաճ կերպով բացահայտվեն և կանխվեն, և որ տեղական բնակչությունը և համայնքները կարողանան ուղղակիորեն օգուտ քաղել ծրագրից, եթե այն ի վերջո իրականացվի.

- վերանայել բնապահպանական և հանքարդյունաբերության օրենսդրությունը՝ ապահովելու հանքարդյունաբերության ոլորտի ժողովրդավարական և խելամիտ կառավարում, ընդունել կանոնակարգեր և բարձրացնել ինստիտուցիոնալ կարողությունները՝ պատշաճ գնահատելու հանքարդյունաբերության սոցիալական և առողջապահական ազդեցությունները.

- ամրապնդել ինստիտուցիոնալ կարողությունները՝ կիրառելու և վերահսկելու օրենսդրության նկատմամբ հարգանքը, բարելավել տեղեկատվության և մասնակցության հասանելիությունը, հստակեցնել ծախսերի և օգուտների գնահատումներ իրականացնելու մեթոդաբանությունը, պարզեցնել ազդեցությունների կուտակային գնահատումների անցկացման ընթացակարգը և իրականացնել հանքարդյունաբերությանը առնչվող հակակոռուպցիոն կայուն քաղաքականություն և գործընթացներ.

- պաշտպանել շրջակա միջավայրի և մարդու իրավունքների պաշտպաններին, մասնավորապես, Հանրային մասնակցության դեմ ռազմավարական դատավարության հայցերից (SLAPP) և Լիդիանի կամ այլ դերակատարների պատասխան գործողություններից: SLAPP հայցերի դեմ գործող օրենսդրությունը պետք է պարունակի երեք հիմնական տարր՝ (1) SLAPP հայցերի դեմ ընթացակարգային երաշխիքներ, (2) SLAPP հայցերի կանխարգելման և դրանց դեմ իրազեկվածության բարձրացման միջոցառումներ և (3) SLAPP հայցերի թիրախներին պաշտպանակող և աջակցող միջոցառումներ: Ամենակարևոր դատավարական երաշխիքը, որը պետք է ներդրվի, դատավորների համար SLAPP հայցերը կարծելու հնարավորությունն է վարույթի վաղ փուլերում այն գործերի համար, որոնք ակնհայտորեն անհիմն են և ուղղված են ամբաստանյալի կողմից հանրային մասնակցության իրենց իրավունքի կանխարգելմանը՝ կիրառելով լայն սահմանում այն մասին, թե ինչ է իրենից ներկայացնում հանրային մասնակցությունը: SLAPP հայցերի թիրախներին պաշտպանող և աջակցող միջոցառումները պետք է ներառեն ֆինանսական աջակցություն իրավական ծախսերը ծածկելու համար, ինչպես նաև հուզական և հոգեբանական ռիսկերի դեմ աջակցության ծառայությունների հասանելիություն և հետագա ահաբեկումներից և վրեժխնդրությունից պաշտպանություն:

- բարելավել Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) ազդեցությունը համայնքային մակարդակում խթանելով տեղական համայնքների մասնակցությունը բնական ռեսուրսների կառավարմանը.

- ապահովել ծրագրի նախորդ փուլերում տեղական համայնքների, մարդու իրավունքների և շրջակա միջավայրի պաշտպանների վրա հանքի առաջացրած բացասական ազդեցությունների պատշաճ փոխհատուցում.

- իրականացնել անկախ և թափանցիկ հետաքննություն Գնդեվազում հողերի օտարման հետ կապված կոռուպցիայի վերաբերյալ:

## 2. ՎՁԵԲ-ին և ՄՖԿ-ին՝

- աջակցել Հայաստանի կառավարությանը վերը նշված քայլերի իրականացման գործում և

- թարմացնել շրջակա միջավայրի և մարդու իրավունքների պատշաճ ուսումնասիրության իրենց մոտեցումը՝ հաշվի առնելով բանկերի հաշվետվողականության մեխանիզմների ակնկալվող բացահայտումները և առաջարկությունները.

- մշակել մարդու իրավունքների և շրջակա միջավայրի պատշաճ ուսումնասիրության քաղաքականություն ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքներին համապատասխանելու համար.

- ընդունել և լուծել ծրագրի ազդակիր անձանց և իրավապաշտպանների մասնակցության և արդյունավետ փոխհատուցման համար առկա բացերն ու խոչընդոտները, և ներգրավել համայնքներին և շահագրգիռ կողմերին տեղեկացված և բովանդակալից խորհրդակցությունների.

- մշակել հստակ քաղաքականություններ և ուղեցույցներ մարդու իրավունքների պատշաճ ուսումնասիրության վերաբերյալ՝ ապահովելով բանկի կողմից կամ բանկի հանձնարարությամբ մարդու իրավունքների ռիսկերի մանրակրկիտ վերլուծություն նախքան ծրագրի ռիսկերի դասակարգումը. հանրությանը հասանելի դարձնել մեթոդաբանություններն ու եզրակացությունները յուրաքանչյուր ծրագրի համար. ապահովել ազդեցությունների պատշաճ գնահատում մարդու իրավունքների ազդեցության գնահատման (ՄԻԱԳ) կամ այլ համատեքստային վերլուծությունների միջոցով, եթե հայտնաբերվում են ռիսկեր. իրապարակայնացնել այս լրացուցիչ գնահատումները.

- ապահովել հանրային բովանդակալից մասնակցություն, որը կլինի ժամանակին իրականացվող, երկկողմանի գործընթաց՝ թափանցիկ, մատչելի և անվտանգ բոլոր իրավատերերի համար. ապահովել պատշաճ ընթացակարգերի առկայություն և իրականացնել կանոնավոր կարողությունների

զարգացում և ընթացակարգերի գնահատումներ՝ երաշխավորելով, որ դրանք թույլ են տալիս հանրության անվտանգ և բովանդակալից մասնակցությունը: Բանկերը պետք է նաև մշակեն ավելի հստակ ուղեցույցներ, որոնք կարտացոլեն հաշվեհարդարների նկատմամբ գրոյական հանդուրժողականության քաղաքականությունը:

- Լիդիանի հետ միասին տրամադրել փոխհատուցում Ամուլսարի ծրագրի՝ տեղական համայնքների, իրավապաշտպանների և շրջակա միջավայրի վրա նախորդ փուլերում բացասական ազդեցությունների համար

### 3. Լիդիան Արմենիային՝

- հետ կանգնել շրջակա միջավայրի և մարդու իրավունքների պաշտպանների դեմ ուղղված բոլոր իրավական գործողություններից և խուսափել իրավապաշտպանների խարանումից անտագոնիստական հռետորաբանության կամ պաշտպանների գործունեությունը վարկաբեկելու նպատակով ապատեղեկատվության տարածման միջոցով.

- անհապաղ քայլեր ձեռնարկել մարդու բոլոր իրավունքների և շրջակա միջավայրի հանդեպ հարգանքը երաշխավորելու համար և պահպանել Մարդու իրավունքների վրա բիզնեսի ազդեցության մասին ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքները.

- անհապաղ փոխհատուցել տեղական համայնքների, իրավապաշտպանների և շրջակա միջավայրի վրա ծրագրի նախորդ փուլերում հասցրած բացասական ազդեցության վնասը:



# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չեկույցի նպատակն է լույս սփռել Հայաստանում մարդու իրավունքների վրա հանքարդյունաբերության ազդեցության խնդրին Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի ուսումնասիրության միջոցով: Չեկույցի արդյունքում մշակվել են առաջարկություններ իշխանություններին, որոնք գործում են արմատական քաղաքական փոփոխությունների, հակամարտությունների և հանքարդյունաբերության աշխատանքները վերսկսելու ուժեղ ճնշման համատեքստում: Չեկույցը Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի ( FIDH), նրա հայաստանյան անդամ Քաղաքացիական հասարակության ինստիտուտի (ԶՀԻ) և CEE Bankwatch Network միջազգային ցանցի համագործակցության արդյունքն է: Չեկույցը հիմնված է իրավիճակի շարունակական մշտադիտարկման վրա՝ համատեղելով երկրորդային և դաշտային հետազոտություններ: Այն ներառում է 2019 թվականի ապրիլին FIDH-ի և ԶՀԻ-ի կողմից իրականացված դաշտային առաքելությունը Ամուլսարի տարածքում և մոտակա համայնքներում, որտեղ նախնական հարցազրույցներ են անցկացվել ազդակիր անձանց և այլ շահագրգիռ կողմերի հետ:<sup>6</sup> Bankwatch-ը 2011 թվականից մշտադիտարկում է Ամուլսարի ծրագիրը և իրականացրել է կանոնավոր դաշտային առաքելություններ, որոնցից վերջինը՝ 2020 թվականի մարտին:

Այդ ժամանակից ի վեր մեր կազմակերպությունները շարունակել են հետևել երկրում Ամուլսարի ծրագրի հետ կապված իրավիճակին և մի քանի ահազանգեր են հնչեցրել, մասնավորապես, այն ռիսկերի վերաբերյալ, որոնց բախվում են այդ հարցով զբաղվող մարդու իրավունքների և շրջակա միջավայրի պաշտպանները: Այս ավելի համապարփակ հրապարակմամբ մենք ցանկանում ենք առավել լայն անդրադառնալ այն սոցիալական և բնապահպանական ազդեցություններին, որոնք թողել է Ամուլսարի ծրագիրը Հայաստանում, ինչպես նաև դրանցում ներգրավված պետական և մասնավոր դերակատարների, մասնավորապես ներդրողների դերին ու պարտականություններին: Այս վերլուծությամբ մենք հուսով ենք նպաստել Ամուլսարի ոսկու հանքի ապագայի վերաբերյալ երկրում ծավալվող հանրային ներկայիս բանավեճին՝ հատկապես հաշվի առնելով համաճարակի և Ադրբեջանի հետ պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա:

6. FIDH-ի և ԶՀԻ-ի համատեղ փաստահավաք առաքելությունը տեղի է ունեցել 2019 թվականի ապրիլին: Պատվիրակությունը հարցազրույց է վերցրել Ամուլսարի ծրագրի ազդակիր անձանց հետ և հանդիպել համապատասխան պետական հաստատությունների և տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ: Առաքելության ընթացքում հավաքագրված տվյալները և Ամուլսարի հանքի վերաբերյալ հանրային տեղեկատվության երկրորդային հետազոտությունը նպաստել են զեկույցի պատրաստմանը:



Վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցը Ամուլսար, 2020 © CEE Bankwatch Network

## ԳԼՈՒԽ 1

# Հայկական համատեքստը. հեղափոխությունից մինչև հակամարտություն

Հայաստանի Հանրապետությունը երկիր է Արևելյան Եվրոպայում՝ Հարավային Կովկասի տարածաշրջանում, սահմանակից է Վրաստանին, Ադրբեջանին, Իրանին և Թուրքիային: Երկրի լանդշաֆտը հիմնականում լեռնային է, դրա 76,5 տոկոսը գտնվում է ծովի մակարդակից 1000-2500 մետր բարձրության վրա:<sup>7</sup> 2019 թվականին Հայաստանն ունեցել է մոտավորապես երեք միլիոն բնակչություն, իսկ երկրի ՀՆԱ-ն կազմել է 13,6 միլիարդ ԱՄՆ դոլար<sup>8</sup>:

7. Ministry of Nature Protection of the Republic of Armenia, *Third National Communication on Climate Change under the United Nations' Framework Convention on Climate Change*, URL (last checked on 23 Dec. 2021): <https://unfccc.int/sites/default/files/resource/armnc3.pdf>

8. World Bank, 2020, DataBank – World Development Indicators, URL: <https://databank.worldbank.org/source/world-development-indicators>

Համաշխարհային բանկի և Ասիական զարգացման բանկի<sup>9</sup> կողմից 2021 թվականի նկարագրության համաձայն՝ վերջին տասնամյակում Հայաստանը գերակա արդյունաբերության տնտեսությունից անցել է գերակա ծառայությունների տնտեսության: 2016 թվականին ծառայությունների ոլորտը կազմել է երկրում աշխատուժի 48,8 տոկոսը և ապահովել ՀՆԱ-ի 55 տոկոսը, երկրորդ հորիզոնականը զբաղեցրել է գյուղատնտեսությունը՝ աշխատաշուկայում 35,3 տոկոս մասնաբաժինով և ՀՆԱ-ի 17 տոկոսով: 2016 թվականին 18 տոկոս ցուցանիշով գործազրկությունը մնացել է համեմատաբար բարձր, իսկ աղքատությունը 2018 թվականին ազդել է բնակչության շուրջ 29 տոկոսի վրա<sup>10</sup>:

2018 թվականին քաղաքացիական հասարակության և քաղաքական ընդդիմության լայնածավալ բողոքի ցույցերը, որոնք ստացել են Հայաստանի «Թավշյա հեղափոխություն» անվանումը, տապալեցին Սերժ Սարգսյանի կառավարությունը, որի կուսակցությունը երկիրը ղեկավարում էր 1999 թվականից<sup>11</sup>: Բողոքի ցույցերը գլխավորում էր պատգամավոր, ընդդիմադիր առաջնորդ Նիկոլ Փաշինյանը, որի «Իմ քայլը» դաշինքը և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հաղթեցին 2018 թվականի դեկտեմբերի և կրկին 2021 թվականի հունիսի խորհրդարանական ընտրություններում: Նոր կառավարությունը նախաձեռնեց հավակնոտ քաղաքական, տնտեսական և դատաիրավական բարեփոխումներ<sup>12</sup>, որոնց ընթացքը, սակայն խափանվեց, այդ թվում՝ COVID-19 համաճարակի և 2020 թվականի աշնանը բռնկված 44-օրյա պատերազմի՝ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ Ադրբեյջանի հետ զինված հակամարտության պատճառով<sup>13</sup>:

Հակամարտությունը հանգեցրեց ռազմական պարտության և Հայաստանի համար մարդկային, բարոյական, տարածքային և տնտեսական կորուստների<sup>14</sup>: Ձեռք բերած տարածքներով Ադրբեյջանը ստացավ նաև թանկարժեք ջրային և հանքային պաշարներ: Հատկանշական է, որ 2020 թվականի նոյեմբերի խաղաղության համաձայնագրի արդյունքում Ադրբեյջանը վերահսկողության տակ վերցրեց Զեյրաջարի շրջանը, որտեղ գտնվում են մի քանի հանքեր, այդ թվում՝ Սոթքի՝ Հայաստանի ամենաարդյունավետ ոսկու հանքավայրը<sup>15</sup>: Հայաստանի սահմանների վերագծմամբ բաց են մնում մի շարք հարցեր խաղաղության կառուցման գործընթացի ապագայի, անվտանգության կայուն ռիսկերի (հատկապես սահմանամերձ շրջաններում), երկրի և տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ<sup>16</sup>: Երկրի համար զգալի ռազմավարական նշանակություն են ձեռք բերել նաև հանքերի սեփականության և շահագործման հետ կապված հարցերը:

9. World Bank, Asian Development Bank, 2021, *Climate Risk Country Profile: Armenia*, URL (last checked on 7 January 2022): [https://climateknowledgeportal.worldbank.org/sites/default/files/2021-06/15765-WB\\_Armenia%20Country%20Profile-WEB.pdf](https://climateknowledgeportal.worldbank.org/sites/default/files/2021-06/15765-WB_Armenia%20Country%20Profile-WEB.pdf)

10. *Ibid.*

11. Lansky, M., Suthers, E., 02/04/2019, Armenia's Velvet Revolution, *Journal of Democracy*, vol. 30, issue 2, pp. 85-99, URL (last visited on 22 February 2022): <https://www.journalofdemocracy.org/articles/armenias-velvet-revolution/>

12. Sammut, D., 02/06/2020, Armenia Commentary: Two years after the Velvet Revolution, Armenia needs the EU more than ever, European Policy Centre, URL (last checked on 23 December 2021): <https://www.epc.eu/en/Publications/Two-years-after-the-Velvet-Revolution-Armenia-needs-the-EU-more-than-33e910>

13. FIDH, 29/10/2020, Nagorno-Karabakh: FIDH Calls for Respect of Ceasefire, Denounces Use of Mercenaries, URL (last checked on 15 April 2022): <https://www.fidh.org/en/region/europe-central-asia/azerbaijan/nagorno-karabakh-fidh-calls-for-respect-of-ceasefire-denounces-use-of>

14. Associated Press in Yerevan, 05/12/2020, Armenian protesters demand prime minister quit over deal with Nagorno-Karabakh, *The Guardian*, URL (last checked on 20 May 2022): <https://www.theguardian.com/world/2020/dec/05/armenian-protesters-demand-prime-minister-quit-over-deal-with-nagorno-karabakh>

15. Mejlumyan, A., Natiqzizi, U., 27/01/2021, Following war with Armenia, Azerbaijan gains control of lucrative gold mines, *Eurasianet*, URL (last checked on 7 January 2021): <https://eurasianet.org/following-war-with-armenia-azerbaijan-gains-control-of-lucrative-gold-mines>

16. De Waal, T., 11/02/2021, Unfinished Business in the Armenia-Azerbaijan Conflict, Carnegie Europe, URL (last checked on 7 January 2021): <https://carnegieeurope.eu/2021/02/11/unfinished-business-in-armenia-azerbaijan-conflict-pub-83844>



Քարևան Ձեմուկ քաղաքը © Narek Aleksanyan

## ԳԼՈՒԽ 2

# Ջանքարդյունաբերության զարգացումը Ջայաստանում. քաղաքականության և կառավարման բացերը

Ջայաստանն օժտված է զգալի հանքային հարստությամբ: Պաշտոնական տվյալներով,<sup>17</sup> օգտակար հանածոների պետական գույքագրման մեջ թվարկված են պինդ հանքային պաշարներով ավելի քան 670 հանքավայրեր, որոնցից 30-ը մետաղական են: Շահագործվում է այդ հանքերից մոտ 400-ը, որոնցից 22-ն արդյունահանում են մետաղներ, այդ թվում՝ պղինձ-մոլիբդեն (յոթ հանք), պղինձ (չորս), ոսկի և ոսկի-բազմամետաղ (14 հանք), բազմամետաղ (երկու), երկաթի հանքաքար (երկու) և այլումին (մեկ հանք):

17. Ministry of Energy Infrastructure and Natural Resources of the Republic of Armenia, General Information section of website, URL (last checked 23 December 2021): <http://www.minenergy.am/en/page/472?fbclid=IwAR27zPYoXa0MBj8f2rPPP2tuk5Yqvz-DDojQlutQBfisb5cbPdqRm39yCyc>

Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը նշում է, որ երկրի հանքարդյունաբերության ոլորտը «ազգային տնտեսության հիմնական ներդրողն է», քանի որ հանքաքարի խտանյութերն ու մետաղները կազմում են Հայաստանի արտահանման մտավորապես կեսը՝ ամրապնդելով դրանց կարգավիճակը իբրև երկրի «ամենակարևոր արտահանման արտադրանք»<sup>18</sup>: Այնուամենայնիվ, ըստ Հայաստանի վիճակագրական կոմիտեի՝ 2016 և 2017 թվականներին հանքարդյունաբերությունը կազմել է երկրի ՀՆԱ-ի մոտ 3 տոկոսը՝ համապատասխանաբար 130 և 177 միլիարդ դրամով<sup>19</sup>:

Հայաստանի հանքային հարստությունը շատերը երկրում համարում են անեծք՝ թերահավատ լինելով, որ արդյունահանող արդյունաբերությունը կարող է կայուն լինել և համատեղելի այլ ոլորտների հետ, ինչպիսիք են զբոսաշրջությունը և գյուղատնտեսությունը: Երկիրը հարուստ է բազմազան լանդշաֆտներով և Եկոհամակարգերով, հազվագյուտ բուսական և կենդանական աշխարհով և առատ ջրային ռեսուրսներով:<sup>20</sup> Պատմականորեն Հայաստանը տուժել է քրոնիկական կոռուպցիայից,<sup>21</sup> թույլ կառավարումից և բնական ռեսուրսների կառավարման ոլորտում քաղաքականության լայն բացերից<sup>22</sup> որոնք հանգեցրել են շրջակա միջավայրի լուրջ կորուստների,<sup>23</sup> աղտոտվածության ժառանգության<sup>24</sup> և բարձր խոցելիության կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի նկատմամբ<sup>25</sup>:

Որպես օրինակ, 2018 թվականին Հայաստանը 180 երկրների մեջ զբաղեցրել է 63-րդ տեղը բնապահպանական արդյունավետության ինդեքսով (ԲԱԻ): Երկիրը զբաղեցրել է 142-րդ տեղը՝ օդի որակի և 109-րդը՝ շրջակա միջավայրի առողջության հորիզոնականում (օդի որակի, ջրի և սանիտարական վիճակի և ծանր մետաղներով աղտոտվածության վրա միավորների հանրագումարով):<sup>26</sup> Չեկույցում նշվում է, որ «ԲԱԻ հետևողական դասերից մեկն այն է, որ կայունության նպատակներին հասնելը պահանջում է նյութական բարգավաճում մարդկանց առողջության և Եկոհամակարգերի պաշտպանության համար անհրաժեշտ ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելու համար»:

Բացի այդ, երկրին անհրաժեշտ են ամուր օրենսդրական և կարգավորող շրջանակներ՝ երաշխավորելու, որ հանքարդյունաբերությունը եկամուտներ և օգուտներ է բերում ազդակիր համայնքներին՝ չվտանգելով երկարաժամկետ բնապահպանական, սոցիալական և տնտեսական կայունությունը: Թեև Հայաստանի հանքարդյունաբերության մասին օրենքը նախատեսում է ոլորտի տարրական կարգավորում, փորձագետները պնդում են, որ «դրանում բացակայում են լավագույն փորձի որոշ հիմնական սկզբունքներ, որոնք վերաբերում են ռեսուրսների կառավարման՝ բնապահպանական, սոցիալական, հանրային առողջության, աշխատանքի անվտանգության և տնտեսական ասպեկտներին»:<sup>27</sup>

Հետևաբար, քաղաքացիական հասարակության մի շարք փորձագետներ, գիտնականներ և հաստատություններ, ներառյալ Համաշխարհային բանկը և Հայաստանում Ամերիկյան համալսարանը (ՀԱՀ), հանդես են եկել Հայաստանի հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման

18. *Ibid.*

19. Statistics Committee of Armenia, *Yearbook 2018*, p. 242, URL: <https://armstat.am/file/doc/99510948.pdf>

20. USAID, 2009, *Biodiversity Analysis Update for Armenia. Final Report. Prosperity, Livelihoods and Conserving Ecosystems*, URL (last checked on 7 January): [https://pdf.usaid.gov/pdf\\_docs/Pnadv442.pdf](https://pdf.usaid.gov/pdf_docs/Pnadv442.pdf)

21. Although marked improvements have been noted since 2018: Since 2018, Armenia has recorded significant progress in fighting corruption. Its *Corruption Perception Index* score increased by 14 points in 2019 and 2020, recording the best improvement worldwide. See Transparency International Corruption Perception Index, URL (last checked on 23 December 2021): <https://www.transparency.org/en/cpi/2020/index/arm>

22. Damianova, A. J.; Kreso Beslagic, E.; Rebosio Calderon, Michelle P.; Alaverdyan, A.; Kostanyan, T.; Gyulumyan, G.; Nairian, S. S.; Nguyen, L. V.; Kida, J. A., 2014, *First thematic paper: sustainable and strategic decision making in mining* (English). Armenia sector issues paper Washington, D.C.: World Bank Group. <https://documents.worldbank.org/en/publication/documents-reports/documentdetail/721881468005068851/first-thematic-paper-sustainable-and-strategic-decision-making-in-mining>

23. FAO, 13/09/2017, Armenia advances monitoring for sustainable forest management, URL (last seen on 7 January 2021): <https://www.fao.org/europe/news/detail-news/en/c/1036954/> and <https://unece.org/forests/forest-monitoring-caucasus-and-central-asia>

24. Babayan, G., Sakoyan, A. & Sahakyan, G., 2019, Drinking water quality and health risk analysis in the mining impact zone, Armenia, *Sustainable Water Resources Management Journal*, vol. 5, nr. 4, p. 1877-1886, URL (last checked on 7 January 2022): <https://doi.org/10.1007%2Fs40899-019-00333-2>

25. Tepanosyan, G., Sahakyan, L., Belyaeva, O., Asmaryan, S., Saghatelian, A., 2018, *Continuous impact of mining activities on soil heavy metals levels and human health*, *Sci Total Environ* 639:900–909

26. The Environmental Performance Index (EPI), developed by Yale University and Columbia University in collaboration with the World Economic Forum and the Joint Research Center of the European Commission, ranks 180 countries on 24 performance indicators across 10 issue categories covering environmental health and ecosystem vitality. These metrics provide a gauge on a national scale of how close countries are to meeting established environmental policy goals: [https://epi.envirocenter.yale.edu/epi-country-report/ARM?fbclid=IwAR1RXWDFIhCzlyz4E\\_9KNxVmPYApM4406CrTI3WV3iLozv\\_gmcimBDfVAlQ](https://epi.envirocenter.yale.edu/epi-country-report/ARM?fbclid=IwAR1RXWDFIhCzlyz4E_9KNxVmPYApM4406CrTI3WV3iLozv_gmcimBDfVAlQ)

27. Amirkhanian, A., Fall/Winter 2019, On Mining, Which Way in Armenia?, American Chamber of Commentary in Armenia (AMCHAM), URL (last seen on 7 January): <https://crm.aa.am/mlri/ra-legislation-gaps/>

օգտին<sup>28, 29</sup> մատնացույց անելով Հայաստանում օրենքների կիրարկման համար անհրաժեշտ երկրորդական օրենսդրության և ուղեցույցների բացակայությունը<sup>30</sup>: Այսպես, օրինակ՝ սահմանափակ են որոշում կայացնողների ինստիտուցիոնալ կարողություններն ու մեթոդաբանությունը՝ նախքան հանքարդյունաբերության լիցենզիաների տրամադրումը ծախս-օգուտ վերլուծություններ, ազդեցության կուտակային ազդեցության և առողջության վրա ազդեցության գնահատումներ իրականացնելու համար:<sup>31</sup>

Հայաստանը որոշակի գոհացուցիչ առաջընթաց է գրանցել հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության առումով 2017 թվականին ԱՃԹՆ-ին միանալուց հետո<sup>32</sup>: ԱՃԹՆ առցանց հաշվետվությունների հարթակի ստեղծումը հայաստանցիներին հասանելիություն է տվել հանքարդյունաբերության ոլորտի, հանքարդյունաբերության պայմանագրերի և հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալներին:<sup>33</sup> Ստեղծվել է բազմաշահառու խումբ ԱՃԹՆ չափորոշիչների ներդրման համար, որը որոշել է ընդլայնել իր լիազորությունները և բացի թափանցիկությունից աշխատել նաև պատասխանատու և կայուն հանքարդյունաբերության համար ոլորտային քաղաքականության նոր շրջանակ մշակելու ուղղությամբ:<sup>34</sup> Խումբը կազմված է կառավարության, արդյունաբերության ոլորտի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից՝ յուրաքանչյուր կողմի համար հավասար ձայնի իրավունքով: Խմբի շրջանակներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ներկայացրել են դաշտային հետազոտություններ, որոնք ցույց են տալիս հանքարդյունաբերության ազդեցության տակ գտնվող համայնքների տեղեկացվածության պակասը ընկերությունների սոցիալ-տնտեսական պարտավորությունների մասին:<sup>35</sup> Թեև քաղաքացիական հասարակության կազմակերպությունները փորձել են լրացնել հանրային մասնակցության բացը, տեղի բնակիչները զրկված են եղել արդյունահանող ընկերությունների հետ անմիջական երկխոսության հնարավորությունից<sup>36</sup>: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ընդգծում են համայնքային մակարդակում ԱՃԹՆ գործընթացի ազդեցությունը բարելավելու հնարավորությունները, որոնք կխթանեն տեղական համայնքների մասնակցությունը բնական պաշարների կառավարմանը:

Հանքարդյունաբերության ոլորտում օրենսդրական բարեփոխումները ընթանում են ավելի քան հինգ տարի: Այնուամենայնիվ, շրջակա միջավայրի աղտոտվածության վերը նշված ժառանգությունը և հարակից առողջական խնդիրները, զուգորդված Հայաստանում հանքարդյունաբերությունը պատշաճ կերպով կառավարելու և վերահսկելու ինստիտուցիոնալ կարողությունների նկատմամբ համատարած անվստահությամբ, առաջացրել են տեղական համայնքների և քաղաքացիական հասարակության դիմադրությունը երկրում նոր հանքավայրերի շահագործման հանդեպ: Ստորև բերված դեպքը դրա ցուցադրումն է:<sup>37</sup>

28. World Bank, 2016, *Armenia: Strategic Mineral Sector Sustainability Assessment*, URL (last checked on 7 January 2022): <https://documents1.worldbank.org/curated/en/289051468186845846/pdf/106237-WP-P155900-PUBLIC.pdf>

29. AUA's Center for Responsible Mining spin-off was registered as the Mining Legislation Reform Institute (MLRI). The MLRI collaborates with civil society, advocacy groups, academic institutions and relevant national and international organisations to introduce positive changes to the mining sector in Armenia. The MLRI works with key governmental and legislative bodies to ensure that draft responsible mining legislation is passed into law. See more info: <https://mlri.org.am/en/campaigns/mining-policy/>

30. *Ibid.*

31. Damianova, A. J. *et al.*, 2014, *op. cit.*, p. 9 and Vivoda, V., Fulcher, J., 2017, *Environmental and Social Impact Assessment*. Series on International Best Practice, Working Paper No. 4, Mining Legislation Reform Initiative, AUA Center for Responsible Mining, American University of Armenia, URL (last accessed on 31 January 2022): <https://espace.library.uq.edu.au/view/UQ:730293>

32. EITI, 17/08/20, Armenia: On a fast track to greater transparency, URL (last checked on 7 January 2022): <https://eiti.org/news/armenia-on-fast-track-to-greater-transparency>

33. Extractive Industries Transparency Initiative, Reports, URL (last checked 22 February, 2022): <https://reports.eiti.am/hy/>


34. World Bank, 2019, Armenia's Historic Vision for Responsible Mining. Feature Story, URL (last checked on 7 January 2022): <https://www.worldbank.org/en/news/feature/2019/06/19/armenias-historic-vision-for-responsible-mining>

35. Ecolur, 26/07/2021, Ecolur Deputy President: Data Published on EITI Website Promoted Detection of Problems, URL (last visited on 22 February 2022): <https://www.ecolur.org/en/news/mining/13340/>

36. *Ibid.*

37. See Ecolur, SOS, URL (last visited on 23 May 2022): <https://www.ecolur.org/en/news/sos/>

Գրաֆիկ. Հանքարդյունաբերության տեսակարար կշիռը Հայաստանի ՀՆԱ-ում 2010-2017 թթ



Աղբյուր: 2019 Armenia EITI report



Բեզդարյան այծ, գրանցված Է ԲՊՄՄ Կարմիր գրքում © Andrey Ralev, CEE Bankwatch Network

## ԳԼՈՒԽ 3

### Ամուլսարի ոսկու հանքը

Ամուլսարի ոսկու հանքավայրը հայտնաբերվել է 2006 թվականին Հայաստանի Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի սահմանին՝ մայրաքաղաք Երևանից 170 կմ հեռավորության վրա: 2007 թվականին հանքավայրի հետախուզումը մեկնարկեց Լիդիանը՝ մասնավոր հետախուզական ընկերություն, 96 բաժնետերով, որոնցից ամենամեծը Նյումոնտ Քորպորեյշնն էր՝ ընկերությունում 9,4 տոկոս բաժնեմասով:<sup>38</sup> Այն ժամանակ Նյումոնտը հայտնի էր Պերույի Յանակոչա պղնձի հանքում սնդիկի արտահոսքի հետևանքով աղետով և Գանայում ցիանիդի արտահոսքով, ի թիվս այլ խնդրահարույց ներդրումների ամբողջ աշխարհում:<sup>39, 40</sup>

Ակնկալվում էր, որ Ամուլսարի հանքավայրը կդառնա Հայաստանի՝ ոսկու և արծաթի ամենամեծ

38. IFC SPI, 22/05/2007, Summary of Project Investment: Lydian Resource Company Ltd, IFC Project Information and Data Portal, URL (last seen on 24 January 2022): <https://disclosures.ifc.org/project-detail/SPI/25924/lydian-resource-company-ltd>

39. Moeys, N., 02/04/2020, The village still suffering from Peru mercury spill fallout – after 20 years, *The Guardian*, URL (last visited on 22 February 2022): <https://www.theguardian.com/global-development/2020/apr/02/the-village-still-suffering-from-peru-mercury-spill-fallout-after-20-years>

40. BHRRC, 12/10/2019, Ghana: Newmont accused of downplaying impact of cyanide spillage, URL (last visited on 22 February 2022): <https://www.business-humanrights.org/en/latest-news/ghana-newmont-accused-of-downplaying-impact-of-cyanide-spillage/>



հանքավայրը՝ մոտ 73,7 տոննա ոսկով և 294,3 տոննա արծաթով:<sup>41</sup> Նախագծով նախատեսվում էր տարեկան արդյունահանել 286 մլն դոլարի ոսկի, որը կկազմի Հայաստանի արտահանման ընդհանուր ծավալի մոտ 6,5 տոկոսը, կգեներացնի տարեկան շուրջ 50 միլիոն ԱՄՆ դոլարի հարկեր Հայաստանի գանձարանների համար, ինչը կկազմի Հայաստանի ՀՆԱ-ի ավելի քան 1 տոկոսը:<sup>42, 43</sup>

2009 թվականին Հայաստանի իշխանությունները հանքավայրի հետախուզման համար հնգամյա հետախուզման լիցենզիա են տրամադրել ամբողջությամբ Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդին պատկանող՝ դրա դուստր ընկերությանը՝ Լիդիան Արմենիա ՓԲԸ-ին (այն ժամանակ՝ Գեոթիմ ՓԲԸ): Այդ ժամանակ Լիդիան Ինթերնեյշնլը հանրային կորպորացիա էր, որը գրանցված էր Ջերսիում (Մեծ Բրիտանիա) և Մանչի կղզիներում և ցուցակված էր Տորոնտոյի ֆոնդային բորսայում:<sup>44</sup> 2009 թվականին Լիդիանը նաև ստացավ 25 տարվա հանքարդյունաբերության լիցենզիա, որը պահանջում էր տրամադրել Կոնցեսիոն պայմանագիր և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ)՝ ի թիվս այլ պայմանների:<sup>45</sup> Հիշարժան է, որ Ամուլսարը Լիդիանի առաջին և առաջատար արդյունահանման նախագիծն էր, որը հիմքերից մեկն էր նաև ՄՖԿ-ից՝ մեկնարկող ընկերությունների համար հատուկ վարկ ստանալու իրավասության համար:

2012 թվականին Ամուլսարի ոսկու հանքավայրի հետախուզումն ավարտելուց հետո Լիդիան Ինթերնեյշնլը ստացավ Ամուլսարի ծրագրի Տիգրանես-Արտավազդես բացահայտման շահագործման նոր լիցենզիա (2012-ից մինչև 2034 թվականը): Չնայած ծրագրի հանդեպ աճող դիմադրությանը և մի քանի պաշտոնական բողոքներին, երկու բազմակողմ զարգացման բանկ ներդրումներ կատարեցին նախագծում: Մինչև 2015 թվականը Լիդիանը ապահովել էր հանքի շահագործումը սկսելու համար ֆինանսավորումը:<sup>46</sup>

## Ժամանակագրություն

2005թ. – Գեոթիմ ՓԲԸ-ն գրանցվում է Հայաստանում որպես Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդի դուստր ընկերություն:

2007թ. - ՄՖԿ-ն դառնում է Լիդիանի բաժնետեր: Ներսես Կարամանուկյանն այն ժամանակ Հայաստանում ՄՖԿ ներկայացուցչության ղեկավարն էր (2001-2009 թթ.):

2009թ. – Հայաստանի բնապահպանության նախարարությունը կայացնում է առաջին դրական որոշումը Ամուլսարի Տիգրանես տեղամասի ոսկեբեր քվարցիտի արդյունահանման ՇՄԱԳ-ի վերաբերյալ:

2009թ. – ՎՋԵԲ-ը տալիս է իր առաջին վարկը Լիդիանին:

2011թ. – Ներսես Կարամանուկյանը՝ ՄՖԿ հայաստանյան ազգային գրասենյակի նախկին ղեկավարը, դառնում է Լիդիանի գլխավոր տնօրեն:

2012թ. – Ամուլսարի ոսկու հանքի մոտ գտնվող զբոսաշրջային-առողջարանային քաղաք Ջերմուկի քաղաքապետը կտրուկ դեմ է արտահայտվում նախագծին:

2012թ. – Հայաստանի պահպանվող գոտի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը բացասական գնահատական է տալիս Ամուլսարի հանքավայրի ծրագրին՝ մատնանշելով կարևոր բնապահպանական ռիսկեր՝ կապված ռադիոակտիվ նյութերի բարձր պարունակության հետ, բարձր սեյսմակայունության, սողանքների բարձր ռիսկ և ջրահեռացման ռիսկեր:

2012թ. հուլիսի 31 – Հայաստանի բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության կենտրոնը երկրորդ դրական եզրակացությունն է ընդունում Ամուլսարի ծրագրի Էրատո տեղամասի վերաբերյալ ԲՓ-65 շրջակա միջավայրի վրա

41. Lydian Armenia, 2017, *Amulsar Gold Project*, URL (last seen on 7 January 2022): [https://www.lydianarmenia.am/images/2017/Amulsar\\_Project\\_eng.pdf](https://www.lydianarmenia.am/images/2017/Amulsar_Project_eng.pdf)

42. Avag Solutions, 2015, *Social-economic contribution of the Amulsar Gold Project*, URL (last checked on 7 January 2022): <https://www.lydianarmenia.am/eng/pages/amulsar-economic-impact/92/>

43. Khulian, A., Lazarian, T., 20/08/2019, Government Cites Economic Benefits of Mining Project, RFRL – Azatutyun, URL (last seen on 7 January 2022): <https://www.azatutyun.am/a/30119848.html>

44. EBRD PSD, 19/05/2016, *Lydian (Amulsar Gold Mine) – Extension*, Project Summary Document (last updated on 06/08/2020), URL (last seen on 7 January 2022): <https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/lydian-amulsar-gold-mine-extension.html>

45. Proactive Investor, 07/05/2009, Lydian gets 25 year mining license for Amulsar gold project in Armenia, URL (last seen on 7 January 2022): <https://www.proactiveinvestors.com/companies/news/70303/lydian-gets-25-year-mining-license-for-amulsar-gold-project-in-armenia-1441.html>

46. EBRD PSD, 2016, *op. cit.*

ազդեցության գնահատման վերաբերյալ՝ ուշադրություն չդարձնելով Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի հիմնավորումներին: բացասական եզրակացություն:

2013թ. – Լիդիանը մոտ 150,000 ԱՄՆ դոլար է նվիրաբերում Ջերմուկ քաղաքի զարգացման հիմնադրամին:

2013թ. – Ջերմուկի քաղաքապետն իր աջակցությունն է հայտնում ծրագրին:

2013-2014թթ. – Լիդիանը մոտ 250,000 ԱՄՆ դոլար է նվիրաբերում «Լույս» հիմնադրամին, որը 2008-2018 թվականներին պատկանում է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ընտանիքին:

2014թ. – Հայաստանի կառավարությունը որոշում է ընդունում, որով թույլատրվում է անհետացող տեսակների տեղափոխումը մեկ այլ տարածք՝ Ամուլսարից Սևանի բուսաբանական այգի, չնայած դա արգելված է բնապահպանական ազգային օրենսդրությամբ:

2014թ. ապրիլ – Տեղական համայնքները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները բողոք են ներկայացնում ՄՖԿ-ի Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականին:

2014թ. հուլիս և նոյեմբեր – Տեղական համայնքները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ևս երկու բողոք են ներկայացնում ՎՉԵԲ-ի Ծրագրերի հետ կապված բողոքների քննության մեխանիզմ (մերժվել է 2015թ. փետրվարին):

2014թ. հոկտեմբերի 17 – Սևանա լճի անմիջական ռիսկի գոտուց դուրս ցիանիդային կույտային տարրավազման օբյեկտի այլ տեղամաս առաջարկելուց հետո Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը դրական եզրակացության է գալիս լճի Էկոհամակարգի վրա Ամուլսարի հանքարդյունաբերության ծրագրի ազդեցության վերաբերյալ:

2014թ. հոկտեմբերի 17 – Հայաստանի բնապահպանության նախարարությունը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման երրորդ դրական եզրակացությունն է անում այս անգամ Ամուլսարի բացահանքի շահագործման ճշգրտված տեխնիկական նախագծի վերաբերյալ:

2014թ. նոյեմբեր – Լիդիանը ստանում է հանքարդյունաբերության թույլտվություն, որը ներառում է Տիգրանես-Արտավազդես և Էրատո բացահանքերը, փոխակրիչը, ջարդիչները, ցիանային կույտի տարրավազման կայանքը և հանքի նախագծման համապատասխան մանրամասները: Սա հիմնված է հաստատված ՇՄԱԳ-ի և տեխնիկական անվտանգության գնահատման վրա:

2015թ. մարտի 10 – ՀՀ կառավարությունն ընդունում է «Բաց եղանակով մշակվող օգտակար հանածոների հանքավայրերի անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 51-Ն որոշումը՝ հանքավայրերի չափերի վերաբերյալ, որի արդյունքում Ամուլսարի ծրագրի ծախսերը կրճատվում են 100 մլն ԱՄՆ դոլարով:

2015թ. ապրիլ-հուլիս – Մոտակա Գնդեվազ քաղաքի տասը բնակիչ և երկու հասարակական կազմակերպություններ (ՀԿ) դատական հայց են ներկայացնում բնապահպանության նախարարության կողմից տրված ՇՄԱԳ դրական եզրակացությունների առնչությամբ: Վարչական, Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանները հետագայում մերժելու են այս հայցը:

2016թ. փետրվար-հունիս – «Էկոլոգիական իրավունք» ՀԿ-ն ներկայացնում է հաղորդում՝ Հայաստանի կողմից ՄԱԿ-ի ԵՏՀ Օրինակի կոնվենցիայի չկատարման վերաբերյալ, որը ընդունվում է կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի կողմից:

2016թ. ապրիլ – Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը դրական եզրակացություն է տալիս Ամուլսարի ծրագրի վերջին գնահատման վերաբերյալ, Հայաստանի բնապահպանության նախարարությունը հրապարակում է չորրորդ դրական որոշումը՝ այս անգամ ոսկեբեր քվարցիտի արդյունահանման վերաբերյալ:

2016թ. մայիս – Լիդիանը հրապարակում է ծրագրի շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) (տարբերակ 10) վերջին կրկնությունը. հանքարդյունաբերության փոփոխված պլանին համապատասխան տրվում է նորացված հանքարդյունաբերության թույլտվություն:

2016թ. հուլիս – ՎՉԵԲ-ը նույնպես հրապարակում է ՇՄԱԳ-ի վերջնական տարբերակը (տարբերակ 10) և հաստատում է Ամուլսարում իր երկրորդ բաժնային ներդրումները:

2016թ. հոկտեմբեր – Լիդիանը հայտարարում է Ամուլսարում հանքի շինարարության մեկնարկի մասին:

2017թ. հուլիս – ՄՖԿ-ն դուրս է գալիս Ամուլսարի ծրագրից՝ նշելով, որ Լիդիանին հաջողվել է հանքավայրերի շահագործման համար ֆինանսավորում ներգրավել մասնավոր աղբյուրներից:

2017թ. հուլիս – Ավստրալիայից, ԱՄՆ-ից և Կանադայից անկախ փորձագետների խումբը, այսպես կոչված, Բրոնոզյանի խորհրդատուները հրապարակում են Ամուլսարի ծրագրի թթվային ապարների դրենաժի ռիսկերի վերաբերյալ նոր գեկույց:

2018թ. ապրիլ-մայիս – Տեղի է ունենում Հայաստանի թավշյա հեղափոխությունը:

2018թ. մայիս – Հայաստանի բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը ստուգումներ է սկսում Ամուլսարի և երկրի այլ խոշոր հանքավայրերում:

2018թ. հունիս – Ցուցարարները սկսում են Ամուլսարի հանքավայրի շրջափակումը, որը կտևի ավելի քան երկու տարի:

2018թ. հուլիս – Հայաստանի քննչական կոմիտեն քրեական գործ է հարուցում բնապահպանության նախարարության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ «Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի աղտոտման մասին տեղեկությունները պաշտոնատար անձանց կողմից դիտավորությամբ թաքցնելու գործով»: Կոմիտեն պայմանագիր է կնքում լիբանանյան Էլարո հետազոտական ընկերության հետ՝ վերանայելու Ամուլսարի ծրագրի ՇՄԱԳ-ները:

2018թ. դեկտեմբեր – Ջերմուկի և շրջակա գյուղերի 3000 բնակիչներ մասնակցում են հանքի դեմ ստորագրահավաքին:

2019թ. օգոստոս – Հրապարակվում են Էլարոյի և Տեսչական մարմնի հաշվետվությունները՝ համապատասխանաբար բացահայտելով շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման բացթողումները և շինարարության փուլի իրականացման ընթացքում իրավական խախտումների մասին ենթադրությունները: Հաջորդում են դատական գործեր:

2019թ. դեկտեմբեր – Օնտարիոյի արդարադատության գերագույն դատարանի որոշմամբ Ընկերությունների պարտատերերի հետ հարաբերությունների կարգավորման ակտով նախատեսված պաշտպանությունն ստանալուց հետո Լիդիան Ինթերնեշնլ սնանկ է ճանաչվում և սկսում է վերակազմակերպման գործընթացը:

2020թ. հունվար – Լիդիան Ինթերնեշնլը ապացուցակվում է Տորոնտոյի ֆոնդային բորսայից:

2020թ. մարտի 13 – Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հայտարարում է ամբողջ աշխարհում COVID-19 համաճարակի մասին այն նույն օրը, երբ վարչապետ Փաշինյանը Գնդեվազում հանդիպում է ցուցարարներին և հանրահավաք անցկացնում Ջերմուկում՝ դատաիրավական բարեփոխումների հանրաքվեի քարոզարշավի շրջանակում: Համաճարակը ծանր հարված էր Հայաստանին:

2020թ. մարտ – Չորս ՀԿ-ներ բողոք են ներկայացնում Բեռնի կոնվենցիայի համաձայն, որի արդյունքում Կոնվենցիայի Բյուրոյի կողմից Հայաստանին առաջարկվում է դադարեցնել ծրագրի ցանկացած գործողություն, որը կարող է բացասաբար ազդել կոնվենցիայով պահպանվող կենսամիջավայրերի և տեսակների վրա:

2020թ. մայիս – Ջերմուկից և Գնդեվազից ՀԿ-ները և տեղական ազդակիր անձինք բողոք են ներկայացնում ՎՉԵԲ-ի ԾՀԱՄ-ին (ընթացքի փուլում է):

2020թ. հուլիս – ՎՉԵԲ-ը հայտարարում է Լիդիան Ինթերնեշնլից դուրս գալու մասին ընկերության վերակառուցումից և Ամուլսարի ծրագրից դեպի այլ ընկերություններ ակտիվների փոխանցումից հետո, որտեղ ՎՉԵԲ-ը չունեի բաժնետոմսեր:

2020թ. օգոստոս – Հանքավայրում բախումներ են տեղի ունենում ցուցարարների և Լիդիանի անվտանգության ծառայողների միջև, որոնք փորձում են (և չեն կարողանում) բացել մուտքը դեպի հանք. բողոքի ցույցեր են նաև երևանում. ոստիկանությունը բռնությամբ բերման է ենթարկում ցուցարարներին և իրավապաշտպաններին:

2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր – Ամուլսարի շատ պաշտպաններ չեն վերադառնում արցախյան պատերազմից. Ադրբեջանի հետ սահմանը մոտենում է Ամուլսարին. Ամուլսարի հանքի շրջափակումը դադարում է.

2021թ. մարտ - Լիդիան Ինթերնեշնլը լուծարվում է Ջերսիի թագավորական դատարանի որոշմամբ: Ամուլսարի ոսկու հանքավայրի ակտիվների սեփականությունն ու վերահսկողությունը փոխանցվել է Կանադայի Լիդիան Վենչուրս ընկերությանը:

2022թ. հունվար – Լիդիան Արմենիան դիմում է նոր ջրօգտագործման թույլտվությունների համար, սակայն ստանում մերժում (բողոքարկումը ընթացքում է):

### 3.1. Բազմակողմ զարգացման բանկերի ներդրումները Ամուլսարի ծրագրում

2007 թվականին առաջին պետական բանկը, որը ներդրումներ կատարեց Ամուլսարի հանքավայրի հետախուզմանը, ՄՖԿ-ն էր՝ Համաշխարհային բանկի մասնավոր հատվածի վարկավորման թււր: Այդ ժամանակ Լիդիանն ուներ հետախուզական համատեղ ձեռնարկություն Եյումոնտ Մայնինգ Զորփորեյշնի հետ Հայաստանում և Թուրքիայում, և առանձին լիցենզիաներ ուներ Կոսովոյում երեք հետախուզական օբյեկտների համար:<sup>47</sup> 2007 և 2008 թվականներին Լիդիանի կապիտալ ծախսերը երեք երկրներում գնահատվել էին 4 միլիոն ֆուլստ ստեռլինգ (մոտ 8 մլն ԱՄՆ դոլարին համարժեք), որին ՄՖԿ-ն կատարեց 1 մլն ֆուլստ ստեռլինգ (մոտ 1,96 մլն ԱՄՆ դոլարին համարժեք) սեփական կապիտալի ներդրում:<sup>48</sup> Հետախուզումներից բացի, ՄՖԿ-ի ներդրումն ուղղված էր տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություններին և շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատումներին:

2009 թվականին ՄՖԿ-ն ներդրեց լրացուցիչ 1 մլն ԱՄՆ դոլար՝ աջակցելու Լիդիանի մոտ 5 մլն ԱՄՆ դոլար կապիտալ ծախսերին: Այդ ժամանակ Լիդիանի հիմնական բաժնետերերն էին Եյումոնտ Զորփորեյշնը (12,9 տոկոս) և ՄՖԿ-ն (12,9 տոկոս):<sup>49</sup> Ամուլսարը հանքարդյունաբերական ընկերության առաջատար նախագիծն էր:

ՄՖԿ-ի 2007 և 2009 թվականների բացահայտումները նշում են, որ ՄՖԿ-ն և Լիդիանը պայմանավորվել են, որ ընկերությունը պետք է մշակեր համակարգային մոտեցում բնապահպանական, աշխատանքային, սոցիալական և համայնքային կառավարման, ինչպես նաև շահագրգիռ կողմերի ներգրավվածության հարցում:<sup>50, 51</sup> Իր գնահատման ժամանակ ՄՖԿ-ն հայտարարեց, որ ի վիճակի չէ ամբողջությամբ հաշվարկել կամ հստակեցնել ծրագրի օգուտները արտադրության փուլում, քանի որ ներդրումը նախորդել է տեխնիկատնտեսական հիմնավորման որևէ ուսումնասիրություններին: Այն ժամանակ ՄՖԿ-ն համարեց «ծրագրի օգուտների իրականացման կառավարման ռիսկերը ողջամիտ» և կանխատեսեց ապագայում համայնքային հարաբերությունների հետ կապված մարտահրավերներ, երբ Լիդիանի նախագծերը անցնեն պոտենցիալ հետագա զարգացման փուլ:

2009 թվականին ՎՉԵԲ-ն իր հերթին կատարեց իր առաջին 5,8 միլիոն կանադական դոլար (մոտ 6,2 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք) ներդրումը Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդի կապիտալում՝ Ամուլսարի հանքավայրի հետախուզման համար:<sup>52</sup> ՎՉԵԲ-ի 2012 թվականի բացահայտումը ցույց է տալիս, որ Լիդիանը ծրագրում էր Ամուլսարի հանքավայրի ապագա զարգացումը, ուստի միջազգային խորհրդատուին հանձնարարվեց իրականացնել շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատում (ՇՄԱԳ): Ակնկալվում էր, որ այս գնահատումը «ավարտվելու և հրապարակվելու է 2012 թվականի ամռանը հանրային քննարկման և մեկնաբանության համար»:

Գնահատման մի քանի նախնական տարբերակներ քննադատության են ենթարկվել հայ և միջազգային փորձագետների, ինչպես նաև ՄՖԿ-ի և ՎՉԵԲ-ի կողմից: 2014 թվականին տեղական համայնքների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից երկու բանկերի հաշվետվողականության մեխանիզմների վերաբերյալ երեք բողոք է հնչել՝ ավելացնելով մի շարք անպատասխան հարցեր և գնահատման բացեր: Մի շարք վերաթողարկումներից հետո ՇՄԱԳ-ի տասներորդ տարբերակը վերջապես հրապարակվեց Լիդիանի և ՎՉԵԲ-ի կողմից 2016 թվականի հուլիսին:<sup>53</sup>

ՎՉԵԲ-ը հավելյալ 11,4 մլն կանադական դոլար (մոտ 8,7 մլն ԱՄՆ դոլարին համարժեք) ներդրեց Լիդիան Ինթերնեյշնլի բաժնետոմսերը գնելու համար՝ որպես իր կապիտալի ավելացման մաս:<sup>54</sup> Բանկը հիմնավորել է իր աջակցությունը՝ նշելով, որ նոր «կապիտալի ներդրումը նախատեսված էր Բնապահպանական և սոցիալական մեղմացման միջոցառումների (ԲՍՄՍ) ֆինանսավորման համար», ինչպիսին է կենսաբազմազանության փոխհատուցումը:

2017 թվականին ՄՖԿ-ն վաճառեց իր կապիտալը և դուրս եկավ Ամուլսարի ծրագրից՝ նշելով. «Հաշվի

47. IFC ESRS, 22/05/2007, *Environmental and Social Review Summary: Lydian Resource Company Ltd*, IFC Project Information and Data Portal, URL (last seen on 24 January 2022): <https://disclosures.ifc.org/project-detail/ESRS/25924/lydian-resource-company-ltd>

48. IFC SPI, 2007, *op. cit.*

49. IFC SPI, 21/01/2009, *Summary of Project Investment: Lydian Intl 3*, IFC Project Information and Data Portal, URL (last seen on 24 January 2022): <https://disclosures.ifc.org/project-detail/SPI/27657/lydian-intl-3>

50. IFC ESRA, 2007, *op. cit.*

51. IFC ESRS, 21/01/2009, *Environmental and Social Review Summary: Lydian Intl3*, IFC Project Information and Data Portal, URL (last seen on 24 January 2022): <https://disclosures.ifc.org/project-detail/ESRS/27657/lydian-intl-3>

52. EBRD PSD, 27/04/2012, *DIF – Lydian (Amulsar Gold Mine)*, EBRD Project Finder, URL (last seen on 24 January 2022): <https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/dif-lydian-amulsar-gold-mine.html>

53. EBRD, 9/05/2016, *Environmental and Social Impact Assessment: Lydian (Amulsar Gold Mine) – Extension*, EBRD Project Finder, URL (last seen on 24 January 2022): <https://www.ebrd.com/work-with-us/projects/esia/dif-lydian-amulsar-gold-mine-extension.html>

54. EBRD PSD, 2016, *op. cit.*

առնելով, որ Լիդիանին հաջողվել է հանքավայրերի զարգացման համար ֆինանսավորում ներգրավել մասնավոր հատվածի աղբյուրներից, ՄՖԿ-ն հրաժարվել է Լիդիանում իր ներդրումներից, քանի որ մենք ձգտում ենք մեր կապիտալը տեղակայել այնտեղ, որտեղ այն առավել անհրաժեշտ է կայուն տնտեսական զարգացումը խթանելու համար: Յետևաբար, ՄՖԿ-ն այլևս չի վերահսկում հանքավայրի շահագործումը»:<sup>55</sup>

Ե՛վ ՄՖԿ-ն, և՛ ՎՉԵԲ-ը պնդում էին, որ ակտիվ խորհրդատվական դեր են տանում՝ օգնելու Լիդիանին հասնել միջազգային լավագույն փորձին՝ երկու բազմակողմ զարգացման բանկերի բնապահպանական և սոցիալական չափանիշներին համապատասխան: Այնուամենայնիվ, բանկերի աջակցությունը և հաստատող կնիքները բավարար չէին, որպեսզի համոզեն տեղական համայնքներին և Հայաստանի քաղաքացիական հասարակությանը, որ նախագիծը կարող է փոփոխություն մտցնել երկրի՝ տասնամյա աղտոտվածության ժառանգությամբ հայտնի հանքարդյունաբերության ոլորտում:<sup>56</sup>

Հատկանշական է, որ երկու բանկերի՝ որպես բարձր չափանիշներ երաշխավորների իմիջև արդեն իսկ արատավորվել էր թե՛ Հայաստանում, թե՛ այլուր աշխարհում: ՎՉԵԲ-ն արդև ուներ մեկ արդյունաբերության լավագույն փորձը Հայաստան բերելու չստացված փորձ՝ իր ներդրումների միջոցով կանադական մեկ այլ՝ Դանդի Փրեշս Մեթալս ընկերությունում,<sup>57</sup> որը շահագործում էր Դինո ոսկու հանքը Ամուլսարից հարավ գտնվող Կապանում:<sup>58</sup> Ավելին, 2015 թվականին Յետաքննող լրագրողների միջազգային կոնսորցիումը հրապարակեց մի շարք զեկույցներ, որոնք փաստում էին, որ 2004-ից 2013 թվականներին Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող տնտեսական ծրագրերը ֆիզիկապես կամ տնտեսապես տեղահանել են մոտ 3,4 միլիոն մարդու, գրեթե բոլորը Աֆրիկայում, Կիտանամում, Չինաստանում կամ Յնդկաստանում:<sup>59</sup>

### 3.2. Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի հետ կապված ռիսկերը

Հաջորդ բաժնում ամփոփված են Ամուլսարի հանքի ծրագրի հետ կապված ինչպես բնապահպանական, այնպես էլ սոցիալական ռիսկերը, որոնք բացահայտվել են ընկերության կամ կառավարության համար աշխատող մի քանի փորձագետների, քաղաքացիական հասարակության ակտիվիստների և խորհրդատուների կողմից: Չեկույցի հաջորդ մասերում ավելի մանրամասն ներկայացված է, թե ինչպես են պետությունը և ընկերությունը պատասխանել այդ ռիսկերին, մասնավորապես՝ մարդու իրավունքներին առնչվող ռիսկերին, և դրա հետ կապված խախտումներին, որոնք տեղի են ունեցել Ամուլսարի գործունեության համատեքստում:

#### 3.2.1. Ամուլսարի ոսկու հանքի բնապահպանական ռիսկերը

Ամուլսարի ծրագիրը նախագուշակական պատմություն է արդյունահանող արդյունաբերության նախագծերի համար, որոնք ապավինում են կառավարությունների և ներդրողների աջակցությանը, սակայն չեն կարողանում ապահովել սոցիալական վստահությունը: 2011 թվականից բնապահպանները առարկություններ են ներկայացրել Ամուլսարի հանքարդյունաբերության ծրագրի դեմ<sup>60</sup>՝ նշելով այն լուրջ վտանգները, որոնք այն ներկայացնում է կենսաբազմազանության և Հայաստանի թանկարժեք ջրային ռեսուրսների համար: Մինչ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ակտիվորեն դեմ էին նախագծին<sup>61</sup>, շատ տեղացիներ հուսահատվել էին խոսել<sup>62</sup>, հատկապես այն բանից հետո, երբ քաղաքական առաջնորդներն ու ընտրված պաշտոնյաները անցան ընկերության կողմը, և նախկին ռեժիմի կողմից տրվեցին հանքարդյունաբերության թույլտվություններ:

55. IFC, 04/12/2014, *IFC's Management Response to the CAO Assessment Report on the communities' complaint against Lydian International's Amulsar gold mine exploration project in Armenia (#27657)*, CAO Case Tracker, URL (last visited on 22 February 2022): <https://www.cao-ombudsman.org/cases/armenia-lydian-intl3-01gndevaz-and-jermuk>

56. Tepanosyan, G. et al., 2018, *op. cit.*

57. Bacheva-McGrath, F., Popov, D., Zarafyan, I., Imankozhoeva, E., 2009, *Between a rock and a hard place. How local communities pay the cost of EBRD-financed gold mining projects*, Bankwatch, URL (last checked on 24 January): [https://bankwatch.org/wp-content/uploads/2011/08/btw\\_a\\_rock\\_and\\_a\\_hard\\_place\\_web.pdf](https://bankwatch.org/wp-content/uploads/2011/08/btw_a_rock_and_a_hard_place_web.pdf)

58. Zarafian, I., 10/05/2013, *Armenia gold mining problems cast doubt over renewed EBRD financing*, Bankwatch Mail, URL (last checked on 24 January): <https://bankwatch.org/publication/armenia-gold-mining-problems-cast-shadow-over-renewed-ebrd-financing>

59. ICIJ, 2015, *Evicted and Abandoned. How The World Bank Broke Its Promise To Protect The Poor*, *Huff Post*, URL (last checked on 24 January 2022): <https://projects.huffingtonpost.com/worldbank-evicted-abandoned>

60. Lragir.am, 30.10.2014, *Statement by S.O.S. Amulsar Initiative (in Armenian)*, URL (last checked on 25 January 2022): <https://www.lragir.am/2014/10/30/105981/?fbclid=IwAR0hGAjpiemV11SrPR-rlupqH8DS94Xs9RwfpsMdrPKAcQzWExLk7AabF7c>

61. Khachatryan, N., 25/10/2017, *Update: Amulsar Gold Mining Project Sees Additional Construction and Protests*, *Bellingcat*, URL: <https://www.bellingcat.com/news/rest-of-world/2017/10/25/update-amulsar-gold-mining-project-sees-additional-construction-protests/>

62. Liakhov, P., 31/01/2017, *Armenia: before the goldrush*, URL (last checked on 24 January 2022): <https://www.opendemocracy.net/en/odr/armenia-before-goldrush/>

## Ջրային ռեսուրսներին սպառնացող վտանգները

Ոսկու հանքի նախագծի հետ կապված հիմնական մտահոգություններից է Ամուլսարի մոտ լինելը հայտնի Ջերմուկ առողջարանին և հանքային ջրերի աղբյուրներին, որոնք մատակարարում են Ջերմուկ շրջանում ջրի ապրանքանիշը: Ծրագրի կողմից ցիանիդային տարրավազման տեխնոլոգիայի կիրառումը հանքաքարից ոսկի կորզելու համար սպառնում է նաև մեծ գետերի, այդ թվում՝ Արփա, Որոտան և Դարբ գետերի ակունքներին, որոնք անդրազգային Արաքս և Քուռ գետերի ավազանների մաս են կազմում:

Հատկանշական է, որ Ամուլսարի մոտ կա երկու ջրամբար՝ Կեչուտի և Սպանդարյանի ջրամբարները, որոնք ստորգետնյա թունելներով ջուր են մատակարարում Հայաստանի գլխավոր և կարևորագույն ջրային ռեսուրսին՝ Սևանա լճին:<sup>63</sup> Սևանա լճի մասին օրենքը արգելում է Սևանի ջրհավաք ավազաններում ցանկացած գործունեություն, որը կարող է ուղղակի կամ անուղղակի բացասական ազդեցություն ունենալ լճի վրա: Հայ փորձագետները զգուշացրել են, որ Ամուլսարի հանքավայրի սուլֆիդային բնույթը բարձրացնում է հանքավայրի թթվային ապարների դրենաժի և ջրի թթվայնացման ռիսկերը մոտակա գետերում և ջրամբարներում և, ի վերջո, հենց լճում:<sup>64</sup>

2017 և 2018 թվականներին Ավստրալիայից, ԱՄՆ-ից և Կանադայից մի խումբ փորձագետներ (այսպես կոչված՝ Բրոնոգյանի խորհրդատուները) հրապարակեցին զեկույց՝ «Ամուլսարի ոսկու ծրագիրը» վերնագրով, որն, ի թիվս այլ մտահոգությունների, բարձրացրեց մի շարք լուրջ հարցեր՝ թթվային ապարների դրենաժի վտանգի, կարևոր ջրային ռեսուրսների աղտոտման և հանքարդյունաբերությանից հետփակումից հետո երկարաժամկետ վերականգնման համար ֆինանսական երաշխիքների բացակայության վերաբերյալ:<sup>65</sup> Չեկույցը գոտեպնդեց հանքի ընդհանրություններին, քանի որ այն վերահաստատում էր որոշ մտահոգություններ, որոնք արդեն բարձրացվել էին հայ գիտնականների և քաղաքացիական հասարակության փորձագետների կողմից: Ավելին, Բրոնոգյանի խորհրդատուների զեկույցում ընդգծվում էր այն փաստը, որ Հայաստանի իշխանությունները չեն հանձնարարել Լիդիանի ծրագրերի որևէ անկախ փորձագիտական գնահատում կամ ազդեցության գնահատում:

## Սպառնալիքներն ու ազդեցությունը կենսաբազմազանության վրա

Ինչպես հայաստանցի, այդպես էլ միջազգային փորձագետներ զգուշացրել են նաև Ամուլսարի հանքավայրի կողմից կենսաբազմազանությանը սպառնացող վտանգների մասին: Հայաստանի կենսաբազմազանության պահպանման առաջատար փորձագետ, Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան տնօրեն Կարեն Մանվելյանն իր կարծիքն է ներկայացրել Ամուլսարի ոսկու հանքի նախագծի վերաբերյալ Բնապահպանության նախարարության կողմից ընդունված ՇՄԱԳ դրական որոշման և Հայաստանի օրենսդրության հակասությունների վերաբերյալ:<sup>66</sup> Նա նշել է, որ հանքավայրի պլանավորված տարածքում հայտնաբերվել են Կարմիր գրքում գրանցված բազմաթիվ տեսակներ, և որ բաց հանքի արդյունահանման և հանքավայրի օբյեկտները կհանգեցնեն այս տեսակների աճելավայրի կորստի կամ առնվազն վատթարացմանը՝ այդպիսով նվազեցնելով նրանց թիվը:

Ինչպես նշել են և՛ Մանվելյանը, և՛ հայտնի բնապահպան իրավաբան Նազելի Վարդանյանը, պահպանվող տեսակների աճելավայրերի ոչնչացումը և քայքայումը խախտում է Հայաստանի ընդերքի օրենսգիրքը, կենդանական աշխարհի և բուսական աշխարհի մասին օրենքները, Եվրոպայի վայրի բնության բնական միջավայրի պահպանման մասին Բեռնի կոնվենցիայի դրույթները և Կենսաբազմազանության մասին կոնվենցիան, որոնք Հայաստանը վավերացրել է 2008 թվականին:<sup>67, 68</sup>

63. Vardanyan, N., 03/11/2016, Legal Opinion on Amulsar Gold Quartzite Mining, Ecolur, URL (last checked on 26 January 2022): <https://www.ecolur.org/en/news/sevan/legal-opinion-comparative-analysis-on-amulsar-gold-quartzite-mining/8648/>

64. Armecofront.net, 21/12/2017, Acid Mine Drainage in Amulsar and its Hazard. Professor Armen Saghatelian, URL (last checked on 27 January 2022): <https://armecofront.net/en/amulsar-2/acid-mine-drainage-in-amulsar-and-its-hazard%E2%80%A4-professor-armen-saghatelian/>

65. Blue Minerals Consultancy Buka Environmental Clear Coast Consulting, 2018, *Amulsar Gold Project: Overview of Concerns with the Amulsar Gold Project, Potential Consequences, and Recommendations*, URL (downloaded on 7 January 2022): <https://slidelegend.com/amulsar-gold-project-overview-of-concerns-with-the-amulsar-gold-5ae433187f8b9a2e9e8b4595.html>

66. Manvelyan, K., 30/08/2018, *Expert Opinion on Biodiversity, Its Conservation and Biodiversity Offset in EIA and Appendixes of Amulsar Gold Quartzite Deposit in the Republic of Armenia*, URL: <https://www.ecolur.org/files/uploads/2018/Amulsar%20experts%20opinions%202018/karenmanvelyansxpertpinioneng.pdf>

67. Vardanyan, K., 30/08/2018, *Expert Opinion on Biodiversity, Its Conservation and Biodiversity Offset in EIA and Appendixes of Amulsar Gold Quartzite Deposit in the Republic of Armenia*, URL (last checked on 27 January 2022): <https://www.ecolur.org/files/uploads/2018/Amulsar%20experts%20opinions%202018/karenmanvelyansxpertpinioneng.pdf>

68. Ecolex, *Convention on the Conservation of European Wildlife and Natural Habitats*, URL (last visited on 31 January 2022): <https://www.ecolex.org/details/treaty/convention-on-the-conservation-of-european-wildlife-and-natural-habitats-tre-000473/>

2018 թվականին Վայրի բնության բալկանյան միության փորձագետների կողմից հրապարակված գեկույցը պարզել է, որ Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի ՇՄԱԳ-ում և ԲՍԱԳ-ում բացակայում են ազդեցության գնահատումը հանքի տարածքում գտնվող մի շարք հատուկ պահպանության տեղամասերի՝ «Էմերալդ տարածքների» համար:<sup>69</sup> Չեկույց այսօրվ եզրակացնում է, որ Լիդիանի ծրագիրը վտանգի տակ է դրել Բեռնի կոնվենցիայի նպատակը՝ ապահովելու վայրի ֆլորայի և ֆաունայի տեսակների, ինչպես նաև վտանգված բնական միջավայրերի՝ «Էմերալդ տարածքների» պահպանությունը:

Բալկանյան փորձագետները նաև ընդգծել են, որ Ամուլսարի հանքավայրի ՇՄԱԳ-ի համար օգտագործված մեթոդաբանությունը չի համապատասխանում «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» Բեռնի կոնվենցիայի պահանջներին, որոնք ՎՉԵԲ-ը պարտավոր է հարգել: ՇՄԱԳ-ը չի տրամադրել որևէ վերլուծություն կամ ապացույց, որ Լիդիանի ծրագիրն արժանի է որևէ բացառության Հայաստանի պարտավորություններից՝ համաձայն Կոնվենցիայի 9-րդ հոդվածի: Միևնույն ժամանակ, Լիդիանը պլանավորում էր ստեղծել նոր պահպանվող տարածք՝ Ջերմուկ ազգային պարկը, որպես կենսաբազմազանության փոխհատուցում, ընդունելով, որ կենսաբազմազանության կորուստն անխուսափելի է և պետք է փոխհատուցվի: Պլանը չիրականացավ, չնայած ՎՉԵԲ-ի կապիտալ ներդրումներին, որոնք նախատեսված էին կենսաբազմազանության կորուստը մեղմելու համար, մինչդեռ հետախուզման և հանքավայրի շինարարության ընթացքում անդամայի վնաս հասցվեց վայրի բնությանը և բնակավայրերին:

Հիմնվելով WWF-ի և Վայրի բնության բալկանյան միության բացահայտումների վրա՝ 2020 թվականին բնապահպանական խմբերը բողոք են ներկայացրել Բեռնի կոնվենցիային համապատասխան:<sup>70</sup> Կոնվենցիայի բյուրոն պատասխանել է Հայաստանի կառավարությանը հանձնարարականով՝ դադարեցնել ցանկացած զարգացում, որը կարող է բացասաբար ազդել կոնվենցիայով պահպանվող կենսամիջավայրերի և տեսակների վրա:<sup>71</sup> Ներկայումս Ամուլսարի գործը դիտարվում է Բյուրոյի կողմից և շարունակում մնալ չլուծված միջև Հայաստանը համարժեք միջոցներ կծեռնարկի «Էմերալդ տարածքներում» վայրի բնության և աճելավայրերի պահպանումն ապահովելու համար:

### 3.2.2. Մարդկանց իրավունքների վրա ազդեցությունները և ռիսկերը

Մինչ Թավշյա հեղափոխությունը Հայաստանի իշխանությունները շրջանցում էին տեղի բնակչության և անկախ փորձագետների մտահոգությունները շրջակա միջավայրի, տնտեսության և մարդկանց առողջության հետ կապված Ամուլսարի ծրագրի վտանգների վերաբերյալ: Դեռևս 2007 թվականին ՄՖԿ-ն ընդունել էր, որ գոյություն ունի «ծրագրի հետ կապված կառավարման ռիսկերի ողջամիտ մակարդակ»:<sup>72</sup> Համաշխարհային բանկի 2014 թվականի գեկույցում ընդգծվում է, որ «հիմնական մարտահրավերները, որոնց Հայաստանը պետք է անդրադառնա նախքան հանքավայրերի ընդլայնումը զարգացնելը, վերաբերում են ոլորտի կառավարմանը՝ ուղղված բնապահպանական և սոցիալական ազդեցություններին... ինչպես նաև իրավական վերահսկողության պրակտիկայի, թափանցիկության և կիրարկման մեխանիզմների բարեփոխմանը»:<sup>73</sup> Այս առումով, Ամուլսարի ծրագրի վերաբերյալ ՄՖԿ-ի թիմը կանխատեսել էր, որ ապագայում, երբ Ամուլսարի ծրագիրը կանցնի հանքի շահագործման փուլ, Լիդիանը կարող է ակնկալել մարտահրավերներ տեղական համայնների հետ հարաբերություններում:

Ամուլսարի հանքի ծրագիրը մի շարք զգալի առողջապահական և սոցիալական ռիսկեր է ներկայացրել տեղական համայնքների համար, ինչպես նաև տնտեսական ռիսկեր մոտակա Ջերմուկ առողջարանի և շրջակա գյուղերի պտղատու այգիների, արոտավայրերի ջրամատակարարման և զբոսաշրջային ներուժի համար: Այս ռիսկերը բացահայտվել են մի շարք փորձագետների կողմից և որոշ չափով ներառվել են նաև Լիդիանի սոցիալական ազդեցության գնահատման մեջ (2016 թվականի ՇՄԱԳ-ում), որն արված էր համեմատաբար որակով՝ համեմատած Հայաստանի այլ ազդեցության գնահատումների հետ: Այնուամենայնիվ, այն ուներ որոշ լուրջ բացեր և անբավարար մեղմացնող միջոցառումներ, որոնք փորձարկվել են ծրագրի շինարարության փուլում, ինչի մասին վկայում են շինարարության ընթացքում ջրամատակարարման խափանումները և օդի աղտոտվածությունը:<sup>74</sup>

69. Kovatchev, A., Tsingarska-Sedefcheva, E., Ralev, A., 2018, *Report on New Circumstances Related to the Environmental and Social Impact Assessment (ESIA) of the Amulsar Gold Project in Armenia*, Balkani Wildlife Society, URL (last checked on 26 January 2022): <https://www.ecolour.org/files/uploads/2018/Amulsar%20Andrey%20Ralev/amulsarreportfinalandreyralev.pdf>

70. CEE Bankwatch Network, 30/03/2020, Armenia breaks international agreement on biodiversity over gold mine funding, alleges complaint, URL (last checked on 28 January 2022): [https://bankwatch.org/press\\_release/armenia-breaks-international-agreement-on-biodiversity-over-gold-mine-funding-alleges-complaint](https://bankwatch.org/press_release/armenia-breaks-international-agreement-on-biodiversity-over-gold-mine-funding-alleges-complaint)

71. Ecolour.org, 06/05/2021, Berne Secretariat Raised Status of Complaint on Amulsar, URL (last checked on 25 January 2022): <https://www.ecolour.org/en/news/amulsar/13171/>

72. IFC SPI, 2007, *op. cit.*

73. Damianova, A. J. *et al.*, 2014, *op. cit.*

74. Amulsar Independent Advisory Panel, 2018, *Annual Report 2017-2018*, URL (last visited on 22 February 2022): <https://www.lydianarmenia.am/img/uploadFiles/2d08074978e06b60db97AmulsarIndependentAdvisoryPanel-AnnualReport2017-2018.pdf>

Տեղական համայնքները հատկապես անհանգստացած էին, որ Գնդեվազ և Սարավան գյուղերի ֆերմերների կողմից անասունների արածեցման համար օգտագործվող արոտավայրերում և Գնդեվազի ծիրանի այգիների մոտակայքում նախատեսվում էր կառուցել ցիանիդով տարրավազման կայան:<sup>75</sup> Մոտակա Դարբ, Արփա և Որոտան գետերն օգտագործվում են նաև խաղողի այգիները և գյուղատնտեսական նշանակության հողերը ջրելու, ինչպես նաև ձկնաբուծարանները սնուցելու համար, ներառյալ Արփա գետի երկայնքով գտնվող տարածքը: ՇՄԱԳ-ում նշվում էր, որ «Ամուլսարում տեղական զբաղվածության ձևավորումը կարող է հանգեցնել ավանդական կենսամիջոցներից հեռացման՝ հանգեցնելով մշակութային ինքնության կորստի» և որպես մեղմացման միջոց առաջարկվում էր «իրականացնել համայնքային զարգացման ծրագրեր, որոնք աջակցում են գյուղատնտեսության ոլորտին և փոքր և միջին բիզնեսներին»: Այնուամենայնիվ, շինարարության փուլում Գնդեվազի գյուղացիները հայտնում էին, որ իրենց ծիրանը շուկայում կորցրել է պահանջարկը, քանի որ մարդիկ, առողջական ռիսկերից ելնելով, հրաժարվում են Ամուլսարի տարածաշրջանի մթերքից:

Ամուլսարի հանքի ծրագրի հիմնական սոցիալական և տնտեսական ռիսկերից մի քանիսը սպառնում էին մոտակա Ջերմուկ քաղաքին: Ջերմուկը հայտնի հանքային աղբյուրների առողջարան է Հայաստանում, որտեղից ծագում է նաև շշալցված հանքային ջրի հայտնի ապրանքանիշը: Քաղաքն բաղկացած է բնակելի (այժմ ներառում է նաև Կետչուտ գյուղը) և հանգստյան գոտիներից: Ջերմուկը սիրված հանգստի վայրերից է եղել ինչպես հայաստանցիների սերունդների, այնպես էլ հայկական սփյուռքի և արտասահմանցիների համար:

Ամուլսարի ծրագրի տարածքը գտնվում է Ջերմուկից ընդամենը 7 կմ հեռավորության վրա (12 կիլոմետր ճանապարհով): 2015 թվականին՝ մինչև հանքի շինարարության մեկնարկը, Լիդիանը պնդում էր, որ Ջերմուկի վրա բացասական ազդեցությունները կարող են մեղմվել, և հետևաբար, դրանք էական չեն:<sup>76</sup> Այնուամենայնիվ, շինարարությունը սկսելուց հետո Ջերմուկի իմիջը՝ որպես հանգիստ առողջարանային քաղաքի բախվեց կեղտոտ, աղմկոտ հանքարդյունաբերական քաղաք լինելու հեռանկարին: Առողջարանում աշխատող մարդիկ դժգոհում էին, որ բժշկական զբոսաշրջությունը և հանքի շահագործումը անհամատեղելի են:<sup>77</sup> 2018 թվականին Bankwatch-ի կողմից պատվիրված սոցիոլոգիական ուսումնասիրության ընթացքում Ջերմուկում հարցվածների 85,7 տոկոսը հայտնել է հանքի շինարարությունից իրենց առողջության վրա բացասական ազդեցության մասին<sup>78</sup>, այդ թվում՝ հոգեբանական, մտահոգությունների թվում նշելով ասթմայի նոպաների, թոքերի հիվանդությունների, չոր մաշկի, գլխացավերի և անքնության հաճախացումը:

Տեղի բնակչության առողջությանը սպառնացող աղբյուրները ներառում են ոչ միայն ջրի աղտոտվածությունը<sup>79</sup>, այլև գյուղի մոտ գտնվող ցիանային տարրավազման օբյեկտը, նչպես նաև հանքի տարածքի փոշին: Հաշվի առնելով տարածքում ուժեղ քամիները, ազդեցությունները հիմնականում զգացել են Գնդեվազի բնակիչները, սակայն փոշին հասել է նաև Ջերմուկ քաղաք:<sup>80</sup> Առողջապահական մտահոգությունների մեկ այլ պատճառ է այդ տարածքում ուրանի, թորիումի և ռադոնի բարձր քանակությունը: Համաձայն խորհրդային ժամանակաշրջանի գիտական աշխատությունների և վերջին փորձագիտական գնահատումների դրանք գերազանցում են Ամուլսարի ոսկու պաշարները:<sup>81</sup>

Այս առումով կարևոր է նշել, որ ՇՄԱԳ-ի շրջանակը և Ամուլսարի հանքավայրի ՇՄԱԳ-ի վերաբերյալ հանրային քննարկումները Հայաստանի իշխանությունների կողմից մշակվել են այնպես, որ բացառեն կարևոր շահագրգիռ կողմերին, հատկապես Ջերմուկի բնակիչներին:<sup>82</sup> Թեև Լիդիան Ինթերնեյշնլը պնդում է, որ պարբերաբար ներգրավվել է Ջերմուկի տեղական շահագրգիռ կողմերին<sup>83</sup>, այդ

75. Armecofront.net, 29/05/2018, Grounds for stopping the Amulsar project. Letter to the RA Government (in Armenian), URL (last checked on 26 January 2022): <https://armecofront.net/amulsar/grounds-for-stopping-project-in-amulsar/>

76. Lydian Armenia, *14 Questions and Answers About Amulsar*, URL (last visited on 22 February 2022): [https://www.lydianarmenia.am/img/uploadFiles/bbfa0e9af97cfe6c5f9eQ&A\\_eng.pdf](https://www.lydianarmenia.am/img/uploadFiles/bbfa0e9af97cfe6c5f9eQ&A_eng.pdf)

77. Mkrtchyan, G., 26/01/2019, Jermuk: a resort or a mining town?, *Urbanista*, URL (last checked on 28 January 2022): <https://urbanista.am/jermuk-eng>

78. Mkrtchyan, A., 2018, *Assessing the social impacts of the preparatory and development phases at Lydian International's Amulsar mine in Armenia through surveys of neighbouring communities*, Community Mutual Assistance and CEE Bankwatch Network, URL (last visited on 31 January 2022): <https://bankwatch.org/wp-content/uploads/2019/01/Amulsar-Report-1-Social-min.pdf>

79. Cyanide heap leaching is a process for recovering gold and silver by trickling cyanide solutions through low-grade ore that has been stacked on open-air pads.

80. Gevorgyan, M., 15/11/2019, Amulsar Uncertainty Continues: A Local Activist and Diaspora Armenians Share their Concerns, *Hetq Investigative Journalists*, URL (last checked on 25 January 2022): <https://hetq.am/en/article/109849>

81. Sanasaryan, H., 19/04/2019, Expert Opinion on Radioactivity in Amulsar area (in Armenian), *Hetq investigative journalists*, URL (last checked on 25 January 2022): <https://hetq.am/hy/article/108680>

82. Datalex.am, 13/05/2013, Court Case against Prime Minister and Ministry of Nature Protection of Armenia obliging to recognize the plaintiff and Jermuk community as affected by Amulsar gold mine project (in Armenian), URL (last checked 27 January 2022): [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809711850](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809711850)

83. Geoteam, 30/01/2016, *Update V12: Stakeholder Engagement Plan*, URL: <https://www.lydianarmenia.am/eng/pages/amulsar-stakeholders/101/>



հանդիպումները երբևէ չեն եղել Բնապահպանության նախարարության կողմից կազմակերպված ՇՄԱԳ-ի վերաբերյալ հանրային լուսմներ: Հետևաբար, համայնքային կապի նեղ խմբերի հետ հանդիպումները չեն կարող որակվել որպես ՇՄԱԳ ընթացակարգում հանրության մասնակցությունն ապահովող հանրային լուսմներ:

Ավելին, Հայաստանի բնապահպանության նախարարության կայքում բացակայում են Ջերմուկի հանրային լուսմների արձանագրությունները՝ ի տարբերություն Ամուլսարի ծրագրի ՇՄԱԳ-ի վերաբերյալ մյուս համայնքների հետ խորհրդակցությունների:<sup>84</sup>

2018 թվականի դեկտեմբերին Ջերմուկ համայնքի, այդ թվում՝ Ջերմուկ քաղաքի և Կեչուտ, Գևորգյան, Հեր-Հեր և Կարմրաշեն գյուղերի բնակիչները 3000 ստորագրություն են հավաքել՝ դիմելով Հայաստանի կառավարությանը: Նրանք պահանջում էին արգելել մետաղի արդյունահանումը և առաջարկում իրենց տարածքում կայուն բնապահպանական-տնտեսական զարգացման սեփական տեսլականը:<sup>85</sup>

### 3.2.3. Ամուլսարի ծրագրի հետ կապված կոռուպցիոն ռիսկերը

2017 թվականին Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը հրապարակել է «Հանքարդյունաբերության ոլորտում ընդերքօգտագործման իրավունքի և առևճիող թույլտվությունների տրման գործընթացներում կոռուպցիոն ռիսկերի գնահատում» զեկույցը, որի նպատակն էր վերլուծել Հայաստանում հանքարդյունաբերության թույլտվությունների տրամադրման գործընթացում առկա բացերն ու կոռուպցիոն ռիսկերը:<sup>86</sup> Չեկույցը փաստում էր թափանցիկության զգալի բացերի մասին ընդերքօգտագործման, ներառյալ հանքարդյունաբերության թույլտվությունների տրամադրման գործընթացում: Այն ամփոփում էր Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների նախորդ զեկույցները երկրի հանքարդյունաբերության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի մասին, այդ թվում՝ կապված Ամուլսարի հետ:<sup>87</sup>

Օրինակ, Ամուլսարի հանքավայրի հետախուզման դեպքում ոսկու պաշարների վերաբերյալ տվյալները մի քանի տարվա ընթացքում փոխվել են առնվազն չորս անգամ: Սա կասկածներ է առաջացրել, քանի որ տվյալները հնարավոր չի եղել ստուգել: Ավելին, ռեսուրսների գնահատականները բարձրացնող հայտարարությունների քանակը կարող էր ծառայել բաժնետերերի շահերին՝ առաջացնելու Տորոնտոյի ֆոնդային բորսայում ընկերության ակտիվների արժեքի և բաժնետոմսերի գնի աճին:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի զեկույցում հայտնաբերված մեկ այլ բացը բնապահպանական փորձաքննության անցկացման, ՇՄԱԳ հաշվետվությունների վերանայման և դրանց ճշգրտությունն ու հուսալիությունը հաստատելու պատշաճ կանոնակարգերի և հանրությանը հայտնի չափորոշիչների բացակայությունն էր: Հայաստանում ծրագիրն իրականացնողից օրենքով պահանջվում է տրամադրել համապարփակ ՇՄԱԳ, սակայն, Հայաստանի բնապահպանության նախարարությունը չունի ուղեցույցներ կամ ընթացակարգեր դրանց որակյալ գնահատման համար: Սևանա լճի վրա Ամուլսարի ծրագրի հնարավոր ազդեցության վերաբերյալ իշխանությունների դիրքորոշման փոփոխության շուրջ տարածայնությունները նշվում էին որպես դրա օրինակ:

Չեկույցում նշվում էր նաև, որ Հայաստանում չկա որևէ պետական մարմին, որը կարող է իրականացնել կամ կգնահատել ծախս-օգուտ անկախ վերլուծությունները առաջարկվող հանքերի ծրագրերի համար:<sup>88</sup> Այսպիսով, թեև Լիդիանը ներկայացրել է Ամուլսարի ծրագրի ակնկալվող տնտեսական օգուտների իր գնահատականը, զբոսաշրջության ներուժին և մարդկանց առողջությանը հասցվող վնասի, ինչպես նաև կենսաբազմազանության կորստի և ջրի աղտոտման ծախսերը չեն գնահատվել, ինչը զրկում է Հայաստանի իշխանությունների ծրագրի շուրջ հավասարակշռված որոշման գալուստ:

Չեկույցում նշված մեկ այլ բաց հանքարդյունաբերական ընկերությունների կողմից որոշում կայացնողների և համայնքների ղեկավարների վրա ազդելու հնարավորությունն էր, օրինակ՝ նրանց հետ փոխկապակցված հիմնադրամներում մեծ նվիրատվությունների տեսքով: Այսպես, համաձայն «Լույս» հիմնադրամի 2014 թվականի տարեկան հաշվետվության, Լիդիանի դուստր ձեռնարկություն «Գեոթիմը» հիմնադրամին նվիրաբերել է 121 925 000 դրամ (մոտ 256 000 ԱՄՆ դոլարին համարժեք):

84. Ministry of Environment, 26/10/2018, Protocols of Public Hearings regarding Amulsar mine project (in Armenian), URL (last checked on 27 January 2022): <http://www.mnp.am/shrjaka-mijavayr/hanrayin-qnnarkman-ardzanagrutyunner>

85. Armecofront.net, 06.12.2018, With 3000 signatures Jermuk community members petition the central and local government to ban metal mining in their territory and boost ecologically-friendly economy, URL (last checked on 27 January 2022): <https://armecofront.net/en/amulsar-2/with-3000-signatures-jermuk-community-members-petition-the-central-and-local-government-to-ban-metal-mining-in-their-territory-and-boost-ecologically-friendly-economy/>

86. Grigoryan, A., Movsisyan, H., Amirhanyan, A., 2017, Assessment of Corruption Risks in Granting Subsoil Use Permits (in Armenian), Transparency International Anticorruption Center NGO, URL (last checked 30 January 2022): <https://transparency.am/files/publications/1512041692-0-785589.pdf?v=4>

87. Grigoryan, A., 2017, The Amulsar Goldmine: Legal Issues and Biodiversity Offsets, Ecological Right (URL no longer working)

88. Avag Solutions, 2015, *op. cit.*

«Լույս» հիմնադրամի հիմնադիրներից էին այն ժամանակ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը և վարչապետ Տիգրան Սարգսյանը: Մեկ այլ՝ Ջերմուկ քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման աջակցության հիմնադրամի 2013-2014 թվականների հաշվետվության համաձայն, այն Գեոթիմից ստացել է շուրջ 56 359 123 դրամ (մոտ 120 000 ԱՄՆ դոլարին համարժեք): Հիմնադրամի ղեկավարն այն ժամանակ Ջերմուկի քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանի որդին՝ Գևորգ Հովհաննիսյանն էր:

Վերջապես, Թրանսփարենսի Ինթերնեշնլի զեկույցը մատնանշում է հանքարդյունաբերական ընկերությունների կողմից օրենսդրության և կարգավորող ակտերի վրա հնարավոր ազդեցությունը: Այս առումով, հարկ է նշել, որ 2015 թվականին հանքային ճանապարհների թեքահարթակների մասին Հայաստանի կանոնակարգի մեկ փոփոխությունը հանգեցրել էր Ամուլսարի ծրագրի համար շուրջ 100 միլիոն ԱՄՆ դոլարի խնայողության և Տորոնտոյի ֆոնդային բորսայում Լիդիանի բաժնետոմսերի աճին:<sup>89</sup>

## Գնդեվազի հողերի օտարումը

Գնդեվազ գյուղի վրա ամենակարևոր տնտեսական ազդեցություններից մեկը ծիրանի այգիների կորուստն էր ծրագրի ցիանային տարրավազման օբյեկտի կառուցման համար: 2020 թվականին՝ թավշյա հեղափոխությունից հետո, Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունները տեղեկատվության հարցումներ ուղարկեցին Գնդեվազում Ամուլսարի ծրագրի հողերի ձեռքբերման մանրամասների վերաբերյալ: Նրանց դիմումները ամրապնդվել են ԱԺ պատգամավորների պաշտոնական հարցումներով: 2006-2018 թվականներին Գնդեվազ համայնքում հողերի առուվաճառքի և աճուրդների վերաբերյալ Հայաստանի կադաստրի կոմիտեի կողմից պաշտոնական տեղեկատվություն տրամադրելուց հետո նոր մանրամասներ են ի հայտ եկել Ամուլսարի ծրագրի սեփականաշնորհման և հողի օտարման վերաբերյալ:<sup>90</sup>

Հայկական «Հետք» թերթի հետաքննող լրագրողները, վերլուծելով կադաստրի տվյալները պարզել են, որ Ամուլսարի ծրագրի կարիքների համար Լիդիանը ձեռք է բերել 278 հողակտոր (150 հա տարածքով) 145 հողատերերից և դրա համար վճարել է ավելի քան 2,8 միլիոն ԱՄՆ դոլար:<sup>91</sup> Սակայն պարզվում է, որ գումարի զգալի մասը բաժին է ընկել Գնդեվազի նախկին գյուղապետի ընտանիքին, ավագանու անդամներին, գյուղապետարանի աշխատակիցներին ու նրանց հարազատներին, և տեղական ինքնակառավարման այլ պաշտոնյաների: «Հետք»-ը պարզել է, որ պաշտոնյաները աճուրդի միջոցով էժան գնով ձեռք են բերել հողատարածքները, ապա վերավաճառել դրանք Լիդիանին շատ ավելի թանկ գնով:

Հայկական բնապահպանական ճակատի<sup>92</sup> հաշվարկների համաձայն՝ 22 հոգի ընկերության բյուջեից ստացել է 2,1 մլն ԱՄՆ դոլար՝ վաճառելով նախկինում աճուրդներով ձեռք բերված հողերը: Սա նշանակում է, որ Լիդիանի կողմից հողերի ձեռքբերման ժամանակ 145 հողատերերից 22-ը ստացել է ընկերության կողմից Գնդեվազում հողերի համար ծախսած բյուջեի մոտ 75 տոկոսը:

Այսպես, Գնդեվազի նախկին գյուղապետի ընտանիքը ստացել է մոտ 880 000 ԱՄՆ դոլար: Գնդեվազ համայնքի ղեկավար Հայրապետ Մկրտչյանը 2014 թվականի հունիսին աճուրդով 410 000 դրամով (մոտ 800 ԱՄՆ դոլար) սեփականաշնորհել է 10 հեկտար համայնքային հողատարածք որդու՝ Լայերտ Մկրտչյանի անունով: Ընդամենը մեկ տարի անց՝ 2015 թվականի հունիսին, նա այս հողատարածքը վաճառել է Լիդիանին 147 300 000 դրամով (մոտ 295 000 ԱՄՆ դոլար): Մկրտչյանների գործողությունների արդյունքում «Գնդեվազ համայնքին պատճառվել է 146 միլիոն դրամի (մոտ 294 000 ԱՄՆ դոլարին համարժեք) գույքային վնաս, համայնքի բյուջեն զրկվել է դրամական մուտքերից, համայնքի միջոցներն ուղղվել են անձնական շահերին, վարկաբեկվել է ինքնակառավարման մարմնի համբավը, արժեզրկվել են համայնքային ծառայության սկզբունքներն ու նպատակները»:<sup>93</sup>

89. Els, F., 09/04/2015, Lydian's shares pop after Armenia's \$100 million gift, URL (last visited on 31 January 2022): <https://www.mining.com/lydian-shares-pop-armenias-100m-gift/>

90. Hetq Investigative journalists, 30/01/2021, Who Privatized and Sold the Lands of Gndevaz (in Armenian), URL (last checked on 20 January 2022): <https://hetq.am/hy/article/126824> (English translation is available here: <https://armecofront.net/en/news/who-privatized-and-sold-gndevaz-land-areas/>)

91. *Ibid.*

92. Armenian Environmental Front, 03/03/2021 (FB post in Armenian), URL (last checked on 26 January 2022): <https://www.facebook.com/576753159031419/posts/5447195965320423/>

93. Datalex.am, 21/02/2020, Indictment for Layert and Hayrapet Mkrtchyan (in Armenian), URL (last checked 26 January 2022): [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=27303072741052046](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=27303072741052046)



Նիկոլ Փաշինյանի այցը Ամուլսարի «պոստեր», 2020. © CEE Bankwatch Network

## ԳԼՈՒԽ 4

# Ամուլսարը՝ որպես փորձություն Յայաստանի ժողովրդավարության համար

2018 թվականի թավյա հեղափոխությունը վերջ դրեց Լիդիան Ինթերնեյշնլի հարմարավետ հարաբերություններին Յայաստանի կառավարության հետ, սկսվեց ծրագրի երեք տարի տևած շրջափակումը: Ոգեշնչված Նիկոլ Փաշինյանի հեղափոխական շարժումից՝ 2018 թվականին տեղի ցուցարարները արգելափակեցին Լիդիանի մուտքը դեպի ծրագրի տարածք և կասեցրեցին Ամուլսարի հանքի շինարարությունը: Չորս տարի անց Ամուլսարի ծրագիրը դեռ կասեցված է, և այն փորձություն է դարձել նոր կառավարության համար՝ հաջողությամբ հավասարակշռելու ժողովրդավարական և մասնակցային որոշումների կայացումը հրատապ տնտեսական կարիքների հետ (հատկապես դիվանագիտական շրջանակների և ներդրողների կողմից լուրջ ճնշումներից և 2020 թվականի ռազմական հակամարտությունից հետո):<sup>94, 95</sup>

94. Angel, J., 13/08/2019, Corporate courts: the latest threat to democracy in Armenia, Open Democracy, URL (last accessed on 28 January 2022): <https://www.opendemocracy.net/en/odr/corporate-courts-latest-threat-democracy-armenia/>

95. Rowley, T., 13/07/2021, Britain's behind-the-scenes quest for Armenian Gold, Open Democracy, URL (last checked on 28 January 2022): <https://www.opendemocracy.net/en/odr/britains-behind-the-scenes-quest-for-armenian-gold/>

Տեղի ցուցարարների շրջափակման և նոր կառավարության կողմից ծրագրին աջակցելու դժկամության արդյունքում Լիդիան Ինթերնեյշնլի բաժնետոմսերի գինը տապալվեց՝ հանգեցնելով ընկերության սննկացմանը 2019 թվականին:<sup>96</sup> Ընկերությունը այնուհետև դիմել է Տորոնտոյի ֆոնդային բորսայից ապացուցակվելու և Կանադայի դատարանին իր պարտատերերից պաշտպանվելու համար<sup>97</sup>, և, հետևաբար, վերակառուցել է իր բիզնեսը և ֆինանսական կառուցվածքը: Ըստ ՎՉԵԲ-ի<sup>98</sup> որպես սնանկության վարույթի մաս ընդունվել է կորպորատիվ վերակառուցման ծրագիրը, որի արդյունքում ընկերության գործող խոշոր վարկատուները Լիդիան Կանադայում, Լիդիան Մեծ Բրիտանիայում և Լիդիան Արմենիայում ստանձնել են ակտիվների սեփականատերն ու վերահսկողությունը, մինչդեռ Լիդիան Ինթերնեյշնլը անցել է փակման վարույթի Ջերսիի դատարանում:

## Ամուլսարի ծրագրի ՇՄԱԳ-ի փորձաքննությունը Էլարդի կողմից

Թավշյա հեղափոխությունից հետո Ամուլսարի ոսկու հանքավայրի նախագիծը դարձավ պետական մարմինների և կառավարության պատվերով անկախ փորձագետների մի շարք ուսումնասիրությունների առարկա: 2018 թվականի մայիսին վարչապետ դառնալուց անմիջապես հետո Նիկոլ Փաշինյանը ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին հանձնարարեց հետաքննել երկրում հանքարդյունաբերական ընկերությունների գործունեությունը: Ամուլսարը եղել է ստուգման առաջնահերթ հանքերից մեկը:<sup>99</sup>

Մինչ տեսչական մարմինը պատրաստում էր Ամուլսարի վերաբերյալ իր զեկույցը, ՀՀ քննչական կոմիտեն 2018 թվականի հուլիսին քրեական գործ է հարուցել բնապահպանության նախարարության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ Ամուլսարի ոսկու հանքի շահագործման հետ կապված շրջակա միջավայրի աղտոտվածության մասին տեղեկությունները դիտավորյալ թաքցնելու համար:<sup>100</sup>

Հետաքննության շրջանակներում կոմիտեն լիբանանյան Էլարդ հետազոտական ընկերությանը պատվիրել է փորձաքննել Ամուլսարի հանքի ծրագրի ՇՄԱԳ-ը:<sup>101</sup> Էլարդը իր վերջնական զեկույցը ներկայացրել է Զննչական կոմիտեին 2019 թվականի օգոստոսին:<sup>102</sup> Չեկույցի եզրակացության մեջ ընդգծում էր Լիդիան Արմենիայի ՇՄԱԳ-ում տվյալների մի շարք բացթողումներ:<sup>103</sup> Այնուամենայնիվ, Զննչական կոմիտեն հայտարարեց, որ Ամուլսարի ծրագրի ռիսկերը կառավարելի են:<sup>104</sup>

Ելնելով Զննչական կոմիտեի զեկույցի մեկնաբանությունից, առ այն որ Ամուլսարի ոսկու հանքի հետ կապված ռիսկերը «կառավարելի» են և ծրագրի հետագա արգելափակման համար որևէ հիմնավորում չկա, վարչապետ Փաշինյանը հայտարարեց, որ Ամուլսարի ծրագիրը կվերսկսվի: Այս դիրքորոշումը հանրային ղգոհություն առաջացրեց Ամուլսարի քննադատների շրջանում, որոնց տեսակետները տարբերվում էին Զննչական կոմիտեի զեկույցի մեկնաբանությունից: Զաղաքացիական հասարակությունը սկսեց ճնշում գործադրել կառավարության վրա որոշումից հետո կանգնելու համար: Երևանում բողոքի ակցիաներից հետո, որտեղ ոստիկանությունը ուժ կիրառեց ցուցարարներին ցրելու համար<sup>105</sup>, վարչապետ Փաշինյանը հրապարակային Skype վիդեոգրանց նախաձեռնեց Էլարդի փորձագետների հետ, որտեղ կառավարության անդամները, Զննչական կոմիտեի և

96. *Simply Wall Street*, 2019, Some Lydian International (TSE:LYD) Shareholders Have Taken A Painful 87% Share Price Drop, Yahoo! News, URL (last accessed on 16 June 2022): [https://ph.news.yahoo.com/lydian-international-tse-lyd-shareholders-113915262.html?guccounter=1&guce\\_referrer=aHR0cHM6Ly9kdWVja2dvLmNvbS8&guce\\_referrer\\_sig=AQAAADN6ACBGs0APyG40IqTp ujtYLGpQ6hayM-C3gxgwFaww4NB0k42w3P2BDhBP5PPRKR8a32nzj5DCmWWtwf7M62wsRPXhjEqJm1ozsli9QRcGHjk5BeU3PE 81SsZymOICunajKHxpJTIQT1fIRPmVv9T9G5jrhMon9UqIMqBPU7](https://ph.news.yahoo.com/lydian-international-tse-lyd-shareholders-113915262.html?guccounter=1&guce_referrer=aHR0cHM6Ly9kdWVja2dvLmNvbS8&guce_referrer_sig=AQAAADN6ACBGs0APyG40IqTp ujtYLGpQ6hayM-C3gxgwFaww4NB0k42w3P2BDhBP5PPRKR8a32nzj5DCmWWtwf7M62wsRPXhjEqJm1ozsli9QRcGHjk5BeU3PE 81SsZymOICunajKHxpJTIQT1fIRPmVv9T9G5jrhMon9UqIMqBPU7)

97. Lydian Armenia, 30/01/2020, Restructuring Q&A, URL (last checked on 7 January 2022): <https://www.lydianarmenia.am/en/pages/restructuring-q&a/94/>

98. EBRD PSD, 2016, *op. cit.*

99. Environmental Protection and Mining Inspection Body, 24/08/2018, Act 30 on Inspections at “Lydian Armenia CJSC” (in Armenian), URL (last checked 26 January 2022): <https://hetq.am/static/content/pdf/Amulsar-stugman-akt.pdf>

100. Ecolur, 20/07/2018, Criminal Case: Official Concealed Information about Environmental Pollution in Amulsar Project Documentation, URL (last checked on 26 January 2022): <https://www.ecolur.org/en/news/amulsar/criminal-case-official-concealed-information-about-environmental-pollution-in-amulsar-project-documentation/10287/>

101. Martirosyan, S., 20/08/2019, Pashinyan meets with Amulsar opponents; Police arrest seven demonstrators, Hetq investigative journalists, URL (last checked 27 January 2022): <https://hetq.am/en/article/106558>

102. Investigative Committee of the Republic of Armenia, 14/08/2019, *Report on Complex Examination within Criminal Case on Willful Concealing of Information about Pollution of Environment Related to Exploitation of Amulsar Gold Mine*, URL (last checked on 26 January 2022): <http://investigative.am/en/news/view/amulsar-porcaqnnutyun-ezrakacutyun.html>

103. Investigative Committee of the Republic of Armenia, 22/07/2019, *ESIA Review*, ELARD & TRC, URL (last checked on 27 January 2022): <http://investigative.am/images/2019/lidian/porcaqnnutyun/amulsar11.pdf>

104. Badalian, S., 26/08/2019, Amulsar Mining Risks “Manageable”, Insists Top Investigator, URL (last checked on 27 January 2022): <https://www.azatutyun.am/a/30130026.html>

105. Martirosyan, S., 2019, *op. cit.*

Լիդիան Արմենիայի ներկայացուցիչները քննարկեցին Էլարդի զեկույցի մեկնաբանություններում անհամապատասխանությունները:<sup>106</sup>

## Ամուլսարի վերաբերյալ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի բացահայտումները

Ամուլսարի ՇՄԱԳ-ի վերաբերյալ Էլարդի զեկույցի հրապարակումից մեկ շաբաթ անց կառավարության բնապահպանության և ընդերքի տեսչական տեսչական մարմինը՝ հայտնի բնապահպան իրավաբան Արթուր Գրիգորյանի գլխավորությամբ, հրապարակեց Ամուլսարի հանքավայրի վերաբերյալ իր հաշվետվությունը:<sup>107</sup> Տեսչական մարմնի զեկույցը բացահայտել էր մի շարք խախտումներ և ապօրինի գործողություններ Ամուլսարի հանքի կառուցման ժամանակ:<sup>108</sup> Օրինակ, զեկույցում, ի թիվս այլ փաստերի, թվարկված են Լիդիանի կողմից հանքի թույլտվության պայմանները չկատարելը, ցիանիդային օբյեկտի բարձր կոնցենտրացիոն համար կապի ապօրինի արդյունահանումը, հողի ոչ պատշաճ օգտագործումը այլ նպատակներով, քան նշված է թույլտվության մեջ, 187,9 տոննա փոշու օդ բաց թողնելը և շինարարության արդյունքում փոշու արտանետումների մշտադիտարկման բացակայությունը:

Բացի այդ, տեսչական մարմնի աշխատանքներին աջակցող անկախ փորձագետների աշխատանքային խմբի կողմից Ամուլսարի տարածք կատարած այցի ընթացքում հայտնաբերվել են Հայաստանի Կարմիր գրքից երկու նոր բույս և հինգ նոր կենդանատեսակ, որոնք բացակայել են Ամուլսարի ՇՄԱԳ-ներում:<sup>109</sup>

Տեսչական մարմնի զեկույցում նախևառաջ առաջարկ է հղել Շրջակա միջավայրի նախարարությանը<sup>110</sup>՝ չեղյալ համարել 2016 թվականին նախարարության կողմից հաստատված Ամուլսարի ՇՄԱԳ-ի պետական փորձագիտական գնահատականը՝ ելնելով նոր ի հայտ եկած հանգամանքներից:<sup>111</sup> Երկրորդ՝ Լիդիանին՝ գերծ մնալ Ամուլսարի տարածքում որևէ գործունեություն իրականացնելուց, քանի դեռ Բնապահպանության նախարարությունը չի ուսումնասիրել այս նոր հանգամանքները: Բացի այդ տեսչական մարմինը նաև փաստաթղթեր է ներկայացրել Գլխավոր դատախազություն, որն էլ իր հերթին քրեական գործ է հարուցել Լիդիանի դեմ և գործը հանձնել Քննչական կոմիտեին:<sup>112</sup>

Այս կետում վարչապետ Փաշինյանը Շրջակա միջավայրի նախարարությանը հանձնարարեց մինչև 2019 թվականի սեպտեմբերի 4-ը վերջնական եզրակացություն տալ Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի համար նոր ՇՄԱԳ-ի անհրաժեշտության վերաբերյալ: Սեպտեմբերի 5-ին Շրջակա միջավայրի այն ժամանակվա նախարար Էրիկը Գրիգորյանը 13 կետից բաղկացած գրություն է ուղարկեց վարչապետի աշխատակազմ և Քննչական կոմիտե, որտեղ ներառված էին ԳԱԱ-ի կարծիքները, ինչպես նաև Էլարդի եզրակացությունները:<sup>113</sup> Նամակում նկարագրված էին Լիդիան Արմենիայի կողմից ներկայացված տվյալների բացթողումները և սխալները, և նշվում էր ՇՄԱԳ-ի ֆոնային ճառագայթման բաժնի վերագնահատման անհրաժեշտությունը՝ հիմնվելով Ամուլսարում 1952-1954թթ. ուրանի հետախուզումից հետո արված զեկույցի վրա:<sup>114</sup>

2018 թվականի նոյեմբերին Լիդիան Արմենիան դիմել է Վարչական դատարան՝ բողոքարկելով մինչև նոր հանգամանքների գնահատումը Ամուլսարում գործունեությունը դադարեցնելու մասին տեսչական մարմնի հրամանը: 2019 թվականի հոկտեմբերին դատարանը գտել էր, որ ենթադրյալ նոր հանգամանքները չեն հիմնավորվել: Ավելին, այն եզրակացրել է, որ Արթուր Գրիգորյանը, ով այլևս չէր ղեկավարում Տեսչական մարմինը, կողմնակալ է եղել Ամուլսարի հանքի ծրագրի դեմ՝

106. Panorama.am, 30/08/2019, Skype call with ELARD consultancy group raised new questions - Pashinyan, URL (last checked 28 January 2022): <https://www.panorama.am/en/news/2019/08/30/Skype-call/2159741>. Original source of the conference call at <https://www.youtube.com/watch?v=e4nhBD72UCs>

107. RA Environmental and Natural Resources Inspection Body, *Reports, Point 11, Report on Inspections in 2018* (in Armenian), URL (last checked on 28 January, 2022): <https://www.ecoinspect.am/reports/>

108. RA Environmental and Natural Resources Inspection Body, 24/08/2018, *Act-30 on Inspections at Lydian-Armenia C.JSC* (in Armenian), URL (last checked on 28 January 2022): <https://hetq.am/static/content/pdf/Amulsar-stugman-akt.pdf>

109. Ecolur, 17/09/2019, WWF-Armenia Statement on Amulsar to Armenian Government Demanding to Annul EIA Issued to Amulsar, URL (last accessed on 28 January 2022): <https://www.ecolur.org/en/news/mining/11553/>

110. 2019 թվականին ՀՀ բնապահպանության նախարարությունը անվանափոխվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության:

111. Ecolur.org, 27/08/2018, Press Release of the Inspection Body, URL (last checked on 28 January 2022): <https://www.ecolur.org/en/news/officials/-/10356/>

112. The Prosecutor General's Office of Armenia, Criminal case has been initiated by the company "Lidian Armenia" on the fact of possible illegal mining of minerals from Amulsar, URL (last checked on 28 January 2022): <https://www.prosecutor.am/en/mo/7225/>

113. Martirosyan, S., 18/09/2020, New Developments Around Amulsar Case: Why Is the Ministry of Environment Silent (in Armenian), Hetq Investigative Journalists, URL (last checked on 28 January 2022): <https://hetq.am/hy/article/121709>

114. Hetq Investigative Journalists, 05/09/2019, Letter by Minister of Environment Erik Grigoryan to the Staff of Prime Minister of the Republic of Armenia (in Armenian), URL (last checked on 28 January 2022): <https://bit.ly/3g223RC>

հաշվի առնելով նրա՝ ծրագրին դեմ լինելը մինչև նշանակումը՝ որպես տեսչական մարմնի ղեկավար:<sup>115</sup> Արձանագրությունները<sup>116</sup> հստակ ցույց են տալիս, որ, չնայած լուսնների մասին ծանուցված լինելուն, տեսչական մարմինը չի ներկայացրել իր որոշումը հիմնավորող որևէ փաստաթուղթ, և նրա ներկայացուցիչներից որևէ մեկը չի մասնակցել դատական նիստերին, ինչը վկայում է այն մասին, որ պետական մարմինները չեն ցանկացել վճռական դիրքորոշում ցուցաբերել ծրագրի հարցում:

Ի տարբերություն Լիդիանի բողոքի վրա հարուցված վերոհիշյալ դատական գործի ընթացքում տեսչական մարմնի անգործության, իշխանությունների ներկայացուցիչները ակտիվորեն մասնակցում էին քաղաքացիների հայցերով հարուցված դատական նիստերին՝ պաշտպանելու Ամուլսարի նախագծի վերաբերյալ նախկին ռեժիմի կայացրած որոշումները: Այսպես, Ջերմուկի և Գևորգյանի բնակիչները դատական հայցը, որը սկսել էր 2018թ. հոկտեմբերին՝ ընդդեմ բնապահպանության նախարարի՝ Ամուլսարի վերաբերյալ որոշման<sup>117</sup>, և որով հայցվորները դատարանից պահանջում էին պարտավորեցնել նախարարին չեղարկել Ամուլսարի փոփոխված ծրագրի դրական գնահատականը և չեղյալ համարել նախկին նախարարի՝ 2016 թվականի ապրիլի որոշումը<sup>118</sup>, մերժվել է դատարանի կողմից: 2021 թվականի հուլիսին Վարչական վերաքննիչ դատարանը չեղյալ է համարել Վարչական դատարանի որոշումը՝ պարտավորեցնելով վերաքննել գործը, որն այժմ գտնվում է ընթացքի մեջ:<sup>119</sup>

## Դիվանագիտական շրջանակների և ներդրողների ճնշումը<sup>120, 121</sup>

Ամուլսարի ոսկու հանքի նկատմամբ դիվանագիտական հետաքրքրությունը և աջակցությունն առաջին անգամ դրսևորեցին Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի դեսպանները, ովքեր այցելեցին ծրագրի տարածք 2013 թվականի հունիսին: Այդ ժամանակ Մեծ Բրիտանիայի դեսպան Զեթրին Լիչը ասաց, որ «Մեծ Բրիտանիայում տեղակայված Լիդիան Ինթերնեյշնլ ընկերությունը ներկայացնում է պոտենցիալ ամենամեծ բրիտանական ներդրումը Հայաստանում», և որ ներդրողների աջակցությունը, ինչպիսիք են ՄՖԿ-ն և ՎՇԵԲ-ը, կարող է երաշխավորել հանքարդյունաբերության ոլորտում ամենաբարձր միջազգային չափանիշները:<sup>122</sup> ԱՄՆ դեսպան Ջոն Յեթերնս ասաց, որ «ընկերության բաժնետերերից շատերը ԱՄՆ-ում են», և հույս հայտնեց ներդրողների և իր անունից, որ ծրագիրը կծառայի պատասխանատու հանքարդյունաբերության օրինակ՝ համահունչ միջազգային լավագույն փորձին:<sup>123</sup>

Երեւանում ՄԹ դեսպանատան Էլեկտրոնային սամակագրությունը, որը ձեռք է բերվել openDemocracy-ի կողմից Տեղեկատվության ազատության ակտի համաձայն, ցույց է տալիս, որ 2013 թվականին Միացյալ Թագավորության արտաքին գերատեսչությունն աջակցել է Լիդիանին<sup>124</sup>՝ լուծելու Հայաստանի կառավարության հետ վեճը: Այն ժամանակ Լիդիանը հետաձգել էր Ամուլսարի ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունը և բնապահպանական թույլտվությունը՝ կապված Սևանա լճի ջրհավաք ավազանում օգտակար հանածոների վերամշակման նոր սահմանափակումների հետ: Այս բացահայտումը փաստում է Միացյալ Թագավորության դեսպանատան և Լիդիանի միջև մի շարք հանդիպումների մասին, ինչպես նաև դեսպանատան պաշտոնյայի խոստման մասին՝ հարցը քննարկելու Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ:

Չնայած ծրագրի աճող մարտահրավերներին և քննադատությանը, ծրագրին դիվանագիտական աջակցությունը շարունակվել է Ամուլսար կատարած տարբեր այցելություններով և Երևանում պատասխանատու հանքարդյունաբերությանը նվիրված միջոցառումներով: 2015 թվականին Հայաստանի վարչապետ Յովիկ Աբրահամյանի և Էներգետիկայի նախարար Երվանդ Չախարյանի

115. Datalex.am, 15/10/2019, *Case for Annulment of 27.08.2018 30-A Decision* (in Armenian), URL (last checked on 29 January 2022): [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809928532](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809928532)

116. *Ibid.*

117. Datalex.am, 04/10/2018, *Demand to annul the positive opinion No BP 35 for the amended mine project in Amulsar and its approval by the Minister on April 29, 2016* (in Armenian), URL (last checked on 29 January 2020): [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809927036](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809927036)

118. Ecolur, 15/01/2019, *Barrister: Nature Protection Ministry Tries to Put Court Proceedings on Amulsar in Deadlock*, URL (last visited on 31 January 2022): <https://www.ecolur.org/en/news/mining/10735/>

119. Ecolur.org, 09/07/2021, *Administrative Appeal Court Upheld Appeal Complaint on Amulsar*, URL (last checked on 29 January 2022): <https://www.ecolur.org/en/news/mining/13302/>

120. Angel, J., 13/08/2019, *Corporate courts: the latest threat to democracy in Armenia*, Open Democracy, URL (last accessed on 28 January 2022): <https://www.opendemocracy.net/en/odr/corporate-courts-latest-threat-democracy-armenia/>

121. Rowley, T., 13/07/2021, *Britain's behind-the-scenes quest for Armenian Gold*, Open Democracy, URL (last checked on 28 January 2022): <https://www.opendemocracy.net/en/odr/britains-behind-the-scenes-quest-for-armenian-gold/>

122. Ecolur, 28/07/2018, *Ambassadors of UK and US in Armenia to visit Amulsar*, URL (last checked on 15 April 2022): <https://www.ecolur.org/en/news/mining/ambassadors-of-uk-k-and-usa-in-armenia-to-visit-amulsar/5015/>

123. *Ibid.*

124. Rowley, T., 22/06/2020, *Emails underscore UK role in Armenian mining dispute*, openDemocracy, URL (last seen on 15 April 2022): <https://www.opendemocracy.net/en/odr/emails-underscore-uk-role-armenian-mining-dispute-amulsar/>

հետ<sup>125</sup> հանքավայր այցի ժամանակ ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսը նշել է, որ «ԱՄՆ-ն մեծապես գնահատում է Հայաստանի հետ իր տնտեսական կապերի խորացումը և գնահատում է կառավարության բիզնես միջավայրի բարելավման ուղղությամբ ստանձնած պարտավորությունները»:

Միացյալ Թագավորության և ԱՄՆ դեսպանները ներկա էին նաև 2016 թվականին Ամուլսարի հիմնարկի արարողությանը՝ գնահատելով այն որպես պատասխանատու հանքարդյունաբերության ծրագիր, որը օգուտ է բերում տեղական համայնքներին և զգալի տնտեսական շահույթ է բերում Հայաստանին:<sup>126</sup> 2018 թվականին Միացյալ Թագավորությունը արհամարհեց Ամուլսարի քննադատներին և բնապահպանական մտահոգությունները՝ ասելով, որ հանքարդյունաբերության և բնապահպանների միջև լարվածությունը «նոր բան չէ և, հավանաբար, երբեք չի փոխվի, բայց ընկերություններին և երկրներին անհրաժեշտ է առաջընթաց»:<sup>127</sup>

OpenDemocracy-ի կողմից ձեռք բերված գրառումները ցույց են տալիս, որ 2013-ից 2018 թվականներին Երևանում Միացյալ Թագավորության դեսպանատան աշխատակիցները կանոնավոր կապի մեջ են եղել Լիդիան Ինթերնեյշնլի հետ՝ կազմակերպելով շնորհանդեսներ, սեմինարներ, հանդիպումներ, աշխատանքային խմբեր և ծրագրերի թարմացումներ:<sup>128</sup> Հիշարժան է, որ արձանագրություններում թվարկված են ընկերության և դեսպանատան միջև 55 շփումներ 2018 թվականի հունվար-հուլիս ամիսներին, որոնք համընկնում էին թավշյա հեղափոխության հետ, երբ ցուցարարները սկսել էին արգելափակել ընկերության մուտքը ծրագրի տարածք և մեկնարկ էր տրվել Ամուլսարի մի քանի աուդիտների և ստուգումների:

Ի պատասխան այս բացահայտումներին՝ Միացյալ Թագավորության դեսպանատունը ցածրացրեց իր դերը և հրաժարվեց «առօրյա» որակել Ամուլսարի ծրագրի վերաբերյալ Հայաստանի կառավարության հետ շփումները:<sup>129</sup>

2019 թվականի մարտին Լիդիանը ծանուցեց Հայաստանի կառավարությանը վեճերի կարգավորման գործընթաց սկսելու վերաբերյալ՝ Միացյալ Թագավորության և Կանադայի հետ երկու ներդրումային պայմանագրերի համաձայն:<sup>130</sup> Այս ծանուցումը ենթադրում է վարույթ սկսել ներդրող պետության կողմից վեճի կարգավորման համար, ընդ որում Լիդիանը փոխհատուցում է պահանջում է Ամուլսարի շրջափակման պատճառած վնասների համար: Այնուամենայնիվ, երեք տարի անց ընկերությունը չի դիմում այս տարբերակին՝ դեռևս ակնկալելով կամ վաճառել ակտիվը, կամ համաձայնության գալ Հայաստանի կառավարության հետ՝ վերսկսելու ծրագրի շահագործումը:

## Վերջին զարգացումները

2021 թվականի նոյեմբերին կայացած նիստում ՀՀ կառավարությունը հաստատել է գործողությունների հնգամյա ծրագիր: 2021-2026 թվականներին 7-ից 9 տոկոս տնտեսական աճ ապահովելու համար նախատեսված միջոցառումների թվում է Ամուլսարի հանքավայրի շահագործումը:<sup>131</sup> Էկոնոմիկայի նախարարությանն ուղղված լրատվամիջոցների հարցման համաձայն՝ Ամուլսարի հանքավայրի շինարարության վերսկսումը նախատեսվում է 2022 թվականին, մինչդեռ հանքի շահագործման փուլը նախատեսվում է սկսել 2022 թվականի վերջին կամ 2023 թվականի սկզբին: Ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա գնահատվում է 1,4-ից 2 տոկոս:<sup>132</sup>

Քննչական կոմիտեն 2021 թվականի դեկտեմբերի 21-ին հրապարակել է քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը՝ հիմնավորելով, որ «Ձեռք չեն բերվել փաստական տվյալներ, որ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի հանքարդյունահանման համալիրի աշխատանքային նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդե-

125. US Embassy, Ambassador Richard Mills Remarks during visit to Lydian International's Amulsar Site and Community Development Projects, URL (last visited on 15 April): <https://am.usembassy.gov/lydian-internationals-amulsar-site/>

126. Mediamax, 19/08/2016, Amulsar project launched in Armenia, URL (last seen on 15 April 2022): <https://mediamax.am/en/news/society/19565/>

127. Banks.am, 19/02/2018, Mark Pritchard: UK business presence will expand in Armenia, URL (last seen on 15 April 2022): <https://banks.am/en/news/interviews/15093>

128. Rowley, T., 02/09/2019, UK Foreign Office criticised for supporting controversial gold mine in Armenia, openDemocracy, URL (last seen on 15 April): <https://www.opendemocracy.net/en/odr/uk-foreign-office-criticised-over-controversial-gold-mine-armenia-amulsar/>

129. Rowley, T., 05/05/2020, Armenia 'under pressure' from UK and US over mining dispute, says EU report, URL (last seen on 15 April 2022): <https://www.opendemocracy.net/en/odr/armenia-under-pressure-from-uk-and-us-over-mining-dispute-says-eu-report/>

130. Angel, J., 13/08/2019, Corporate courts: the latest threat to democracy in Armenia, openDemocracy, URL (last visited on 15 April 2022): <https://www.opendemocracy.net/en/odr/corporate-courts-latest-threat-democracy-armenia/>

131. E-gov.am, 18/11/2021, Government's Decisions (in Armenian), URL (last checked on 28 January 2022): <https://www.e-gov.am/gov-decrees/item/37300/>

132. Harutyunyan, G., 22/12/2021, Amulsar again on top of Agenda: New Dates for Operation are Set (in Armenian), URL (last checked on 28 January 2022): <https://ampop.am/amulsar-mine-is-in-the-spotlight-again/>

ցության գնահատման հաշվետվություն կազմելիս, հաշվետվությունը փորձաքննության ենթարկելիս, հանքավայրի շահագործման թույլտվությունը տրամադրելիս կատարվել են հանցավոր արարքներ»:<sup>133</sup>

2022 թվականի հունվարին Լիդիան Արմենիան դիմել է Շրջակա միջավայրի նախարարություն՝ Ամուլսարի ոսկու հանքի համար Արփա գետից վայրկյանում 41,3 լիտր արդյունաբերական օգտագործման նպատակով ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար:<sup>134</sup> Հարցումը ներկայումս սպասման փուլում է: 2021 թվականին նման մեկ այլ հայց նախարարությունը մերժել է<sup>135</sup>, թեև 2020 թվականին ընկերությունը ստացել է Արփա գետից վայրկյանում 11 լիտր ջրի օգտագործման թույլտվություն:

---

133. Investigative Committee of the Republic of Armenia, 21/12/2021, *Proceeding of Criminal Case Terminated*, URL (last checked on 28 January 2022): <https://www.investigative.am/en/news/view/amulsar-karchum.html>

134. Ministry of Nature Protection, 18/01/2022, *Public Notice on the Case of Water Permit for Lydian CJSC* (in Armenian), URL (last checked on 28 January 2022): <http://www.mnp.am/announcement/category-1/announcement-18-01-2022-lidian-pby>, Info in English: <https://www.ecolur.org/en/news/amulsar/13720/>

135. Armenpress.am, 25/03/2021, Environment Ministry Rejects Lydian Armenia's Request for More Water Use from Arpa River, URL (last checked on 28 January 2022): <https://armenpress.am/eng/news/1047133.html>





Ֆոկուս-խմբային քննարկում, FIDH առաքելությունը Ամուլսար, 2019 © Narek Aleksanyan

## ԳԼՈՒԽ 5

### Մարդու իրավունքները և Ամուլսարի ոսկու հանքի վերաբերյալ որոշումների կայացման իրավական դաշտը

Հայաստանում Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործումը բարձրացնում է մարդու իրավունքների բազմաթիվ խնդիրներ ազդակիր անհատների, համայնքների և շահագրգիռ կողմերի համար: Պետությունը և Ամուլսարի ծրագրի խթանողները, ներառյալ Լիդիանը և Ներդրողները, ինչպիսիք են ՄՖԿ-ն և ՎՉԵԲ-ը, պարտավոր են պաշտպանել, հարգել և կատարել այդ իրավունքները, ինչպես նաև փոխհատուցել ծրագրի ցանկացած բացասական ազդեցությունը նրանց վրա: Այս գլուխը ներկայացնում է Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման հետ կապված միջազգային և ազգային իրավական դաշտը: Այն նաև վկայում է Լիդիանի և Հայաստանի կողմից մարդու իրավունքների ոտնահարումների

մասին՝ ինչպես 2018 թվականի թավշյա հեղափոխությունից առաջ, այնպես էլ դրանից հետո: Այն ավարտվում է՝ քննարկելով հիմնական ներդրողների՝ ՄՖԿ-ի և ՎՉԵԲ-ի կողմից մարդու իրավունքների երաշխիքները կատարելու ձախողումը:

## 5.1. Հայաստանը և մարդու իրավունքների միջազգային պայմանագրերը

Հայաստանը Եվրոպայի խորհրդի (ԵԽ) և Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) անդամ երկիր է: Մարդու իրավունքների մի շարք միջազգային պայմանագրերի ստորագրման և վավերացման արդյունքում երկիրը տարածաշրջանային և միջազգային մակարդակներում պարտավորություններ ունի հարգելու, պաշտպանելու և իրականացնելու մարդու իրավունքները: Օրինակ՝ 1993 թվականին Հայաստանը վավերացրել է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՏՍՄԻՄԴ) և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ)՝ ՔՔԻՄԴ-ի կամընտիր արձանագրության հետ միասին:<sup>136</sup> 2020 թվականի հոկտեմբերին Հայաստանը նաև վավերացրել է ՏՍՄԻՄԴ-ի կամընտիր արձանագրությունը<sup>137</sup>, որը թույլ է տալիս մարդու իրավունքների ոտնահարման գոհերին բողոքներ ներկայացնել միջազգային մակարդակով, եթե նրանք չեն կարող օգտվել արդարադատությունից հայաստանյան դատարաններում:

Ինչ վերաբերում է ՏՍՄԻՄԴ-ին, ապա հարկ է նշել «Թիվ 24 Ընդհանուր մեկնաբանությունը ՏՍՄԻՄԴ-ի շրջանակներում պետական պարտավորությունների վերաբերյալ բիզնես գործունեության համատեքստում» (ԸՄ 24), որը հրապարակվել է Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի (ՏՍՄԻԿ) կողմից: ԸՄ 24-ը պարզաբանում է ՏՍՄԻՄԴ-ի մասնակից պետությունների պարտականությունները բիզնես գործունեության համատեքստում՝ նպատակ ունենալով կանխել և լուծել բիզնես գործունեության բացասական ազդեցությունը մարդու իրավունքների վրա: 2001 թվականին Հայաստանը ստորագրել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ) և հետևաբար ենթակա է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավասությանը:<sup>138</sup> Երկրում մարդու իրավունքների քաղաքականությունն ու գործելակերպը վերահսկվում է նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի կողմից:

Հայաստանը նաև վավերացրել է Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան<sup>139</sup>, թեև չի լիազորել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեին կոլեկտիվ բողոքներ ստանալ իր դեմ: Սոցիալական խարտիայի կողմից պաշտպանված իրավունքների մեծ մասը կարող է բնութագրվել որպես աշխատանքային և սոցիալական ապահովության իրավունքներ, ներառյալ՝ անվտանգ և առողջ աշխատանքային պայմանների իրավունքը, կազմակերպություններում ազատ միավորվելու իրավունքը՝ պաշտպանելու սեփական տնտեսական և սոցիալական շահերը, և կոլեկտիվ բանակցությունների իրավունքը:

Մարդու իրավունքների միջազգային պայմանագրերով Հայաստանի ստանձնած պարտավորություններն արտացոլված են երկրի ազգային իրավական դաշտում: Այս առումով, Հայաստանի Սահմանադրության 6-րդ հոդվածը սահմանում է, որ այն դեպքերում, երբ կան իրավական որևէ ոլորտի նորմերը կարգավորող միջազգային պայմանագրեր, պայմանագրերի նորմերը գերակայում են ազգային օրենսդրությանը:<sup>140</sup> Սահմանադրությանը հակասող ոչ մի պայմանագիր չի վավերացվում:

## 5.2. Բիզնեսի և մարդու իրավունքների միջազգային շրջանակը

Պետությունների և ձեռնարկությունների, այդ թվում՝ ներդրողների պարտավորությունները վերահաստատվել են նաև հեղինակավոր փափուկ իրավունքի փաստաթղթերով, հատկապես՝ Մարդու իրավունքների վրա բիզնեսի ազդեցության մասին ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքներով, որը միաձայն ընդունվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից 2011 թվականին:<sup>141</sup> ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ, պրոֆեսոր Ջոն Ռաջիի<sup>142</sup> հեղինակած այս սկզբունքներն

136. *Ibid.*

137. Armenia ratified the International Covenant on Civil, Political, Social and Cultural Rights in 1993, according to the UN Treaty Body Database: [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/TreatyBodyExternal/Treaty.aspx?CountryID=8&Lang=EN](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/TreatyBodyExternal/Treaty.aspx?CountryID=8&Lang=EN)

138. Council of Europe, Database for Signatures and Ratifications, URL: <https://www.coe.int/en/web/conventions/recent-changes-for-treaties>

139. *Ibid.*

140. Constitution of the Republic of Armenia, URL (last accessed on 28 January 2022): <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1&lang=eng>

141. The *UN Guiding Principles* have been endorsed by the Human Rights Council of the UN with Resolution n. 17/4, 16 June 2011. The English text of the *UN Guiding Principles on BHR* is available at [http://www.ohchr.org/Documents/Publications/GuidingPrinciplesBusinessHR\\_EN.pdf](http://www.ohchr.org/Documents/Publications/GuidingPrinciplesBusinessHR_EN.pdf)

142. UN HRC Council, Resolution n. HRC/RES/17/14.

առաջարկում են միասնական շրջանակ տնտեսական խաղացողների կողմից մարդու իրավունքների ոտնահարման համար պատասխանատվության հարցում, որոնք նախկինում մասնատված էին մի շարք միջազգային իրավական փաստաթղթերի միջոցով՝ ինչպես պարտադիր, այնպես էլ ոչ պարտադիր: Առաջնորդող այս սկզբունքները հիմնված են երեք սյուների վրա, որոնք կազմում են «պաշտպանել, հարգել և փոխհատուցել» շրջանակը՝ պետության պարտականությունը՝ պաշտպանել մարդու իրավունքները, կորպորատիվ պատասխանատվությունը՝ հարգել մարդու իրավունքները և տուժած անհատների և համայնքների՝ բացասական ազդեցությունների դեպքում միջոցներ փոխհատուցելու անհրաժեշտությունը:

Առաջին հենասյունի համաձայն, ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքներն ամփոփում և կազմակերպում են միջազգային իրավունքի ներքո գործող պարտավորությունները, որոնք վերապահված են պետություններին՝ պաշտպանելու մարդու իրավունքները բիզնես ձեռնարկությունների կողմից կատարված չարաշահումներից: Մասնավորապես, 1-ին սկզբունքը սահմանում է, որ «Պետությունները պետք է պաշտպանեն մարդու իրավունքների չարաշահումից իրենց տարածքում և/կամ իրավագործության շրջանակում երրորդ կողմերի, այդ թվում՝ բիզնես ձեռնարկությունների կողմից»: Սա պահանջում է համապատասխան քայլեր ձեռնարկել՝ կանխելու, հետաքննելու, պատժելու և փոխհատուցելու նման չարաշահումները արդյունավետ քաղաքականության, օրենսդրության, կանոնակարգերի և դատավճիռների միջոցով»:

### Մարդու իրավունքները պաշտպանելու պետության երկակի պարտավորությունը

Այս համատեքստում պետությունները երկակի պարտավորություն ունեն. Մի կողմից կա բացասական պարտավորություն՝ զերծ մնալու այդ իրավունքի ոտնահարումից: Մյուս կողմից, ինչպես դոկտորինս ու նախադեպային իրավունքը բազմիցս նշել են, պետությունները դրական պարտավորություն ունեն ընդունելու բոլոր ողջամիտ միջոցները՝ ապահովելու մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը և իրականացումը:<sup>143</sup>

Պետության դրական պարտավորությունը բաղկացած է երկու տարրից՝ մեկը բովանդակային, մյուսը՝ ընթացակարգային: Բովանդակային տեսակետից պետությունը պետք է ձեռնարկի բոլոր միջոցները՝ լինի դա կարգավորող, օրենսդրական կամ վարչական, որոնք անհրաժեշտ են մարդու իրավունքների խախտումից խուսափելու համար, այդ թվում՝ երրորդ անձանց վարքագծից: Ընթացակարգային տեսակետից պետությունը պարտավոր է պատժել այն վարքագիծը, որը բացասաբար է անդրադառնում մարդու իրավունքների իրացման վրա և խախտման դեպքում ապահովել արդյունավետ պաշտպանության միջոցների հասանելիություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը բազմիցս ցուցադրել է, որ պաշտպանելու պարտականությունը չափվում է հստակ ձևորով, և որ պետությունը պետք է երաշխավորի օրենքով սահմանված պաշտպանության արդյունավետ ապահովումը:<sup>144</sup>

Ավելին, Դատարանը նաև նշել է, որ ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածով ճանաչված դրական պարտավորությունը մեծապես կիրառվում է վտանգավոր գործունեության կարգավորման հետ կապված գործերում, որոնց համար պետությունը պարտավոր է ձեռնարկել հատկապես խիստ և պատշաճ միջոցներ:<sup>145</sup> Ի վերջո, պետական կառույցների կողմից որոշումների կայացումը պետք է նպատակաուղղված լինի նվազագույնի հասցնել նման գործունեության ազդակիր անձանց մարդու իրավունքների, օրինակ՝ կյանքի և առողջության համար ռիսկի մակարդակը, և քաղաքացիներին տրամադրել համապատասխան տեղեկատվություն նրանց առողջության հետ կապված ռիսկերի մասին:

### Մարդու իրավունքների հանդեպ հարգանքը բիզնեսի կողմից

Բիզնես ձեռնարկությունները պարտավոր են հարգել մարդու իրավունքները՝ անկախ պետական մարմինների վրա դրված պատասխանատվությունից: Այս պատասխանատվությունը վերահաստատվել է և՛ Մարդու իրավունքների վրա բիզնեսի ազդեցության մասին ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքներով, և՛ Բազմազգ ձեռնարկությունների համար ՏՀԶԿ-ի ուղեցույց-ներով:<sup>146</sup>

Առաջնորդող սկզբունքները հաստատում են ձեռնարկությունների, ներառյալ ներդրողների անկախ պատասխանատվությունը՝ հարգելու մարդու իրավունքները և գործելու «պատշաճ ջանասիրու-

143. ECtHR, *LCB c. UK*, 9 June 1998.

144. Augenstein, D., 2011, *State Responsibilities to Regulate and Adjudicate Corporate Activities under the European Convention on Human Right*, URL (last checked on 15 April 2022): <https://media.business-humanrights.org/media/documents/9b7d88557de08aa2aad4d2b2428d4abcd0f1b35c.pdf>

145. ECtHR, *Oneriyildiz c. Turkey*, Section 89, 30 November 2004.

146. OECD, 2011, *The OECD Guidelines on Multinational Companies*, URL (last accessed on 28 January 2022): <http://mneguidelines.oecd.org/guidelines/>

թյամբ»:<sup>147</sup> Առաջնորդող սկզբունքները հաստատում են ձեռնարկությունների, ներառյալ ներդրողների անկախ պատասխանատվությունը՝ հարգելու մարդու իրավունքները և գործելու «պատշաճ ջանասիրությամբ»:

### 5.3. Միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները

Վերոհիշյալ միջազգային պայմանագրերում թվարկվում են մարդու տարբեր իրավունքներ, որոնք պետք է պաշտպանեն պետությունները, ինչպիսին Հայաստանն է, բիզնեսները, ինչպիսին է Լիդիանը և ներդրողները, ինչպիսին ՎՉԵԲ-ն է: Մինչ Ամուլսարի ոսկու հանքի շուրջ մարդու իրավունքների խախտումների ուսումնասիրությունը, անհրաժեշտ է դիտարկել, թե ինչպես են այս իրավունքները պաշտպանվում միջազգային և ազգային օրենսդրության մեջ:

#### Կյանքի իրավունք

Կյանքի իրավունքը վերջնական անօտարելի հիմնական իրավունք է, առանց որի ցանկացած այլ իրավունք պարզապես «պատրանքային» կլիներ:<sup>148</sup> Այս իրավունքը պաշտպանված է մարդու իրավունքների բոլոր միջազգային պայմանագրերով և ազգային սահմանադրական իրավունքով: Կյանքի իրավունքը հստակորեն պաշտպանված է ԶԶԻՄԴ-ի 6-րդ հոդվածով, որտեղ ասվում է. «Յուրաքանչյուր մարդ ունի կյանքի բնածին իրավունք: Այս իրավունքը պաշտպանված է օրենքով: Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր կյանքից»: Ավելին, կյանքի իրավունքը պաշտպանված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով և Հայաստանի սահմանադրության 24-րդ հոդվածով<sup>149</sup>, որտեղ ասվում է. «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից»:<sup>150</sup>

#### Առողջության իրավունք

Ազգային մակարդակում առողջության իրավունքը երաշխավորված է Հայաստանի Սահմանադրության 32-րդ հոդվածով, ինչպես նաև համապատասխան ազգային օրենսդրությամբ: Եվրախորհրդի համատեքստում ՄԻԵԿ-ում հատուկ նշված չէ առողջության իրավունքը: Այնուամենայնիվ, այն պաշտպանված է Դատարանի կողմից Կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածների մեկնաբանման միջոցով (համապատասխանաբար խոշտանգումներից և անմարդկային վերաբերմունքից զերծ մնալու իրավունք և գաղտնիության իրավունք):<sup>151, 152</sup>

Առողջության իրավունքը պաշտպանված է ՏՄԻՄԴ-ի 12-րդ հոդվածով:<sup>153</sup> ՏՄԻԿ-ը նաև պարզաբանել է, որ փաստաթղթի 12-րդ հոդվածը պետք է դիտարկել առողջության վրա ազդող գործոնների համատեքստում, ինչպիսիք են օրինակ «անվտանգ և խմելու ջրի հասանելիությունը և համապատասխան սանիտարահիգիենիկ պայմանները, անվտանգ սննդի, սնուցման տրամադրումը, բնակարանային ապահովումը, առողջ աշխատանքային և բնապահպանական պայմանները, առողջության հետ կապված կրթության և տեղեկատվության հասանելիությունը, այդ թվում՝ սեռական և վերարտադրողական առողջության վերաբերյալ»:

Կարևոր է նաև ընդգծել, որ միջազգային իրավունքով ճանաչված առողջության իրավունքը ներառում է պետության պարտավորությունը՝ կանխելու և նվազեցնելու «բնակչության վրա վնասակար նյութերի ազդեցությունը, ինչպիսիք են ճառագայթումը և վնասակար քիմիական նյութերը կամ շրջակա միջավայրի այլ վնասակար պայմանները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են մարդու առողջության վրա»:<sup>154</sup>

147. UNGPs, *Principles* # 11–14 (*op. cit.*) and Chapter IV of the *OECD Guidelines* (*op. cit.*)

148. ECtHR, *McCann and others v. the United Kingdom*, 27 September 1995, *Pretty v the United Kingdom*, 29 April 2002.

149. European Convention on Human Rights, Art. 2.

150. Constitution of the Republic of Armenia, Art. 24, URL: <https://www.president.am/en/constitution-2015/>

151. ECtHR, 2021, *Guide on Article 8 of the European Convention on Human Rights. Right to respect for private and family life, home and correspondence*, Council of Europe, URL (last accessed on 28 January): [https://www.echr.coe.int/documents/guide\\_art\\_8\\_eng.pdf](https://www.echr.coe.int/documents/guide_art_8_eng.pdf)

152. ECtHR, 2017, *Thematic Report. Health-related issues in the case-law of the European Court of Human Rights*, Council of Europe, URL (last accessed on 28 January): [http://www.antonioacasella.eu/salute/ECHR\\_health\\_2015.pdf](http://www.antonioacasella.eu/salute/ECHR_health_2015.pdf)

153. UN ESCR Committee, General Comment n. 14.

154. *Ibid.*

## Ջրի իրավունք<sup>155</sup>

2002 թվականին ՏՄՄԿ-ն ընդունեց իր թիվ 15 ընդհանուր մեկնաբանությունը ջրի իրավունքի վերաբերյալ, որը սահմանվում է որպես յուրաքանչյուրի իրավունք՝ «անձնական և կենցաղային օգտագործման համար բավարար, անվտանգ, ընդունելի, ֆիզիկապես հասանելի և մատչելի ջրի իրավունք»: 2006 թվականին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ենթահանձնաժողովը ընդունել է խմելու ջրի և սանիտարական իրավունքի իրացման ուղեցույցներ: Հիշեցնելով Կոմիտեի մեկնաբանությունը ջրի իրավունքի վերաբերյալ՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 2010 թվականին ընդունեց բանաձև, որը պաշտոնապես «ճանաչում է անվտանգ և մաքուր խմելու ջրի և սանիտարական պայմանների իրավունքը որպես մարդու իրավունք, որն Էական է կյանքից և մարդու բոլոր իրավունքներից լիարժեք օգտվելու համար»: Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն նաև անդրադարձել և մշակել է հատուկ աշխատություն՝ կապված ջրի իրավունքի խթանման և պաշտպանության հետ, օրինակ՝ դիտարկելով խմելու ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների հասանելիությունը բնակարանային իրավունքից օգտվելու համատեքստում: <sup>156</sup>

## Առողջ միջավայրի իրավունք

Առողջ միջավայրում ապրելու իրավունքը սերտորեն կապված է ՏՄՄԿ-ի 12-րդ հոդվածով երաշխավորված առողջության իրավունքի հետ: Բնապահպանական խնդիրների սաստկացումը ստիպել է ՄԱԿ-ին հաճախակի վերադառնալ այս թեմային, և 1990 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունել է բանաձև, որը ճանաչում է բոլոր մարդկանց իրավունքը՝ ապրելու այնպիսի միջավայրում, որը պատշաճ է նրանց առողջության և բարեկեցության համար: <sup>157</sup> Բացի այդ, շրջակա միջավայրի պաշտպանությունը և աղտոտող արտանետումների կարգավորումը սահմանվում է միջազգային այլ կանոնակարգերով, ինչպիսիք են ՄԱԿ-ի Մարդկային միջավայրի մասին հռչակագիրը և շրջակա միջավայրի և զարգացման մասին Ռիոյի հռչակագիրը: <sup>158, 159</sup>

Վերջերս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների և շրջակա միջավայրի հարցերով նախկին հատուկ զեկուցող, պրոֆեսոր Ջոն Լոքսը իրապարակել է զեկույց, որը պարունակում է 16 «շրջանակային սկզբունքներ», որոնք վերաբերում են միջազգային իրավունքում մարդու իրավունքների և շրջակա միջավայրի փոխհարաբերություններին՝ կոչ անելով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային ճանաչել առողջ միջավայրում ապրելու իրավունքը՝ որպես մարդու միջազգային իրավունք: <sup>160</sup> 2021 թվականի հոկտեմբերին Մարդու իրավունքների խորհուրդը 48/13 <sup>161</sup> բանաձևով առաջին անգամ ճանաչեց, որ մաքուր, առողջ և կայուն միջավայր ունենալը մարդու իրավունք է: Խորհուրդը կոչ է արել պետություններին աշխատել միասին և այլ գործընկերների հետ՝ իրականացնելու այս նոր ճանաչված իրավունքը: Բանաձևը փոխանցվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային՝ հետագա քննարկման համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքով ճանաչել է անդամ պետությունների քաղաքացիների իրավունքը՝ ապրելու առողջ միջավայրում, ինչպես սահմանված և պաշտպանված է ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով, որն ամրագրում է անհատների՝ անձնական և ընտանեկան կյանքի հանդեպ հարգանքի իրավունքը:

## Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ

Ի հավելումս վերը նշվածի՝ 1993 թվականին Հայաստանի կողմից վավերացված ԶԶԻՄԴ-ն <sup>162</sup> պետությանը պարտավորություններ է սահմանում պաշտպանելու և հարգելու որոշակի իրավունքներ և երկրի տարածքում և/կամ իր իրավասության տակ գտնվող մարդկանց շնորհում է հետևյալ իրավունքները, ի թիվս այլոց.

155. UN OHCHR, 2010, *The Right to Water. Fact Sheet No. 35*, URL (last accessed on 28 January): <https://www.ohchr.org/Documents/Publications/FactSheet35en.pdf>

156. Complaint No. 27/2004, *European Roma Rights Centre v. Italy*.

157. UN General Assembly, *Need to ensure a healthy environment for the well-being of individuals*. Resolution n. A/RES/45/94, URL (last accessed on 28 January): <https://digitallibrary.un.org/record/105298>

158. UN, 1972, *Declaration of the United Nations Conference on the Human Environment*, URL (last accessed on 28 January): <http://www.un-documents.net/unchedec.htm>

159. UN General Assembly, 1992, *Rio Declaration on Environment and Development*. Resolution n. A/CONF.151/26.

160. UN, 2018, *Report of the Special Rapporteur on the issue of human rights obligations relating to the enjoyment of a safe, clean, healthy and sustainable environment*, URL (last accessed on 28 January): <https://undocs.org/A/HRC/37/59>

161. UN, 2021, *The human right to a clean, healthy and sustainable environment*. Resolution 48/13, URL (last accessed on 28 January): <https://undocs.org/A/HRC/RES/48/13>

162. UN Treaty Body Database, *op. cit.*

- իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների հասանելիության և արդար դատաքննության իրավունք (ԶԲԻՄԴ-ի, համապատասխանաբար, հոդված 2 և 14):
- ազատության և անվտանգության, ներառյալ կամայական ձերբակալությունից, կալանավորումից կամ աքսորից ազատվելու իրավունք (ԶԲԻՄԴ-ի 9-րդ հոդված);
- կարծիքի, տեղեկատվության և արտահայտվելու ազատության իրավունք (ԶԲԻՄԴ-ի 19-րդ հոդված);
- Հավաքների ազատության իրավունք (ԶԲԻՄԴ-ի 21-րդ հոդված):

Քաղաքացիական և քաղաքական իրավունքները լայնորեն ճանաչված են նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով:

### **Խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների հարցերով հատուկ զեկուցողը Հայաստանում, 2019 թվական մայիս**

Հայաստանում բնական ռեսուրսների կառավարման հետ կապված խնդիրները, այդ թվում՝ Ամուլսարի շրջափակումը, բարձրացվել են խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների հարցերով հատուկ զեկուցողի կողմից Հայաստան կատարած այցից հետո: Չեկուցողը ընդգծել է այն մարտահրավերները, որոնց բախվել են տեղի բնակչությունը և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները իրենց իրավունքների իրականացման հարցում, և կոչ արել համապատասխանեցնել Հայաստանի մոտեցումը Ամուլսարի ծրագրի նկատմամբ ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքներին:<sup>163</sup>

#### **Բողոքի ցույցեր բնական ռեսուրսների շահագործման դեմ<sup>64</sup>**

Խաղաղ հավաքների և միություններ կազմելու իրավունքների ակտիվ իրացման հնարավորություն տվող միջավայրն ունի Էական նշանակություն, քանի որ այն կարող է ապահովել բնական ռեսուրսների արդարացի, թափանցիկ եւ հաշվետու շահագործում, որից կշահեն համայնքները:

Բնապահպանական խմբերի հետ իմ հանդիպումների ընթացքում ես տեղեկացա նախորդ տարիներին հավաքների և միություններ կազմելու ազատության սահմանափակումների դեպքերի մասին: Հավատացած եմ, որ այս սահմանափակումները եղել են անարդյունավետ ու պառակտող, նվազեցրել են համայնքների՝ տեղեկություններից օգտվելու, հանրային քննարկումների մասնակցելու եւ կոնցեսիաների տրամադրման ժամանակ ազատորեն, նախապես ու տեղեկացված համաձայնություն տալու ներքին վստահության մակարդակն ու հնարավորությունները:

Տարբեր դերակատարների հետ իմ շփումների ընթացքում ես նաեւ իմացա, որ բնական ռեսուրսների կառավարման շուրջ գոյություն ունի հսկայական դժգոհություն, հատկապես մարզերի այն համայնքներում, որոնք զգում են բնական ռեսուրսների՝ ազգային օրենսդրությանը չհամապատասխանող շահագործման դեպքերի ուղղակի ազդեցությունը:

Մասնավորապես՝ ես այցելեցի Ամուլսարի հանքավայրի շահագործման հետ կապված վայրերից մեկը և լսեցի հանք տանող ճանապարհի փակած ցուցարարների մտահոգությունները: Կարելի է, որ կառավարությունն ապահովի, որ իրականում հաշվի առնվեն համայնքների տեսակետները բնական ռեսուրսների շահագործման սոցիալական

163. Special Rapporteur on the Rights to Freedom of Peaceful Assembly and of Association, 13/05/2019, *Visit to Armenia: Report of the Special Rapporteur on the rights to freedom of peaceful assembly and of association*, A/HRC/41/41/Add.4, p. 10, URU (last accessed on 31 January 2022): <https://www.ohchr.org/en/documents/country-reports/visit-armenia-report-special-rapporteur-rights-freedom-peaceful-assembly>

164. Voule, C. N., 16/11/2018, Statement by the United Nations Special Rapporteur on the rights to freedom of peaceful assembly and of association, Clément Nyaletsossi VOULE, at the conclusion of his visit to the Republic of Armenia, URL (last accessed on 31 January 2022): <https://www.ohchr.org/en/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=23882&LangID=E>

ու բնապահպանական ազդեցությունների, ինչպես նաև համայնքների օգուտների վերաբերյալ:

Կարծում եմ, որ այս իրավիճակը շտկելուն ուղղված առաջին քայլերից մեկը, որը կառավարությունը պետք է ձեռնարկի, իրական խորհրդակցությունների անցկացումն է, որպեսզի այս ձեռնարկները համապատասխանեն բիզնես գործունեության վորաբերյալ ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքներին և հարգեն մարդու իրավունքները:

#### 5.4. Մարդու իրավունքների և շրջակա միջավայրի պաշտպանները

Մարդու իրավունքների պաշտպանների մասին հռչակագիրը կոնսենսուսով ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1998 թվականին՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 50-ամյակին:<sup>165</sup> Հռչակագիրը չի ստեղծում նոր իրավունքներ, այլ ձևակերպում է սկզբունքներ և իրավունքներ, որոնք հիմնված են իրավաբանորեն պարտադիր փաստաթղթերի վրա, ինչպիսին է ԶԲԻՄ-ն, ներառյալ, ի թիվս այլոց, միավորումների ազատությունը, խաղաղ հավաքների ազատությունը, կարծիքի և արտահայտման ազատությունը և տեղեկատվության հասանելիություն և իրավաբանական օգնություն տրամադրելու իրավունքները:

Այն հիշեցնում է, որ պետությունները կրում են մարդու իրավունքների պաշտպանների պաշտպանության առաջնային պատասխանատվությունը: Կարևոր է, որ հռչակագրում ընդգծվում է, որ բոլոր մարդիկ պարտավոր են լինել մարդու իրավունքների պաշտպան: Այն նախանշում է բոլորի, ներառյալ բիզնեսի պարտականությունները՝ խթանելու մարդու իրավունքները և չխախտելու այլոց իրավունքները:

Մարդու իրավունքների պաշտպանների իրավիճակի վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի մեկնաբանությունը,<sup>166</sup> որը կրկնում է քաղաքացիական հասարակության մի շարք զեկույցները,<sup>167</sup> մտահոգություն է առաջացրել մարդու իրավունքների պաշտպանների առջև ծառայած աճող ռիսկերի վերաբերյալ: Այն նշում է, օրինակ, որ պետությունները կանոնավոր կերպով օգտագործում են ներպետական օրենքները՝ լռելիք վնասելու իրավապաշտպանների աշխատանքին՝ հետապնդելով և քրեականացնելով նրանց գործունեությունը, ինչպես նաև խարանդելով և որակելով իրավապաշտպաններին որպես ահաբեկիչներ, «օտարերկրյա գործակալներ» կամ «պետության թշնամիներ»:<sup>168</sup> Շատ երկրներում լայնորեն տարածված են նաև ՉԼՄ-ների կողմից արատավորելու արշավները, որոնք հաճախ խախտում են պաշտպանների գաղտնիության իրավունքը: Կան նաև կին պաշտպանների նկատմամբ սեռական բռնության խախտումների ճնշված վիրավորական խոսքից մինչև ֆիզիկական բռնություն և ոտնձգություն:

Մարդու իրավունքների պաշտպանների հռչակագրի վերաբերյալ Հատուկ զեկուցողի մեկնաբանության մեջ նշվում է, որ բոլոր ոչ պետական դերակատարները, ներառյալ բիզնես ձեռնարկությունները, ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքների համաձայն, պետք է խուսափեն այնպիսի գործողություններից, որոնք կխոչընդոտեն պաշտպանների՝ իրենց իրավունքների իրականացմանը: Այս առումով, մարդու իրավունքների և անդրազգային կորպորացիաների և այլ բիզնես ձեռնարկությունների վերաբերյալ ՄԱԿ-ի աշխատանքային խմբի 2021 թվականի զեկույցը նշում է, որ պաշտպանները հաճախ ենթարկվում են հարձակումների՝ վնասակար բիզնես վարքագիծը բացահայտելու համար:<sup>169</sup> Օրինակ, երբ ձեռնարկությունները, սովորաբար պետության հետ համագործակցելով, զբաղվում են տնտեսական գործունեությամբ, որը բացասաբար է անդրադառնում համայնքների իրավունքների վրա, ներառյալ մաքուր շրջակա միջավայրի իրավունքը և հողի իրավունքները: Չեկույցում խոսվում է աճող մտահոգության մասին «կապված բիզնեսի դերի հետ մարդու իրավունքների պաշտպանների դեմ հարձակումներ խրախուսելու, դրանց նպաստելու կամ դրանց հետ ուղղակիորեն կապված լինելու կամ նման հարձակումների դեմ անգործողության հարցում»:

2016 թվականին իրավապաշտպանների իրավիճակի գծով հատուկ զեկուցողը իր զեկույցում սահմանել է շրջակա միջավայրի պաշտպաններին որպես անհատներ և խմբեր, որոնք «խաղաղ ձևով ձգտում են պաշտպանել և խթանել մարդու իրավունքները շրջակա միջավայրի, ներառյալ ջրի, օդի, հողի,

165. UN General Assembly, 8/03/1999, *Declaration on the Right and Responsibility of Individuals, Groups and Organs of Society to Promote and Protect Universally Recognized Human Rights and Fundamental Freedoms*. A/RES/53/144, URL: <https://undocs.org/A/RES/53/144>

166. UN Special Rapporteur on the situation of human rights defenders, 2011, *Commentary to the Declaration on the Right and Responsibility of Individuals, Groups and Organs of Society to Promote and Protect Universally Recognized Human Rights and Fundamental Freedoms*, URL (last accessed on 28 January 2022): <https://www.ohchr.org/Documents/Issues/Defenders/CommentarytoDeclarationondefendersJuly2011.pdf>

167. Global Witness, 2019, *Enemies of the State? How governments and business silence land and environmental defenders*, URL (last seen on 28 January 2022): <https://www.globalwitness.org/en/campaigns/environmental-activists/enemies-state/>

168. *Ibid.*

169. UN Human Rights Council, 2021, *The Guiding Principles on Business and Human Rights: guidance on ensuring respect for human rights defenders*. Report of the Working Group on the issue of human rights and transnational corporations and other business enterprises, A/HRC/47/39/Add.2, URL (last accessed on 28 January 2022): <https://undocs.org/A/HRC/47/39/Add.2>

բուսական և կենդանական աշխարհի հետ կապված մարդու իրավունքները»:<sup>170</sup> Չեկոյցն ընդգծում է շրջակա միջավայրի պաշտպանների անորոշ վիճակը և ահազանգում նրանց նկատմամբ աճող բռնության մասին: Չեկոյցում առաջարկություններ են արվում այն մասին, թե ինչպես պաշտպանել և հզորացնել շրջակա միջավայրի պաշտպաններին՝ որպես հիմնական շահագրգիռ կողմերի՝ օգնելու պետություններին և ձեռնարկություններին հասնել կայուն զարգացման:

## **Լիդիանի՝ հանրային մասնակցության դեմ ռազմավարական դատավարությունը և մարդու իրավունքների պաշտպանների դեմ զրպարտչական արշավները**

Չափի առնելով մարդու իրավունքների և շրջակա միջավայրի պաշտպանների պաշտպանության վերոնշյալ գործիքները, կարևոր է ներկայացնել Ամուլսարի պաշտպանների փորձը Չայաստանում: Լիդիանը ակտիվորեն փորձել է ճնշել լրագրողների, իրավաբանների, քաղաքացիական հասարակության և տեղական համայնքի պաշտպանների քննադատությունը, ովքեր արտահայտվում են ծրագրի արդյունքում առաջացած հնարավոր ռիսկերի և իրական վնասների առնչությամբ: Այդ նպատակով Լիդիանը ներկայացրել է շուրջ 20 հայց, որոնք կարելի է որակել որպես SLAPP հայցեր այլախոհների հանդեպ:

SLAPP հայցերը վերաբերում են բիզնեսների կողմից մարդկանց դեմ հարուցված հայցերին՝ ի պատասխան իրենց բիզնես գործունեության դեմ հրապարակային քննադատություն կամ հասարակական հակազդեցություն կազմակերպելու համար:<sup>171</sup> SLAPP հայցերը կարող են օգտագործվել ընկերությունների կողմից՝ վախեցնելու և վրեժխնդիր լինելու քննադատներից նրանց իրավապաշտպան գործունեության համար, լռեցնելու նրանց ազատ խոսքի իրավունքը և սպառնելու նրանց առանց այն էլ սահմանափակ ռեսուրսները՝ ներքաշելով ծախսատար իրավական մարտերի մեջ: SLAPP հայցերը հազվադեպ են նախատեսված փոխհատուցելու ծրագրի խթանողներին բիզնեսի հետ կապված վնասները: Մեղադրյալները հիմնականում չունեն ֆինանսական միջոցներ վճարելու ծրագրերի ուշացումների կամ ձախողման համար, ուստի նման դատավարությունների իրավական և կադրային ծախսերը կարող են զգալիորեն գերազանցել այն գումարը, որը ընկերությունը ստանում է դրանց արդյունքում:

Չանրային մասնակցության դեմ ռազմավարական դատավարություններին ձեռնարկությունների ներկայացրած պնդումները տատանվում են իրենց նկատմամբ զրպարտությունից և հեղինակությանը վնաս պատճառելուց մինչև կոռուպցիայի մեղադրանքներ և նյութական վնասներ, որոնք կազմել են հազարավոր կամ միլիոնավոր դոլարներ: Ամուլսարի դեպքում Լիդիանը բազմիցս կիրառել է SLAPP հայցեր՝ օգտագործելով այս բոլոր պնդումները տեղական և քաղաքացիական հասարակության պաշտպանների, լրատվամիջոցների և անգամ Չայաստանի խորհրդարանի պատգամավորի դեմ:

2019 թվականի մայիսին Իրավապաշտպանների պաշտպանության դիտարանը, որը FIDH-ի և Խոշտանգումների դեմ համաշխարհային կազմակերպության (OMCT) գործընկերությունն է, հրատապ բողոք է ներկայացրել պաշտպանների նկատմամբ շարունակվող դատական հետապնդումների և զրպարտության արշավների վերաբերյալ, այդ թվում՝ լրագրող, Թեհմինե Ենոբյանի, այլական բնապահպանական ճակատ քաղաքացիական նախաձեռնության անդամ Անի Խաչատրյանի, իրավաբան և «Չայկական անտառներ» ՉԿ նախագահ Նազելի Վարդանյանի, Չայկական բնապահպանական ճակատի անդամ Լևոն Գալստյանի և Շիրակ Բունիաթյանի և Էդմոն Աղաբեկյանի դեմ:<sup>172</sup> 2019 թվականին ընկերությունը դատական հայց է ներկայացրել նաև հայկական երկու լրատվամիջոցների՝ «Լրագիր»-ի և «Սլիզբ»-ի դեմ՝ զրպարտության համար:<sup>173</sup>

170. UN General Assembly, 3/08/2016, Situation of human rights defenders. A/71/281, URL: <https://undocs.org/A/71/281>

171. OBCT, 13/01/2020, Special dossier: SLAPP, URL (last visited on 28 January 2022): <https://www.balkanicaucaso.org/eng/ECPME/ECPME-news/SLAPPs-Strategic-Lawsuits-Against-Public-Participation-198695>

172. FIDH and OMCT, Armenia: Judicial harassment and defamation campaigns against several environmental defenders, 24/05/2019, URL (last consulted on 23 May 2022): <https://www.fidh.org/en/issues/human-rights-defenders/armenia-judicial-harassment-and-defamation-campaigns-against-several>

173. CEE Bankwatch Network, 22/06/2020, SLAPPd: the Armenian activists fighting a mining multinational's lawsuits, URL (last seen on 28 January 2022): <https://bankwatch.org/blog/slappd-the-armenian-activists-fighting-a-mining-multinational-s-lawsuits>



2018 թվականին Լիդիանը նաև հայցել է դատավարություն սկսել 28 անձանց դեմ, բոլորը<sup>174</sup> Ամուլսարի ակտիվիստներ, և Գնդեվազի և Ջերմուկի բնակիչները՝ ընկերության մոտ 460 միլիոն ԱՄՆ դոլարի փոխհատուցման պահանջով բոլոր վնասների համար, որոնք իբրև պատճառվել են ցուցարարների կողմից ծրագրի տարածք մուտքն արգելափակելու պատճառով: Հայցը դատարանի կողմից չի ընդունվել, քանի որ Լիդիանը չի ներկայացրել առանձին հաշվարկներ յուրաքանչյուր անձի համար:

Պաշտպանների դեմ հետապնդումները, որոնք մանրամասն նկարագրված են Դիտարանի կողմից, կապված են Լիդիանի ծրագրի բնապահպանական և առողջապահական ռիսկերի մասին հանրային իրազեկվածության բարձրացման հետ: Մեղադրանքները ներառում են «զրպարտչական տեղեկություններ» տարածելը՝ Ամուլսարի ծրագրի վերաբերյալ առցանց տեղեկատվություն ակտիվորեն տեղադրելով կամ հանրային հարցազրույցներում, սոցիալական ցանցերում կամ հանրային հանդիպումների ժամանակ Լիդիանի գործունեությունը քննադատելու համար: Լիդիանը պահանջել է պաշտպաններին վճարել 1 միլիոն դրամ (մոտ 2000 ԱՄՆ դոլար) որպես փոխհատուցում իր գործարար համբավը խաթարելու համար:

Բացի այդ, 2018 թվականից ի վեր նույն պաշտպանները նույնպես պարբերաբար հայտնվել են սոցիալական ցանցերում զրպարտչական արշավի թիրախում: Ֆեյսբուքյան կեղծ հաշվեհամարներով հրատարակվել է մոտ 40 վարկաբեկող տեսանյութ ուղղված Լեւոն Գալստյանի դեմ: Անի Խաչատրյանի եւ Թեհմինե Ենոքյանի մասին Ֆեյսբուքում տեղադրվել են սեքսիստական բնույթի նյութեր, որտեղ օգտագործվել են «ազատաբարո կին», «ակտիվիստներից հոլիագած» և այլ տեսակի վիրավորական արտահայտություններ: Որպես կին պաշտպանների նկատմամբ գեղեցիկ հիմքով բռնությունների օրինակներ՝ Լիդիանի աջակիցներն ու աշխատակիցները տարածել են առցանց տեսանյութեր և լուսանկարներ, որոնք պարունակում են վիրավորական մեկնաբանություններ և տեսահսկում խախտելով գաղտնիության իրավունքը: «Green and Clean» ֆեյսբուքյան էջով տեսանյութ է տարածվել Նազելի Վարդանյանի մասնագիտական հմտությունները վարկաբեկելու միտումով: Բազմաթիվ բողոքների արդյունքում Ֆեյսբուքը արգելափակել է այդ էջը վիրավորական եւ զրպարտություն պարունակող լինելու համար:

Վերջապես, 2016 թվականին Լիդիանի գլխավոր տնօրեն Հայկ Ալոյանը ակնարկներ էր անում, որ Ամուլսարի նախագծի քննադատները, հնարավոր է, ծառայում են Ադրբեյջանի և Թուրքիայի շահերին այն բանից հետո, երբ այս հարևան պետությունների ներկայացուցիչները ՎԵԲ-ի տնօրենների խորհրդին հարցեր բարձրացրին ծրագրի բնապահպանական խնդիրների վերաբերյալ: Այնուհետև Ալոյանը նշեց, որ չի կարող «բացառել, որ Ամուլսարի ծրագրի շուրջ անհիմն պնդումները, որոնք շարունակում են տարածվել, ծառայում են այլ նպատակների և օրակարգերի»:<sup>175</sup> Global Witness-ը արձանագրում է, որ շրջակա միջավայրի և մարդու իրավունքների պաշտպանների նման պիտակավորման տարածվածությունը:<sup>176</sup>

## 5.5. Բնապահպանական ընթացակարգային իրավունքները, տեղեկատվության հասանելիությունը, հանրային մասնակցությունը որոշումների կայացմանը և շրջակա միջավայրի հարցերով արդարադատության մատչելիությունը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը<sup>177</sup> նախադեպային իրավունքի միջոցով ճանաչել է առողջ միջավայրում ապրելու մարդու իրավունքը: Ընթացակարգային մակարդակում դատարանը<sup>178</sup> ընդունել է, որ ՄԻԵԿ-ը, մասնավորապես դրա 8-րդ և 10-րդ հոդվածները (արտահայտվելու ազատություն) ներառում են բնակչության իրավունքը՝ ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն մարդու առողջության, անձնական կյանքի և շրջակա միջավայրի վրա ազդող բոլոր ռիսկերի մասին: Նման իրավունքը ենթադրում է պետական մարմինների պարտավորությունը՝ ապահովելու հասանելիություն արդյունաբերական գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքներին, որպեսզի յուրաքանչյուր անհատ կարողանա

174. Datalex.am, 17/08/2018, *Lydian Armenia claim for damages against 28 persons* (in Armenian), URL (last checked 28 January 2022): [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=27303072741018992](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=27303072741018992)

175. Mediamax, 5/08/2022, Interview with Hayk Aloyan: 'Azerbaijan's and Turkey's interest is not surprising to me', URL (last visited on 31 January 2022): <https://mediamax.am/en/news/interviews/19401/>

176. Global Witness, 2019, *op. cit.*

177. ECtHR, 2021, *Guide to the case-law of the European Court of Human Rights. Environment*, Council of Europe, URL (last accessed on 28 January): [https://echr.coe.int/Documents/Guide\\_Environment\\_ENG.pdf](https://echr.coe.int/Documents/Guide_Environment_ENG.pdf)

178. *Ibid.*, and ECtHR, *Guerra v. Italy*, 19 February 1998; *Giacomelli v. Italy*, 26 March 2007; *Fadeyeva v. Russia*, 11 December 1999.

լավագույն որոշումները կայացնել իր և իր ընտանիքի առողջության հարցում:

Ինչպես նշվեց վերևում, ՏՄԿ-ը նաև պարզաբանել է<sup>179</sup>, որ ՏՄԿ-ի 12-րդ հոդվածը պետք է դիտարկել առողջության վրա ազդող գործոնների համատեքստում, և որ նման իրավունքի իրացման որոշիչ գործոն է առողջությանը վերաբերող որոշումներին բնակչության մասնակցությունը:

## Օրհուսի կոնվենցիան

Եվրոպայում բնապահպանական արդարադատության հիմնաքարը տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրային մասնակցության և շրջակա միջավայրի հարցերում արդարադատության մատչելիության մասին կոնվենցիան է, որը նաև հայտնի է որպես Օրհուսի կոնվենցիա: ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) հինգ բազմակողմ բնապահպանական համաձայնագրերի մաս կազմող՝ Օրհուսի կոնվենցիան ընդունվել է 1998 թվականին Դանիայի Օրհուս քաղաքում ՄԱԿ-ի ԵՏՀ Նախարարական համաժողովի կողմից: Այն վավերացվել է Հայաստանի կողմից 2001 թվականին:<sup>180</sup>

Օրհուսի կոնվենցիան կապում է կառավարության հաշվետվողականությունը և շրջակա միջավայրի պաշտպանությունը և ուրվագծում է շրջակա միջավայրի իրավունքների և մարդու իրավունքների հատման շրջանակը: Այն հիմնված է մասնակցային ժողովրդավարության սկզբունքների վրա՝ անհատներին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և հանրությանը ավելի լայն իրավունքներ շնորհելով՝ միաժամանակ կուսակցությունների և պետական մարմինների վրա պարտավորություններ դնելով տեղեկատվության հասանելիության, հանրային մասնակցության և արդարադատության մատչելիության հարցում:

2021 թվականի հոկտեմբերին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդն ընդունեց 48/13 բանաձևը, որը ճանաչում է մաքուր և առողջ շրջակա միջավայրի իրավունքը, մինչդեռ Օրհուսի կոնվենցիայի Կողմերի ժողովը ժնևում կայացած յոթերորդ նստաշրջանին որոշում ընդունեց սահմանել արագ արձագանքման մեխանիզմ շրջակա միջավայրի պաշտպանների պաշտպանության համար:<sup>181</sup>

## **Շրջակա միջավայրի հարցերով որոշումների կայացմանը մասնակցելու և արդարադատության մատչելիության իրավունքի խախտումները Հայաստանում**

Հանքարդյունաբերության ոլորտում Հայաստանի՝ որոշումների կայացման խաթարված գործընթացը և դրան հաջորդած արդարադատության խոչընդոտները հանգեցրին Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մի շարք հաղորդումներ Օրհուսի կոնվենցիային 2004-2011 թվականներին:<sup>182</sup> Սկզբում համապատասխան բողոքներ առաջացան Թեղուտի հանքավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացի ընթացքում (օրինակ՝ խորհրդատվական պրակտիկայի և քաղաքացիական հասարակության իրավական դիրքի վերաբերյալ), որին հետագայում ավելացան քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ Ամուլսարի ծրագրին առնչվող հաղորդումները:

Ինչ վերաբերում է Ամուլսարի ծրագրի ՇՄԱԳ-ի վերաբերյալ որոշումներին հանրության մասնակցությանը, ապա Ջերմուկ առողջարանային քաղաքը ի սկզբանե դուրս էր մնացել ՇՄԱԳ-ի շրջանակից, ինչպես և Սևանա լճի մյուս համայնքները, որոնք դիմել էին խորհրդատվություն: Արդյունքում, Ջերմուկ քաղաքում կամ Սևանա լճի շրջակայքում պաշտոնական խորհրդակցություններ չեն անցկացվել մինչև ՇՄԱԳ հաստատումը (2012, 2014 և 2016 թվականներին) և հանքի թույլտվությունների տրամադրումը:

179. UN ESCR Committee, General Comment n. 14, *op. cit.*

180. UN Treaty Collection, *Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice on Environmental Matters.*

181. UN, 2021, Resolution 48/13, *op. cit.*

182. Armenia ACCC/C/2004/8; Armenia ACCC/C/2009/43; Armenia ACCC/C/2011/62.

Թեև 2016 թվականին Ջերմուկն ընդգրկված էր Ամուլսարի ծրագրի ՇՄԱԳ-ի շրջանակում, հանքավայրի թույլտվությունն արդեն տրված էր Հայաստանի իշխանությունների կողմից, ուստի ջերմուկցիների կարծիքները չէին կարող արդյունավետ ազդել նախագծի վերաբերյալ որոշման գործընթացի վրա: Սևանա լիճը հարակից համայնքները չեն ընդգրկվել ծրագրի շրջանակում իր վերջնական նախագծում, քանի որ ծրագիրը ճշգրտվել է 2015 թվականին՝ ընտրելով Սևանա լճի արգելված գոտուց դուրս գտնվող այլընտրանքային տեղամաս ցիանիդով տարրավազման օբյեկտների համար: Սակայն բաց հանքերը և այլ օբյեկտները դեռևս մնացել են Սևանա լճի անսխիզական ազդեցության գոտու հարավային սահմանին, Կեչուտի և Սպանդարյանի ջրամբարների մոտ:

Ինչ վերաբերում է խորհրդակցությունների շրջանակին, դեռ 2012 թվականին Ջերմուկի և Սևանի բնակիչները՝ Վիկտորյա Գրիգորյանը, Մակեդոն Ալեքսանյանը և Աննա Շահնազարյանը, դիմել էին վարչապետ Տիգրան Սարգսյանին Ջերմուկը, Մարտունին և Սևանը որպես ծրագրի ազդեցության ենթակա համայնքներ ճանաչելու խնդրանքով: Հարցումը վերահղվել էր Բնապահպանության նախարարություն և մերժվել բնապահպանական պետական փորձաքննության մարմնի տնօրեն Անդրանիկ Գևորգյանի կողմից:<sup>183</sup>

Այնուհետև Վիկտորյա Գրիգորյանը 2012 թվականի դեկտեմբերին նույն պահանջով հայցադիմում էր ներկայացրել ընդդեմ վարչապետի և բնապահպանության նախարարության: Վայոց ձորի մարզի վարչական դատարանը վճռել էր, որ Գրիգորյանը իրավասություն չունի այդ հարցով դատարանում ներկայանալու, քանի որ հանքավայրի շահագործումը ուղղակիորեն չի միջամտել նրա իրավունքներին և ազատություններին: Ինչպես Վերաքննիչ, այդպես էլ Վճռաբեկ դատարանները մերժել են Վարչական դատարանի վճռի դեմ բողոքները, և գործը կարճվել է 2013 թվականի հուլիսին:<sup>184</sup>

Բացի այդ, Էկոլոգիական իրավունք հասարակական կազմակերպությունը վիճարկել էր Բնապահպանության նախարարության 2014 թվականին Ամուլսարի ծրագրի ՇՄԱԳ-ի դրական փորձագիտական եզրակացությունը:<sup>185</sup> Հայաստանի վարչական դատարանը վճռել էր, որ ՇՄԱԳ-ի վերաբերյալ նախարարության կողմից տրված դրական փորձաքննության եզրակացությունը «վերջնական վարչական ակտ» չէ: Այնուամենայնիվ, Հայաստանի օրենսդրությունը չի նախատեսում որևէ այլ պետական մարմին, որը պատասխանատու է բնապահպանական քաղաքականության և որոշումների կայացման համար, ներառյալ ՇՄԱԳ գործընթացին հանրության մասնակցության ապահովումը: Այսինքն, ըստ դատարանի վճռի, Բնապահպանության նախարարությունը պետական պատասխանատվություն կրող պետական մարմին չի եղել, և նրա դրական փորձաքննական եզրակացությունը ոչ թե իրավաբանորեն պարտադիր ակտ է, այլ մասնագետների կարծիք:

2016 թվականի փետրվարին Էկոլոգիական իրավունքը հաղորդում է ներկայացրել Օրիուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեին՝ դատապարտելով Հայաստանի վարչապետի Ամուլսարի հանքավայրում: Հանձնաժողովը ընդունել է հաղորդումը և քննման առարկաներից է վերանայման 2016 թվականի հունիսին:<sup>186</sup>

Կոնվենցիայի և Հայաստանի միջև հինգ տարվա նամակագրությունից հետո 2021 թվականին Օրիուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի՝ Կողմերի հանդիպմանը ներկայացված զեկույցը փաստում է Ամուլսարի գործով Հայաստանի առաջընթացի բացակայության արդի պատկերը:<sup>187</sup> Իր եզրակացություններում Համապատասխանության կոմիտեն Հայաստանից պահանջում է.

*հրատապ կարգով ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական, կարգավորող և վարչական միջոցներ, որպեսզի.*

*ա) ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացակարգին*

183. Ecolur.org, 12.06.2013, Armenian PM and Nature Protection Ministry Sued for Amulsar Mine, URL (last checked on 29 January 2022): <https://www.ecolur.org/en/news/mining/armenian-pm-and-nature-protection-ministry-sued-for-amulsar-mine/4959/>

184. Datalex.am, 13.05.2013, Demand to recognize Jermuk as a project affected community by Amulsar mine project (in Armenian), URL (last checked on 29 January 2022): [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809711850](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809711850)

185. Grigoryan, A., 2017, *op. cit.*

186. Grigoryan, A., 2017, *The Amulsar Goldmine: Legal Issues and Biodiversity Offsets, Ecological Rights* (URL no longer working)

187. UNECE, 09/08/2021, Report of the Compliance Committee on compliance by Armenia to the Meeting of the Parties to the Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters Seventh session, ECE/MP.PP/2021/46, URL (last accessed on 28 January): <https://unece.org/sites/default/files/2021-08/ECE.MP.PP.2021.46.ac.0.pdf>

ենթակա գործողությունների, ներառյալ՝ հանրային մասնակցության հստակ սահմանումներ.

(բ) տրամադրել հանրության համար ծրագրին առնչվող փաստաթղթերի վերաբերյալ խորհրդակցելու և մեկնաբանելու խելամիտ ժամկետներ, որոնք զգալիորեն ավելի երկար կլինեն, քան ներկայումս նախատեսվածները.

(գ) ապահովել օրենսդրության, ներառյալ հասարակական կազմակերպությունների մասին օրենքի և վարչական ընթացակարգերի համապատասխանությունը Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետին.

(դ) շարունակել ջանքերը՝ բարձրացնելու դատական համակարգի իրազեկությունը՝ նպաստելու Կոնվենցիայի համաձայն ներպետական օրենսդրության իրականացմանը: Կոմիտեն առաջարկում է Կողմերի հանդիպմանը դիմելու շահագրգիռ Կողմի բոլոր համապատասխան նախարարություններին, ներառյալ Արդարադատության նախարարությանը, միասին աշխատել՝ ապահովելու վերոնշյալ առաջարկությունների հաջող կատարումը.<sup>188</sup>

Այս առնչությամբ Կոմիտեն պահանջում է, որ Հայաստանը նախ Կոմիտեին ներկայացնի գործողությունների ծրագիր մինչև 2022 թվականի հուլիսը, որը կներառի այդ առաջարկությունների կատարման ժամանակացույցը: Երկրորդ, Հայաստանը պետք է մանրամասն հաշվետվություններ ներկայացնի ձեռնարկված միջոցառումների և ձեռք բերված արդյունքների վերաբերյալ մինչև 2024 թվականը: Կողմերի հանդիպումը նախագուշացումը Հայաստանին ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

## Նախագուշակության սկզբունքը

Միջազգային բնապահպանական իրավունքի կենտրոնական տարրը նախագուշակության սկզբունքն է, որը սահմանում է, որ «երբ առկա են լուրջ կամ անդառնալի վնասների սպառնալիքներ, գիտական լիարժեք որոշակիության բացակայությունը չպետք է օգտագործվի որպես շրջակա միջավայրի դեգրադացիան կանխելու ծախսարդյունավետ միջոցները հետաձգելու պատճառ»:<sup>189</sup> Այս սկզբունքը հիշատակվում է բազմաթիվ միջազգային փաստաթղթերում և այժմ համարվում է միջազգային սովորույթային իրավունքի մաս:

Նախագուշակության սկզբունքն այնուհետև սահմանում է պետությունների վրա դրված ինամքի և իրավական պարտավորությունների բովանդակությունը և նրանցից պահանջում է ընդունել կարգավորող, վարչական և քաղաքական գործիքներ, որոնք երաշխավորում են ռիսկերի պատշաճ կառավարումը այն իրավիճակներում, երբ անգամ վերջնական ապացույցի բացակայության դեպքում, դրանք վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրի համար:

## 5.6. Հայաստանում հանքարդյունաբերության գործունեության ազգային օրենսդրությունը և կարգավորումը

Հայաստանի լեռնահանքային արդյունաբերությունը կարգավորվում է Հայաստանի հանքարդյունաբերության օրենսգրքով (Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրք), որը սահմանում է ընդերքօգտագործման իրավունքները, այն ձեռք բերելու եղանակները և ներգրավված կողմերի և պետական մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենսգրքի տարբեր ասպեկտներ փոփոխվել են 2020 թվականին. օրենսգրքում ավելացվել են երկրաբանական փորձաքննությունը կարգավորող նոր պահանջներ, փոփոխություններ են կատարվել ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման համար անհրաժեշտ ժամկետներում, և հանքավայրերի փակումը և հարակից ռեկուլտիվացիոն աշխատանքները կարգավորող դրույթները դարձել են ավելի ընդգրկուն:

Հանքարդյունաբերությունը Հայաստանում կարգավորվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Շրջակա միջավայրի նախարարության, Պետական

188. *Ibid.*

189. UN General Assembly, 1992, *Rio Declaration*, *op. cit.* Principle 15.

եկամուտների կոմիտեի, Արդարադատության նախարարության և Շրջակա միջավայրի պահպանության և հանքարդյունաբերության տեսչական մարմնի կողմից:

Երկրում հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական կարգավորումը բաղկացած է մի շարք օրենքներից, այդ թվում՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին, Թափոնների մասին, Բնապահպանական վերահսկողության մասին և Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին օրենքները: Բացի այդ մի շարք հարակից օրենքներ նույնպես վերաբերում են ոլորտին, ինչպես օրինակ՝ Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենքը, Անտառային օրենսգիրքը, Ջրային օրենսգիրքը, Հողային օրենսգիրքը, Կենդանական աշխարհի մասին և Բուսական աշխարհի մասին օրենքները: Որոշ օրենքներ, օրինակ՝ Սևանա լճի մասին օրենքը, կիրառելի են ծրագրերից որոշների համար միայն՝ կախված դրանց գտնվելու վայրից:<sup>190</sup>

Չնայած առաջին հայացքից բազբաբաղադրիչ իրավական դաշտին, Հայաստանում օրենքների կիրարկմանը ծառայող երկրորդական օրենսդրությունը և ուղեցույցները բացակայում են:<sup>191</sup> Ինստիտուցիոնալ կարողությունների բացակայությունը և, ավելին, որոշում կայացնողների՝ ծախս-օգուտ գնահատումներ, ՇՄԱԳ ստուգումներ և կուտակային ազդեցության գնահատումներ իրականացնելու մեթոդիկաների բացակայությունը մշտապես քննադատության են ենթարկվել Հայաստանում<sup>192</sup> քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ակադեմիական հաստատությունների և այլ շահագրգիռ կողմերի կողմից, քանի որ այս բացերը հսկայական հայեցողություն են թողնում պատասխանատու մարմինների համար հանքարդյունաբերության թույլտվություններ տրամադրելիս:

Նմանապես, Հայաստանում բացակայում են մանրամասն կարգավորումները և ինստիտուցիոնալ կարողությունները հանքարդյունաբերության սոցիալական և առողջապահական ազդեցությունները ճիշտ գնահատելու համար: 2017 թվականի հետազոտությունները ցույց են տալիս, որ ՇՄԱԳ գործընթացի ընթացքում որպես գործող օրենսդրության պահանջների մաս պետք է իրականացվեն առողջության վրա ազդեցության գնահատումներ (ԱԱԳ):<sup>193</sup>

Այդուհանդերձ, ԱԱԳ-ները հիմնականում չեն իրականացվում, քանի որ չկան դրանց իրականացման ուղեցույցներ: Համաձայն ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի 2018 թվականի զեկույցի<sup>194</sup>՝ Բնապահպանական փորձագիտական կենտրոնը և Առողջապահության նախարարությունը չունեն տեսական և գիտական գիտելիքներ, գործիքներ կամ գործնական փորձ, որոնք անհրաժեշտ են ԱԱԳ-ներ անցկացնելու համար:

Ի վերջո, չկան կարգավորող մեխանիզմներ՝ ապահովելու ազդակիր համայնքների և շահագրգիռ կողմերի բովանդակային մասնակցությունը որոշումների կայացման և ազդեցության գնահատումներին, ինչպես նախատեսված է ՇՄԱԳ կարգավորմամբ:<sup>195</sup> Հողերի օտարման և վերաբնակեցման սխեմաները նույնպես մշակվում են առանց հանրային նշանակալից մասնակցության և հաճախ բխում են հողատերերի հարկադրանքից, կամավոր օտարումից՝ առանց հստակ հանրային շահի և կոռուպցիայի: Մինևնույն ժամանակ, Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին օրենքով գործող բնապահպանական վճարների համակարգը ի վիճակի չէ փոխհատուցել հանքարդյունաբերական աշխատանքների հետևանքով պատճառված վնասները:<sup>196</sup>

Հաշվի առնելով վերը նշված հանքարդյունաբերության ոլորտի կառավարման համակարգում առկա բացերը՝ զարմանալի չէ, որ արդյունահանման ոլորտը Հայաստանում բացասական իմիջ ունի: Չնայած հանքարդյունաբերությունը առանցքային է Հայաստանի արտահանման և առևտրային հաշվեկշռի համար, սակայն քիչ ապացույցներ կան, որ այն օգուտներ է բերում համայնքներին և երկրի կայուն տնտեսական զարգացմանը: Չունենալով զգալի ներդրում երկրում զբաղվածության մեջ, ոլորտը սպառնում է հանրային առողջությանը, բնական ռեսուրսներին (օրինակ՝ ջուր, անտառներ և արոտավայրեր) և զբաղվածությանն ու ՀՆԱ-ին նպաստող այլ առանցքային ոլորտներին, ինչպիսիք են գյուղատնտեսությունը և զբոսաշրջությունը:

Նախնական վերլուծությունից երևում է, որ համապատասխան ներքին իրավական դաշտը մինչ այժմ չի համապատասխանում մարդու իրավունքների միջազգային իրավունքի չափանիշներին: Վերջին զարգացումները ավելի մեծ մտահոգություն են առաջացնում, քանի որ փետրվարին Հայաստանի

190. Grigoryan, A., 2018, *The Amulsar Gold Mine: Legal Issues and Biodiversity Offsets*, Ecological Right NGO.

191. *Ibid.*

192. Damianova, A. J. et al., 2014, *op. cit.*, p. 9.

193. Vivoda, V., Fulcher, J., 2017, *Environmental and Social Impact Assessment*, Series on International Best Practice, Working Paper No. 4, Mining Legislation Reform Initiative, AUA Center for Responsible Mining, American University of Armenia, URL (last accessed on 31 January 2022): <https://espace.library.uq.edu.au/view/UQ:730293>

194. Puras, D., 2018, *Report of the Special Rapporteur on the Right of Everyone to the Enjoyment of the Highest Attainable Standard of Physical and Mental Health on his visit to Armenia*, UN Human Rights Council Secretariat, URL (last visited on 31 January 2022): <https://digitallibrary.un.org/record/1627460>

195. World Bank, 2016, *op. cit.*

196. Damianova, A. J. et al., 2014, *op. cit.*, p. 20.

խորհրդարանը փոփոխություններ է առաջարկել ընդերքի մասին օրենսգրքում, որը կարծես թե մշակվել է հատուկ Ամուլսարի համար:<sup>197</sup> Փոփոխությունների նախագծով նախատեսվում է երկարաձգել հանքարդյունաբերության թույլտվությունը չորս տարով, այդ թվում՝ հետադարձ ուժով, ֆորսմաժորային, այդ թվում՝ «քաղաքացիական անհնազանդությունների», բնական աղետների, պատերազմի և ահաբեկչությունների դեպքերում: Նախագիծը հակասում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի օրենքին, որը 20.7-րդ հոդվածում ամրագրում է, որ թույլտվությունը կորցնում է իր վավերականությունը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չսկսվի փորձագիտական եզրակացությունը տրվելուց հետո մեկ տարվա ընթացքում:

## **Օրենքի գերակայությունը, կոռուպցիան և հանքարդյունաբերության ոլորտը Հայաստանում**

Հայաստանում օրենքի գերակայության հետ կապված բազմաթիվ խնդիրներ կան, և անհրաժեշտ է լուրջ ուղղտային և ավելի լայն դատաիրավական բարեփոխումների՝ պաշտպանելու մարդկանց տեղեկատվության, արդար դատաքննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները: Կոռուպցիայի հարցը գնալով ավելի է քննարկվում ՄԱԿ-ի մարդու իրավունքների պայմանագրային մարմինների կողմից, քանի որ լայնորեն ճանաչված է, որ կոռուպցիան խաթարում է մարդու իրավունքների իրացումը և խաթարում հանրային ինստիտուտների և գործընթացների օրինականությունը:<sup>198</sup>

Հետևաբար, զարմանալի չէ, որ Հայաստանում բնական ռեսուրսների կառավարման հետ կապված խնդիրները 2020 թվականին արժանացել են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի զեկույցի ուշադրությանը:<sup>199</sup> Չեկույցում Կոմիտեն Հայաստանին առաջարկություններ է ներկայացնում ԶԶԻՄ-ին և հակակոռուպցիոն միջոցառումներին համապատասխանելու վերաբերյալ, մասնավորապես՝ կոչ անելով, որ պետությունը «հավելյալ տեղեկատվություն տրամադրի կոռուպցիայի կանխարգելման և արդյունավետ պայքարի համար ձեռնարկված միջոցների ազդեցության մասին»՝ ի պատասխան հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկության բացակայության մասին զեկույցների: Չեկույցում մասնավորապես պահանջվում է, որ Հայաստանը «մանրամասն տեղեկատվություն տրամադրի Ամուլսարի ոսկու հանքի հետ կապված կոռուպցիայի մեղադրանքների վերաբերյալ»:

Միևնույն ժամանակ, Գնդեվազում Ամուլսարի հողերի ձեռքբերման վերաբերյալ կոռուպցիոն գործը դեռ ընթացքի մեջ է, քանի որ դատարանը դեռ պետք է սահմանի համայնքի հողի և ապրուստի միջոցների կորստի համար փոխհատուցման համապատասխան ձևն ու չափը:

## **5.7. ՄՖԿ-ի և ՎՉԵԲ-ի բնապահպանական և սոցիալական երաշխիքները**

2019 թվականին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը իր զեկույցի նախագծում գնահատել է զարգացման ֆինանսական հաստատությունների երաշխիքները և պատշաճ ջանասիրության շրջանակները: Գրասենյակը կոչ է արել այս հաստատություններին համապատասխանեցնել իրենց քաղաքականությունն ու գործելակերպը մարդու իրավունքների և պատասխանատու բիզնես վարքագծի գլոբալ նորմատիվ չափանիշների հետ, մասնավորապես, ՄԱԿ-ի և տնտեսական համագործակցության զարգացման ծրագրին և բազմազգ ձեռնարկությունների վերաբերյալ ուղեցույցներին:<sup>200</sup>

197. Ecolur, 02/04/2022, NGOs Demanding to Withdraw Draft Bill Amending and Supplementing RA Mining Code and Organize Public Discussions, URL (last visited 15 April 2022): <https://www.ecolur.org/en/news/amulsar/13877/>

198. Eeckeloo, L., 2019, *Corruption and human rights. The approach of the United Nations Treaty Bodies*, CCPR Centre, URL (last accessed 31 January 2022): [https://ccprcentre.org/files/media/Corruption\\_et\\_droits\\_lhomme\\_ENG.pdf](https://ccprcentre.org/files/media/Corruption_et_droits_lhomme_ENG.pdf)

199. UN Human Rights Committee, 26 August 2020, *International Covenant on Civil and Political Rights, List of issues in relation to the third periodic report of Armenia*, CCPR/C/ARM/Q/3, URL (last seen on 28 January): [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CCPR%2fC%2fARM%2fQ%2f3&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CCPR%2fC%2fARM%2fQ%2f3&Lang=en)

200. OHCHR, 2019, *Draft Benchmarking Study of Development Finance Institutions' Safeguards and Due Diligence Frameworks against the UN Guiding Principles on Business and Human Rights* (working document to be finalised in 2022), URL (last accessed on 31 January 2022): [https://www.ohchr.org/Documents/Issues/Development/DFI/OHCHR\\_Benchmarking%20Study\\_HRDD.pdf](https://www.ohchr.org/Documents/Issues/Development/DFI/OHCHR_Benchmarking%20Study_HRDD.pdf)

ՄՖԿ-ի և ՎՉԵԲ-ի մոտեցումը շրջակա միջավայրի և մարդու իրավունքների ոլորտում ներդրումների ռիսկերն ու ազդեցությունները գնահատելու և կառավարելու հարցում մշտապես զարգանում է, թեև ամբողջությամբ համաձայնեցված չէ ՄՖԿ-ի առաջնորդող սկզբունքներին և նրանց շեշտադրմանը մարդու իրավունքների պատշաճ ջանասիրության վրա: Չարգացման ֆինանսական որոշ հաստատություններ, ինչպիսին է ՎՉԵԲ-ը, ճանաչում են իրենց պարտականությունները մարդու իրավունքների և իրենց առանձին հաճախորդների պարտականությունների նկատմամբ:

Իր Բնապահպանական և սոցիալական քաղաքականության մեջ ՎՉԵԲ-ը պարտավորվում է ապահովել մարդու իրավունքների հարգանքն իր կողմից ֆինանսավորվող ծրագրերով: Զաղաքականությունում ասվում է.

ՎՉԵԲ-ը հաճախորդներից պահանջելու է հաճախորդներից իրենց բիզնես գործունեության ընթացքում հարգել մարդու իրավունքները, խուսափել այլոց մարդու իրավունքների ոտնահարումից և անդրադառնալ հաճախորդների բիզնես գործունեության հետևանքով առաջացած մարդու իրավունքների բացասական ռիսկերին և ազդեցություններին: ՎՉԵԲ-ը շարունակաբար բարելավելու է իր կողմից ֆինանսավորվող ծրագրերը՝ միջազգային լավ փորձին համապատասխան և ձգտելու է աստիճանաբար ամրապնդել նախագծերի գնահատման և մշտադիտարկման ընթացքում մարդու իրավունքների հետ կապված ռիսկերը բացահայտելու և լուծելու գործընթացները:<sup>201</sup>

Ի հակադրություն, ՄՖԿ-ն պաշտպանում է մարդու իրավունքները միայն իր հաճախորդների համար: Համաձայն ՄՖԿ-ի 2012 թվականի Կայունության քաղաքականության՝ կառույցը «ճանաչում է բիզնեսի պատասխանատվությունը՝ հարգելու մարդու իրավունքները՝ անկախ մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու պետական պարտականություններից»:<sup>202</sup>

Համաձայն իրենց կառավարման քաղաքականության՝ ՎՉԵԲ-ը և ՄՖԿ-ն պետք է ապահովեն, որ իրենց բոլոր ներդրումներն իրականացվեն երկրի իրավական պահանջներին և մարդու իրավունքների միջազգային իրավունքին համապատասխան: Օրինակ՝ 2019 թվականի Բնապահպանական և սոցիալական քաղաքականության մեջ ՎՉԵԲ-ը պարտավորվում է, որ բանկը «գիտակցաբար չի ֆինանսավորելու ծրագրեր, որոնք հակասում են ազգային օրենսդրությանը կամ միջազգային պայմանագրերով, կոնվենցիաներով և համաձայնագրերով երկրի պարտավորություններին, որոնք դուրս են բերվում ծրագրի գնահատման ընթացքում»:<sup>203</sup>

Բացի այդ, երկու բանկերի կայունության քաղաքականությունները ներառում են կատարողականի չափանիշներ կամ պահանջներ հաճախորդների համար (չափանիշներ ՄՖԿ-ի դեպքում և պահանջներ ՎՉԵԲ-ի դեպքում): Դրանք ներառում են ընթացակարգային և բովանդակային պահանջներ՝ ծրագրերի՝ շրջակա միջավայրի և մարդու իրավունքների ռիսկերը բացահայտելու և կառավարելու համար: Այս ստանդարտները կազմակերպված են հետևյալ թեմաների շուրջ.

- Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների և խնդիրների գնահատում և կառավարում
- Աշխատանքային պայմաններ
- Ռեսուրսների արդյունավետ օգտագործում և աղտոտման կանխարգելում և վերահսկում
- Առողջություն և անվտանգություն
- Հողերի օտարում, հարկադիր վերաբնակեցում և տնտեսական տեղաշարժ
- Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում
- Բնիկ ժողովուրդներ
- Մշակութային ժառանգություն
- Տեղեկատվության բացահայտում և շահագրգիռ կողմերի ներգրավում

201. EBRD, 2019, *Environmental and Social Policy*, para. 2.4.

202. IFC, 2012 *Sustainability Policy*, para 12.

203. EBRD, 2019, *Environmental and Social Policy*, para. 2.3.

ՎՉԵԲ-ը պարտավորվել է կիրառել ԵՄ բնապահպանական չափանիշներն իր բոլոր գործողություններում, ինչպես ԵՄ, այնպես էլ ԵՄ անդամ չհանդիսացող երկրներում:<sup>204</sup> Բանկն ունի նաև կայունության եզակի մանդատ՝ «նպաստելու իր գործունեության ողջ շրջանակում Էկոլոգիապես մաքուր և կայուն զարգացմանը»:<sup>205</sup>

## ՄՖԿ-ի և ՎՉԵԲ-ի երաշխիքների քաղաքականության և անհամապատասխանությունը

2014 թվականից ի վեր տեղի բնակչության և քաղաքացիական հասարակության խմբերի կողմից մի շարք բողոքներ են բարձրացվել ՄՖԿ-ի և ՎՉԵԲ-ի հաշվետվողականության մեխանիզմներով: Բողոքներում թվարկված են մարդու իրավունքների և շրջակա միջավայրի չափանիշների մի շարք խախտումներ, որոնք ոտնահարում են հայաստանյան և միջազգային իրավունքը և չեն համապատասխանում երկու բանկերի երաշխիքների քաղաքականությանը: Ենթադրյալ խախտումների երկար ցանկը ներառում է.

- Ծրագրի մասին անբավարար տեղեկատվությունը, օրինակ՝ հողերի օտարման և տարաբնակեցման ընթացակարգերի վերաբերյալ.
- Թերագնահատված ռիսկերը ջրային ռեսուրսների համար, այդ թվում՝ Սևանա լճի և Ջերմուկի հանքային ջրերի, և ծրագրի ցիանիդային տարրալվացման համակարգից շրջակա միջավայրի հնարավոր աղտոտվածության համարժեք գնահատման բացակայությունը.
- Փոշու աղտոտվածության մասին անբավարար տեղեկատվությունը, ներառյալ պոտենցիալ ռադիոակտիվ փոշու մասին տեղեկությունը, որը վերաբերում է Ամուլսարի ուրանի հանքավայրերի ուսումնասիրություններին.
- Պտղատու այգիների, արոտավայրերի և զբոսաշրջության զարգացման վրա ունեցած ազդեցություններից ապրուստի միջոցների կորուստը.
- Համայնքի առողջության և անվտանգության անբավարար պաշտպանությունը.
- Շահագրգիռ կողմերի հետ պաշտոնական խորհրդակցությունների բացակայությունը, հատկապես Ջերմուկում ծրագրի մշակման վաղ փուլերում և ՇՄԱԳ գործընթացում.
- Արդարադատության մատչելիության բացակայությունը:

2014-ին ՎՉԵԲ-ի հաշվետվողականության մեխանիզմը մերժեց բողոքները՝ նշելով, որ մեղադրանքները վերաբերում են հանքավայրի շահագործման հնարավոր ազդեցություններին, մինչդեռ այն ժամանակ բանկի ներդրումներն ուղղված են եղել հանքավայրի հետախուզմանը: ՎՉԵԲ-ի համար սա բաց թողնված հնարավորություն էր՝ հավելյալ տեղեկատվություն ստանալու 2016 թվականին իր երկրորդ ներդրման համար: 2020 թվականին ներկայացված նոր բողոքը հանգեցրեց համապատասխանության հետաքննության, որը դեռ ընթացքի փուլում է, թեև դրա ազդեցությունը ծրագրի վրա աննշան կլինի, քանի որ 2020 թվականին ՎՉԵԲ-ը դուրս է եկել Ամուլսարի ծրագրից:

Այս գործով համանման ներգրավվածություն և ցուցաբերել նաև ՄՖԿ-ի Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդակց: Պաշտպանը դուրս է բերել մի շարք ոլորտներ, որտեղ Ամուլսարի ծրագիրը չի համապատասխանել ՄՖԿ-ի քաղաքականությանը, սակայն ՄՖԿ-ն չի կարողացել իրականացնել Պաշտպանի առաջարկությունները, քանի որ դուրս է եկել Ամուլսարի ծրագրից 2017 թվականին: Լիդիանը և ՎՉԵԲ-ը, այնուամենայնիվ, հաշվի են առել Պաշտպանի բացահայտումները 2015 և 2016 թվականների ՇՄԱԳ-ները եզրափակելու, շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման պլանների հարմարեցման և շահագրգիռ կողմերի ներգրավվածության ժամանակ, մինչև ծրագրի շրջափակումը 2018 թվականին:

Ի վերջո, ծրագրի ճակատագիրը ցույց տվեց, որ ՄՖԿ-ի և ՎՉԵԲ-ի գոհունակությունն Ամուլսարի՝ այսպես կոչված «համայնքի լայն աջակցությամբ» սխալական էր, ինչը երևաց Հայաստանում կոռուպացված և ռեպրեսիվ քաղաքական ռեժիմի տապալումից հետո: Պատասխանատու հանքարդյունաբերության մոդելի ստեղծումը չէր կարող իրականացվել

204. EBRD, 2019, *Environmental and Social Policy*, para. 7.

205. EBRD, 1991, *Basic Documents of the EBRD. Agreement Establishing the EBRD*, URL (last accessed on 31 January 2021): <https://www.ebrd.com/news/publications/institutional-documents/basic-documents-of-the-ebrd.html>



միայն Լիդիանի կողմից ազդեցության մակերեսային գնահատումների և առատաձեռն «կորպորատիվ սոցիալական պատասխանատվության» հիման վրա. այն նաև պահանջում էր հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկ կառավարում և ապահով միջավայր համայնքների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից որոշումների կայացմանը մասնակցելու համար: Ամուլսարի ծրագրի ձախողումը ցույց տվեց նաև բանկերի անբավարար հետևողականությունը մարդու իրավունքների պաշտպանության ու իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների հարցում, որոնք են երկրի մակարդակով ռիսկերի գնահատումը և երրորդ կողմերի՝ այդ թվում կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ղեկավարների, ինչպես նաև թույլ դատական համակարգերի ազդեցություններին հաշվի առնումը և համապատասխան արձագանքումը:



Ամուլսարին մոտ լեռների մարգագետինները © Andrey Ralev, CEE Bankwatch Network

## ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում Ամուլսարի ծրագիրը ոսկու նոր հանքավայրի շահագործման բարդ և վիճահարույց գործընթացի դասագրքային օրինակ է: Ամուլսարը ներկայացվել է որպես դասական հակասություն բնապահպանների և հանքագործների միջև, թեև այն վերածվել է շատ ավելի մեծ և ավելի քաղաքականացված հակամարտության, բացելով հարցեր Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի կառավարման և կայուն զարգացման վերաբերյալ: 2018 թվականի թավշյա հեղափոխությունից հետո Ամուլսարը փորձություն դարձավ Հայաստանի նոր կառավարության հանձնառության համար՝ առաջ մղելու որոշումների կայացման ժողովրդավարական արժեքները և մարդու իրավունքները պաշտպանելու պետության պարտավորությունները: Ինչ վերաբերում է ներդրողներին, Ամուլսարը բացահայտել է այն մարտահրավերները, որոնց նրանք բախվում են՝ փորձելով համատեղել շահույթն ու տնտեսական օգուտները մարդու իրավունքները և շրջակա միջավայրի պաշտպանության առաջնահերթությունները հարգելու պարտավորության հետ:

Չեկույցը հիմնավոր ապացույցներ է ներկայացնում, առ այն, որ Հայաստանը բազմիցս խախտել է միջազգային իրավունքով ստանձնած իր պարտավորությունները՝ պաշտպանելու առողջության և առողջ շրջակա միջավայրի, խաղաղ հավաքների, խոսքի ազատության, տեղեկատվության, որոշումների կայացմանը մասնակցության և արդարադատության մատչելիության մարդու իրավունքները: Թեև մարդու իրավունքների այս խախտումների մեծ մասը կատարվել է մինչև 2018 թվականը, սակայն, ցավոք, վարչապետ Նիկոլ Փաշինյանի նոր կառավարությունը վճռական քայլեր չի ձեռնարկել շրջակա միջավայրի և մարդու իրավունքների պաշտպանների և տեղական համայնքների իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Այս կապակցությամբ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով հատուկ զեկուցողների և Օրիուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի զեկույցները կոչ են արել հայկական պետությանը ապահովել Ամուլսարի ծրագրի վերաբերյալ բովանդակալից խորհրդակցություններ: Բացի այդ, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 2020 թվականի Հայաստանի վերաբերյալ զեկույցում առաջարկություններ են արվել Հայաստանին քաղաքացիական և քաղաքական իրավունքների և հակակոռուպցիոն միջոցառումների վերաբերյալ՝ պահանջելով, որ պետությունը «մանրամասն տեղեկատվություն տրամադրի Ամուլսարի ոսկու հանքի հետ կապված կոռուպցիոն մեղադրանքների վերաբերյալ»:

Կան նաև ցուցումներ, որ Լիդիանը և Ամուլսարի ծրագրի ներդրողները, ինչպիսին է ՎՉԵԲ-ը, խախտել են մարդու իրավունքները հարգելու իրենց պարտավորությունները՝ համաձայն ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքների և ՎՉԵԲ-ի կառավարման քաղաքականության: Թեև ընկերությունը և ՎՉԵԲ-ը զգալի ջանքեր են գործադրել ավելի քան 10 տարի տևող բնապահպանական և սոցիալական գնահատումների համար, տեղական համայնքների հետ խորհրդակցությունների թերի մոտեցումը և բնապահպանների դեմ բազմաթիվ ՀՄԴՌԴ հայցերը վկայում են որոշումների կայացմանը մասնակցելու, ազատորեն խոսելու և Ամուլսարի ծրագրի դեմ խաղաղ բողոքի ցույցեր կազմակերպելու հայաստանցիների իրավունքների ակտիվ խոչընդոտման մասին Լիդիանի կողմից:

Ամուլսարի հանքավայրի շահագործման մեջ ՎՉԵԲ-ի ներդրումը նախատեսված էր բնապահպանական և սոցիալական միջոցառումների համար: 2020 թվականին բանկը կորցրեց իր բաժնետոմսերը ծրագրում և խուսափեց որևէ պատասխանատվություն վերցնելուց, որը ոչ մի պարագայում չի կարող դիտվել որպես «պատասխանատու ելք»: Հաշվի առնելով ծրագրի ճախողումը և բանկի ելքը՝ ՎՉԵԲ-ը պետք է դասեր քաղի այն մասին, թե ինչ սխալներ են գործվել, և ինչու ճախողվեցին բնապահպանական և սոցիալական պատշաճ ուսումնասիրության ջանքերը: Հուսով ենք, որ ՎՉԵԲ հաշվետվողականության մեխանիզմի համապատասխանության հետաքննությունը (որը սկսվել է 2020 թվականին և դեռ ընթացքի փուլում է) լույս կսփռի այն բանի վրա, թե ինչպես պետք է բանկը մոտենա նման վիճահարույց ծրագրերին ապագայում՝ համահունչ լինելով ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքներին և սեփական քաղաքականությանը:

Հայաստանի իշխանությունները, Լիդիանը և Ամուլսարի ծրագրում միջազգային ներդրողները պետք է ընդունեն նաև վերականգնման պատշաճ ծրագրեր և միջոցներ, տրամադրեն չկրկնելու երաշխիքներ վերջին տարիներին հանքից տուժածներին, ինչպես նաև իրենց իրավունքները իրացնելու և Ամուլսարի ծրագրի դեմ հանդես գալու համարվրեժնադրության ենթարկված անձանց:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չեկույցը առաջարկություններ է հղում Հայաստանի կառավարությանը, ՎՉԵԲ-ին, ՄՖԿ-ին և Լիդիան Արմենիային, մասնավորապես.

1. Հայաստանը պետք է պաշտպանի տեղական համայնքների, շրջակա միջավայրի և մարդու իրավունքների պաշտպանների իրավունքները՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքով ստանձնած պարտավորություններին համապատասխան:

## Այսպիսով, Հայաստանին՝

- չեղյալ համարել Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի բոլոր առկա թույլտվությունները.
- անհապաղ քայլեր ձեռնարկել ՄԱԿ-ի մարդու իրավունքների մարմինների և հատուկ ընթացակարգերի, ՄԱԿ-ի ԵՏՀ Օրիուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի և Կենսաբազմազանության պաշտպանության Բեռնի կոնվենցիայի բյուրոյի կողմից հրապարակված առաջարկություններին անդրադառնալու համար.
- նախաձեռնել Ամուլսարի ոսկու հանքի ծախսերի և օգուտների անկախ փորձագիտական գնահատում՝ մանրակրկիտ ուսումնասիրելով տնտեսական, սոցիալական, առողջապահական և բնապահպանական գործոնները, այնուհետև հաշվի առնել այս գնահատումը՝ ապահովելու համար, որ բացասական ազդեցությունները պատշաճ կերպով բացահայտվեն և կանխվեն, և որ տեղական բնակչությունը և համայնքները կարողանան ուղղակիորեն օգուտ քաղել ծրագրից, եթե այն ի վերջո իրականացվի.
- վերանայել բնապահպանական և հանքարդյունաբերության օրենսդրությունը՝ ապահովելու հանքարդյունաբերության ոլորտի ժողովրդավարական և խելամիտ կառավարում, ընդունել կանոնակարգեր և բարձրացնել ինստիտուցիոնալ կարողությունները՝ պատշաճ գնահատելու հանքարդյունաբերության սոցիալական և առողջապահական ազդեցությունները.
- ամրապնդել ինստիտուցիոնալ կարողությունները՝ կիրառելու և վերահսկելու օրենսդրության նկատմամբ հարգանքը, բարելավել տեղեկատվության և մասնակցության հասանելիությունը, հստակեցնել ծախսերի և օգուտների գնահատումներ իրականացնելու մեթոդաբանությունը, պարզեցնել ազդեցությունների կուտակային գնահատումների անցկացման ընթացակարգը և իրականացնել հանքարդյունաբերությանը առնչվող հակակոռուպցիոն կայուն քաղաքականություն և գործընթացներ.
- պաշտպանել շրջակա միջավայրի և մարդու իրավունքների պաշտպաններին, մասնավորապես, Հանրային մասնակցության դեմ ռազմավարական դատավարության հայցերից (SLAPP) և Լիդիանի կամ այլ դերակատարների պատասխան գործողություններից: SLAPP հայցերի դեմ գործող օրենսդրությունը պետք է պարունակի երեք հիմնական տարր՝ (1) SLAPP հայցերի դեմ ընթացակարգային երաշխիքներ, (2) SLAPP հայցերի կանխարգելման և դրանց դեմ իրազեկվածության բարձրացման միջոցառումներ և (3) SLAPP հայցերի թիրախներին պաշտպանակող և աջակցող միջոցառումներ: Ամենակարևոր դատավարական երաշխիքը, որը պետք է ներդրվի, դատավորների համար SLAPP հայցերը կարճելու հնարավորությունն է վարույթի վաղ փուլերում այն գործերի համար, որոնք ակնհայտորեն անհիմն են և ուղղված են ամբաստանյալի կողմից հանրային մասնակցության իրենց իրավունքի կանխարգելմանը՝ կիրառելով լայն սահմանում այն մասին, թե ինչ է իրենից ներկայացնում հանրային մասնակցությունը: SLAPP հայցերի թիրախներին պաշտպանող և աջակցող միջոցառումները պետք է ներառեն ֆինանսական աջակցություն իրավական ծախսերը ծածկելու համար, ինչպես նաև հուզական և հոգեբանական ռիսկերի դեմ աջակցության ծառայությունների հասանելիություն և հետագա ահաբեկումներից և վրեժխնդրությունից պաշտպանություն:
- բարելավել Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) ազդեցությունը համայնքային մակարդակում՝ խթանելով տեղական համայնքների մասնակցությունը բնական ռեսուրսների կառավարմանը.
- ապահովել ծրագրի նախորդ փուլերում տեղական համայնքների, մարդու իրավունքների և շրջակա միջավայրի պաշտպանների վրա հանքի առաջացրած բացասական ազդեցությունների պատշաճ փոխհատուցում.
- իրականացնել անկախ և թափանցիկ հետաքննություն Գնդեվազում հողերի օտարման հետ կապված կոռուպցիայի վերաբերյալ:

## 2. ՎՉԵԲ-ին և ՄՖԿ-ին՝

- աջակցել Հայաստանի կառավարությանը վերը նշված քայլերի իրականացման գործում և
- թարմացնել շրջակա միջավայրի և մարդու իրավունքների պատշաճ ուսումնասիրության իրենց մոտեցումը՝ հաշվի առնելով բանկերի հաշվետվողականության մեխանիզմների ակնկալվող բացահայտումները և առաջարկությունները.
- մշակել մարդու իրավունքների և շրջակա միջավայրի պատշաճ ուսումնասիրության քաղաքականություն ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքներին համապատասխանելու համար.
- ընդունել և լուծել ծրագրի ազդակիր անձանց և իրավապաշտպանների մասնակցության և արդյունավետ փոխհատուցման համար առկա բացերն ու խոչընդոտները, և ներգրավել համայնքներին և շահագրգիռ կողմերին տեղեկացված և բովանդակալից խորհրդակցությունների.
- մշակել հստակ քաղաքականություններ և ուղեցույցներ մարդու իրավունքների պատշաճ ուսումնասիրության վերաբերյալ՝ ապահովելով բանկի կողմից կամ բանկի հանձնարարությամբ մարդու իրավունքների ռիսկերի մանրակրկիտ վերլուծություն նախքան ծրագրի ռիսկերի դասակարգումը. հանրությանը հասանելի դարձնել մեթոդաբանություններն ու եզրակացությունները յուրաքանչյուր ծրագրի համար. ապահովել ազդեցությունների պատշաճ գնահատում մարդու իրավունքների ազդեցության գնահատման (ՄԻԱԳ) կամ այլ համա-տեքստային վերլուծությունների միջոցով, եթե հայտնաբերվում են ռիսկեր. իրապարակայնացնել այս լրացուցիչ գնահատումները.
- ապահովել հանրային բովանդակալից մասնակցություն, որը կլինի ժամանակին իրականացվող, երկկողմանի գործընթաց՝ թափանցիկ, մատչելի և անվտանգ բոլոր իրավատերերի համար. ապահովել պատշաճ ընթացակարգերի առկայություն և իրականացնել կանոնավոր կարողությունների զարգացում և ընթացակարգերի գնահատումներ՝ երաշխավորելով, որ դրանք թույլ են տալիս հանրության անվտանգ և բովանդակալից մասնակցությունը: Բանկերը պետք է նաև մշակեն ավելի հստակ ուղեցույցներ, որոնք կարտացոլեն հաշվեհարդարների նկատմամբ գրոյական հանդուրժողականության քաղաքականությունը:
- Լիդիանի հետ միասին տրամադրել փոխհատուցում Ամուլսարի ծրագրի՝ տեղական համայնքների, իրավապաշտպանների և շրջակա միջավայրի վրա նախորդ փուլերում բացասական ազդեցությունների համար

## 3. Լիդիան Արմենիային՝

- հետ կանգնել շրջակա միջավայրի և մարդու իրավունքների պաշտպանների դեմ ուղղված բոլոր իրավական գործողություններից և խուսափել իրավապաշտպանների խարանուկից անտագոնիստական հռետորաբանության կամ պաշտպանների գործունեությունը վարկաբեկելու նպատակով ապատեղեկատվության տարածման միջոցով.
  - անհապաղ քայլեր ձեռնարկել մարդու բոլոր իրավունքների և շրջակա միջավայրի հանդեպ հարգանքը երաշխավորելու համար և պահպանել Մարդու իրավունքների վրա բիզնեսի ազդեցության մասին ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքները.
  - անհապաղ փոխհատուցել տեղական համայնքների, իրավապաշտպանների և շրջակա միջավայրի վրա ծրագրի նախորդ փուլերում հասցրած բացասական ազդեցության վնասը: առաջընթացի բացակայության արդի պատկերը: 206 Իր եզրակացություններում Համապատասխանության կոմիտեն Հայաստանից պահանջում է.և հարակից ռեկուլտիվացիոն աշխատանքները կարգավորող դրույթները դարձել են ավելի ընդգրկուն:
- Հանքարդյունաբերությունը Հայաստանում կարգավորվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Շրջակա միջավայրի նախարարության, Պետական եկամուտների կոմիտեի, Արդարադատության նախարարության և Շրջակա միջավայրի պահպանության և հանքարդյունաբերության տեսչական մարմնի կողմից:



## Յեղիսակներ

Ֆիդանկա Բաչևա-Մաք-Գրաթ  
Մայա Բարխուդարյան  
Սոֆիա Մանուկյան  
Մադդալենա Նեգլիա

## Համակարգողներ

Ֆիդանկա Բաչևա-Մաք-Գրաթ  
Սաշա Ֆայարաբենդ

## Խմբագիրներ

Նիկ Ջոնս-Վիկբերգ  
Էմիլի Գրեյ  
Իյա Նուզով  
Գայել Դուսետպուկրե

## Երախտագիտություն

Նինի Լեսիխինա  
Ինգա Չաֆարյան

## Ձևավորում

FIDH

## Էջադրում

Ստեֆանի Գիլ

## Թարգմանություն

Արամ Կիրակոսյան

## Շապիկի նկարը

Ամուլսարի նկարը դրոնից  
© CEE Bankwatch Network



Sweden  
Sverige

**Brot**  
für die Welt

Հրատարակությունը ֆինանսավորվել է Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության (Sida), Չարգացման ֆրանսիական գործակալություն (AFD) և «Հաց աշխարհի համար» կազմակերպության (BFTW) կողմից: Բովանդակության համար ամբողջ պատասխանատվությունն ստեղծողներինն է: Sida-ն, AFD-ն և BFTW-ն պարտադիր չէ, որ կիսեն արտահայտված տեսակետներն ու մեկնաբանությունները:



## **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ (ԶՀԻ)**

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ (ԶՀԻ) հիմնադրվել է 1998 թվականին Երևանում, Հայաստան: ԶՀԻ-ն աշխատել է քաղաքացիական հասարակության զարգացման, քրեակատարողական համակարգի բարեփոխման, մարդու իրավունքների պաշտպանության և իրազեկման, խաղաղության և հակամարտությունների կարգավորման, տեղեկատվության ազատության, հակակոռուպցիոն, երիտասարդության հզորացման, կրթության բարեփոխման և կարողությունների զարգացման ծրագրերի վրա:

Civil Society Institute NGO  
2 Mesrop Mashtots Ave, suite 40  
Yerevan 0015,  
Republic of Armenia  
E-mail: [csi@csi.am](mailto:csi@csi.am)  
Web site: [www.csi.am](http://www.csi.am)



## **CEE BANKWATCH NETWORK (CEE BN)**

CEE Bankwatch Network-ը կենտրոնական և արևելյան Եվրոպայում հանրային, բնապահպանական և մարդու իրավունքների խմբերի ամենամեծ ցանցն է: Այն վերահսկում է պետական ֆինանսական հաստատությունները, որոնք պատասխանատու են հարյուր միլիարդավոր ներդրումների համար ամբողջ աշխարհում: Տեղական համայնքների և այլ ՀԿ-ների հետ միասին Bankwatch-ը աշխատում է՝ բացահայտելու նրանց ազդեցությունը և հակակշիռ ապահովելու նրանց չվերահսկվող ուժին:

CEE Bankwatch Network  
Heřmanova 1088/8  
Prague 7, 170 00  
Czech Republic  
Tel: +42 (0) 777 995 515  
E-mail: [main@bankwatch.org](mailto:main@bankwatch.org)  
Web site: [www.bankwatch.org](http://www.bankwatch.org)  
[twitter.com/ceebankwatch](https://twitter.com/ceebankwatch)  
[facebook.com/ceebankwatch](https://facebook.com/ceebankwatch)



# Keep your eyes open

Հրապարակման  
տնօրեն՝  
Ալիս Մոգվե

Գլխավոր  
խմբագիր՝  
Էլենորե Մորել

Դիզայն՝ FIDH/  
Ստեֆանի Գիլ

**ՓԱՍՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ.** Ինտաքսնտոլ և դատավարական դիտորդական առաքելություններ

**ԱԶԱԿՏՈՒԹՅՈՒՆ ԶԱՂԱԶԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ.** դասընթացներ և փոխանակումներ

**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲԼԻԶԱՑՈՒՄ.** շահերի պաշտպանություն միջկառավարական մարմինների առջև

**ՏԵՂԵԿԱՑՈՒՄ ԵՒ ՁԵԿՈՒՑՈՒՄ.** Հասարակական կարծիքի մոբիլիզացում

**FIDH-ի համար փոխակերպվող հասարակությունները հիմնված են տեղական դերակատարների աշխատանքի վրա:**

Մարդու իրավունքների համաշխարհային շարժումը գործում է ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում՝ աջակցելով իր անդամ և գործընկեր կազմակերպություններին՝ արձագանքելու մարդու իրավունքների խախտումներին և համախմբելու ժողովրդավարական գործընթացները: Կազմակերպության աշխատանքն ուղղված է պետություններին և իշխանություն ունեցողներին, ինչպիսիք են զինված ընդդիմադիր խմբերը և բազմազգ կորպորացիաները: Դրա հիմնական շահառուները Շարժման անդամ ազգային իրավապաշտպան կազմակերպություններն են և նրանց միջոցով՝ մարդու իրավունքների ոտնահարման զոհերը: FIDH-ը նաև համագործակցում է տեղական այլ գործընկեր կազմակերպությունների և փոփոխությունների դերակատարների հետ:

**fidh**

միջոցներ է ձեռնարկում մարդու իրավունքների խախտման զոհերի պաշտպանության, խախտումները կանխելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար:

## ԼԱՅՆ ՄԱՆԴԱՏ

FIDH-ն աշխատում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված բոլոր իրավունքների՝ քաղաքացիական և քաղաքական, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարգման ուղղությամբ:

## ՀԱՍՏԱՏՎԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄ

FIDH-ը հիմնադրվել է 1922 թվականին և այսօր միավորում է 192 անդամ կազմակերպություններ աշխարհի 117 երկրներում: FIDH-ը համակարգում և աջակցում է նրանց գործունեությունը և նրանց ձայն է տալիս միջազգային մակարդակով:

## ԱՆԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ինչպես իր անդամ կազմակերպությունները, FIDH-ը կապված չէ որևէ կուսակցության կամ կրոնի հետ և անկախ է բոլոր կառավարություններից:

**fidh**

## CONTACT

FIDH

17, passage de la Main d'Or

75011 Paris

Tél. : (33-1) 43 55 25 18

[www.fidh.org](http://www.fidh.org)

Twitter : @fidh\_en / fidh\_fr / fidh\_es

Facebook : [www.facebook.com/FIDH](http://www.facebook.com/FIDH).

[HumanRights/](https://www.facebook.com/FIDH.HumanRights/)

